Ի՞ՆՉՆ Է ԵՏ ՊԱՀՈՒՄ ՁԵԶ

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԳՈՐԾՈՆԸ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

Ձեր դրական
*ՍՊԱՍՈՒՄԸ*
Հոգևոր ուժ,
Որն անկարելի է
կանգնեցնել:



ՌԱՍԵԼ ՊԼԻԼԱՐ

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԳՈՐԾՈՆԸ

## ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԳՈՐԾՈՆԸ
## ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

ՌԱՍԵԼ ՊԼԻԼԱՐ

insight
PUBLISHING GROUP
ք. Տալսա, Օկլահոմա նահանգ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԳՈՐԾՈՆԸ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

*«Սահմանափակող գործոնը ձեր կյանքում»*, հեղինակ՝ Ռասել Պլիլար
Հրատարակված է «Ինսայթ» հրատարակչական ընկերության կողմից
8801 Ս. Յել, 410
ք. Տալսա, Օկլահոմա նահանգ
(918) 493-1718

Այս գիրքը չի կարող վերարտադրվել ամբողջությամբ կամ մասամբ՝ որևէ ձևով, պահպանվել որևէ որոնման համակարգում կամ փոխանցվել ցանկացած ձևով և ցանկացած միջոցով՝ էլեկտրոնային, մեխանիկական, ֆոտոպատճենման, ձայնագրման և այլն՝ առանց հրատարակչի նախապես տրված գրավոր թույլտվության, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են Ամերիկայի Միացյալ Նահանգների հեղինակային իրավունքների մասին օրենքով:

Եթե չկան այլ նշումներ, բոլոր աստվածաշնչյան մեջբերումները Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են (1869թ.):

Աստվածաշնչյան մեջբերումները, որոնք նշված են *«KJV»* հապավումով, «Քինգ Ջեյմս» թարգմանությունից են: Աստվածաշնչյան մեջբերումները, որոնք նշված են *«AMP»* հապավումով, «Էմփլիֆայդ» թարգմանությունից են: Աստվածաշնչյան մեջբերումները, որոնք նշված են *«NIV»* հապավումով, «Նյու Ինտերնեյշնլ» թարգմանությունից են: Աստվածաշնչյան մեջբերումները, որոնք նշված են *«NKJV»* հապավումով, «Նյու Քինգ Ջեյմս» թարգմանությունից են: Աստվածաշնչյան մեջբերումները, որոնց հետևում է *«Moffatt»* նշումը, «Հին և Նոր կտակարանները պարունակող Աստվածաշնչի նոր թարգմանություն»-ից են, հեղինակ՝ Ջեյմս Է. Ռ. Մոֆաթ:

Հեղինակային իրավունքները՝ © 2004, Ռասել Պլիլար
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Թարգմանված է անգլերենից, 2017

Կազմի ձևավորումը՝ Շոն Սթարմ, էլ. հասցե. info@sturmediadesign. com
Կազմի պատկերը՝ «Corbis Stock Market», բոլոր իրավունքները պաշտպանված են

ISBN 1-932503-00-5

Կոնգրեսի գրադարանի գրացուցակի համարը. 2003106440

Բնօրինակը տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

# Հավանություններ, հանձնարարականներ և կարծիքներ

Հովիվ Ռաս Պլիլարը հավատք և տեսիլք ունեցող մարդ է, ով ևս մեկ անգամ ներկայացրեց հավատքի և հույսի ուղերձը Աստծո խոստումների մասին՝ դարձնելով այն հասանելի յուրաքանչյուրին:

Ռասը, ով ճշմարիտ հովիվ և տեղական եկեղեցու ուժեղ անդամ է, հասկանում է, թե ինչ է անհրաժեշտ՝ Աստծո ծրագրերը մարդու կյանքում իրագործելու համար: Նա բերկրանք է ապրում, երբ մարդիկ բարգավաճում են և մուտք են գործում Աստծո ծրագրի և կամքի մեջ:

Այս գիրքը շատ ազդեցիկ ուղերձ է պարունակում, բայց այն պարզ և հեշտորեն ընթերցվում է՝ Ռասի հումորի և պատմությունների շնորհիվ: Կիրառելով այն, ինչ գրված է այս գրքում՝ մարդիկ կարող են մուտք գործել իրենց կոչման մեջ: Նրանց երազանքները, հույսերը և ձգտումները կբացահայտվեն, երբ նրանք առօրյայում կիրառեն այն, ինչ այս գիրքը սովորեցնում է:

Կեցցե՛ս, Ռա՛ս. ևս մեկ «հանրաճանաչ գիրք»:

**Դոկտոր Պիտեր Մորտլոք,**
*Ավագ հովիվ*
*«City Impact Church» եկեղեցի*
*ք. Օքլենդ, Նոր Զելանդիա*

Այս գրքում, որը կոչվում է «Սահմանափակող գործոնը ձեր կյանքում», Ռաս Պլիլարն անդրադարձել է մի հույժ կարևոր ճշմարտության: Չափազանց հաճախ մենք թույլ չենք տալիս Աստծուն անել մեր կյանքում այն, ինչ ցանկանում է: Ռասը հովիվ է, և նա տեսել է, թե ինչպես է այս խնդիրը կրկնվում մարդկանց մոտ: Նա գտել է լուծումներ, որոնց օգնությամբ դուք կապրեք այնպես, ինչ-

պես Աստված է ցանկանում: Կարդացե՛ք և կրկի՛ն կարդացեք «Սահմանափակող գործոնը ձեր կյանքում» գիրքը: Դուք չե՛ք զղջա:

Չարլզ Նիմեն
*Ավագ հովիվ*
*«Abundant Living Faith Center» եկեղեցի*
*ք. Էլ Պասո, Տեխաս նահանգ*

Այս հրաշալի գրքում, որը կոչվում է «Սահմանափակող գործոնը ձեր կյանքում», Ռաս Պիլլարը խոսում է այնպիսի բաների մասին, որոնք ես դեռ փորձում եմ կիրառել իմ կյանքում:

Աստված կարող է գործել անսահմանափակ ձևով, եթե մենք հավատանք այն ամենին, ինչ Նա ասում է Իր Խոսքում: Բոլոր սահմանափակումները սատանայից են:

*«Սպասում»* բառը, որը Ռասելը հաճախ է օգտագործում, խիստ անհրաժեշտ է, եթե մենք որևէ կարիք ունենք, քանի որ եթե մենք չենք *«սպասում»,* որ պատասխանը (*մեր հրաշքը*) գա, այն կանցնի մեր կողքով:

Թող այս գիրքը մեծ օրհնություն դառնա ձեզ համար. կարդացե՛ք և յուրացրե՛ք դրանում եղող ուսմունքները:

Դոկտոր Օրալ Ռոբերտս
*Նախագահ և հիմնադիր*
*«Օրալ Ռոբերտսի համալսարան»*
*ք. Տալսա, Օկլահոմա նահանգ*

Հովիվ Ռասել Պիլլարն Աստծո հոտի հրաշալի հովիվ է: Նա սրտացավություն ունի Աստծո ժողովրդի հանդեպ և ցանկանում է, որ Աստծո մարդիկ կատարեն մեծագույն նպատակն ու ծրագիրը, որն Աստված որոշել է իրենց համար:

Քանի որ մենք ծառայում ենք այնպիսի Աստծո, Ում սերն Իր ժողովրդի հանդեպ, Ում զորությունը և օրհնությունները նրանց համար անսահման են, Նա ցանկանում է, որ մենք վեր լինենք բոլոր սահմանափակումներից, որոնք կառուցել ենք մեր կյանքում:

Խորասուզվե՛ք հովիվ Պլիլարի գրքի մեջ՝ ձգտելով այն ամենին, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար, և ապրե՛ք ամեն օրը ձեր ներսի առատությամբ:

**Դոկտոր Էդ Դաֆրենս**
*«Էդ Դաֆրենսի ծառայություն»*
*ք. Մյուրիետա, Կալիֆոռնիա նահանգ*

Ռասել և Բարբարա Պլիլարները սահմանափակ մտածելակերպի գերության մեջ գտնվող բազմաթիվ մարդկանցից առանձնանում են իրենց դրական և կառուցողական մտածելակերպով:

Ռասելի գիրքը, որը կոչվում է «Սահմանափակող գործոնը ձեր կյանքում», ցույց է տալիս աստվածաշնչյան ճանապարհը դեպի ազատությունը: Այն լի է թարմ օրինակներով և պատմություններով, որոնց նպատակն է՝ օգնել ընթերցողին օգտագործել իր աստվածատուր ներուժը:

Ռասելը և Բարբարան կենդանի ապացույց են, որ իրենց ուսմունքները գործում են: Նրանք կիսվում են գործնական և իրատեսական սկզբունքներով, որոնք կարող է կիրառել յուրաքանչյուրը: Ես ի սրտե խորհուրդ եմ տալիս կարդալ այս գիրքը:

**Դոկտոր Պիտեր Յանգրեն**
*Ավագ հովիվ*
*«Niagara Falls Celebration Church» եկեղեցի*
*ք. Նիագարա, Օնտարիո նահանգ, Կանադա*

# Ընծայական ուղերձ

*Իմ կնոջը՝ Բարբարային, ով կողքիս է արդեն երեսուներկու տարի. շնորհակալ եմ քո սիրո, հավատարմության և աջակցության համար: Մենք միասին աներևակայելի թիմ ենք:*

*Մեր երեք դուստրերին՝ Շերիլին, Միշելին և Քրիսթիին, նաև մեր հինգ թոռներին՝ Ջոնին, Մայքլին, Ռոբերտին, Օսթինին և Տորիին. այն անսահմանափակ ներուժը, որն Աստված դրել է ամեն մեկիդ ներսում, դեռ պետք է օգտագործվի:*

*Դոկտոր Սանդրա Բիբբին. քո հավատարմությունը և նվիրվածությունը այս ծառայությանը ավելին է, քան բառերը կարող են արտահայտել:*

# Բովանդակություն

Ընծայական ուղերձ

Նախաբան

Երախտագիտության խոսք

Ներածություն

Գլուխ 1 Ի՞նչ եք սպասում Աստծուց .................................... 19

Գլուխ 2 Որոշե՛ք ձեր սահմանափակող գործոնը................. 29

Գլուխ 3 Նրանից առանձի՞ն, թե՞ Նրանում .......................... 51

Գլուխ 4 Աստծո անսահման էությունը.................................. 59

Գլուխ 5 Զարգացրե՛ք ձեր անսահման ներուժը................... 75

Գլուխ 6 Աշխատասիրություն................................................ 81

Գլուխ 7 Գերազանց առաքինություն .................................... 97

Գլուխ 8 Գիտելիք, ժուժկալություն և համբերատար աստվածապաշտություն ..................................... 107

Գլուխ 9 Եղբայրասիրություն և սեր......................................115

Գլուխ 10 Սպասում կամ Տ-Ե-Ս-Ի-Լ-Ք....................................119

Գլուխ 11 Թույլ մի՛ տվեք, որ ձեր կյանքը շշնջոց դառնա .... 133

Գլուխ 12 Պարտության մատնեք նեղության սահմանափակումները ......................................... 147

Գլուխ 13 Դե՛ն գցեք բոլոր սահմանափակումները............. 169

# Նախաբան

Ռասել Պլիլարն իմ ընկերն է և Ավետարանի հարգարժան ծառայող է: Նա և կինը՝ Բարբարան, տարիներ շարունակ հովվական ծառայության մեջ են եղել Սան Դիեգո քաղաքի շրջակայքում:

Աստված հայտնել է Ռասելին բանալի սկզբունքներ, որոնք կարող են փոխել մարդկանց կյանքերը: Դրանք իրական հեղաշրջում կբերեն նրանց կյանքում, ովքեր ունեն բաց սիրտ և քաղց՝ ճշմարտության հանդեպ:

Համարձակվե՛ք դառնալ այն սակավաթիվ մարդկանցից մեկը, ով կապրի համաձայն այս խորաթափանց գրքի ճշմարտությունների: Հեռացրե՛ք այն ամենը, ինչը սահմանափակում է Աստծուն ձեր կյանքում, և ունեցե՛ք կատարյալ հաղթանակ, որը Նա խոստացել է Իր Խոսքում: Հովիվ Ռասելի գիրքը կդրդի ձեզ քննել ձեր կյանքի այն բնագավառները, որոնցում դուք սահմանափակել եք ձեր աստվածային սպասումը և թույլ չեք տվել, որ ձեր երազանքներն իրականանան:

Խորհուրդ եմ տալիս կարդալ *«Սահմանափակող գործոնը ձեր կյանքում»* գիրքը յուրաքանչյուրին, ով կհամարձակվի նորոգել իր մտածելակերպը, տեսիլքը, հնազանդությունը, ջանասիրությունը և Աստծուց ունեցած սպասումը: Անելով այս քայլերը՝ դուք կառաջնորդվեք Հոգով, և ձեր կյանքը հավիտյան կփոխվի:




**Դոկտոր Մորիս Սերուլո**
*Նախագահ և հիմնադիր*
*«Մորիս Սերուլոյի համաշխարհային ավետարանչական ծառայություն»*
*Փ/Ա 85277*
*ք. Սան Դիեգո, Կալիֆոռնիա նահանգ 92186-5277*
*(858) 277-2200*
*www.mcwe.com*

# **Նախաբան** *(շարունակություն)*

*«Սահմանափակող գործոնը ձեր կյանքում»* գիրքն ընթերցելուց հետո ես ապշեցի՝ գիտակցելով, թե որքա՜ն հաճախ ենք սահմանափակում մեզ ստեղծող Աստծուն: Մենք թույլ չենք տալիս Նրան գործել մեր կյանքում, նույնիսկ՝ առանց գիտակցելու: Ռասել Պլիլարն իր զարմանալի գրքում բացահայտել է մի ճշմարտություն, որը կարող է բառացիորեն փոխել ձեր կյանքը և «անսահմանափակ» դարձնել այն:

Ռասելը նկարագրում է տարբեր սահմանափակող գործոններ՝ օգնելով մեզ ավելի պարզ հասկանալ ինքներս մեզ: Ապա նա բացատրում է, թե ինչպես քայլ առ քայլ հեռացնել այդ սահմանափակումները և մուտք գործել այն լիության մեջ, որի համար իրականում ստեղծված ենք: Այս գիրքը սովորեցնում է մեզ դուրս գալ այն սահմանափակումներից, որոնք ինքներս ենք կառուցել, և ավելացնել մեր սպասումը, քանի որ այդ դեպքում Աստծո զորությունը է՛լ ավելի կլցնի մեր կյանքը:

Երբ սահմանափակումները հեռանան, մեր հոգևոր տեսողությունն ազատորեն կսավառնի. մենք կկարողանանք հաղթահարել ամեն մի խոչընդոտ և հակառակություն և է՛լ ավելի վեր կբարձրանանք:

Եթե «գիտելիքը՝ ուժ է» ասացվածքը ճիշտ է, ուրեմն *«Սահմանափակող գործոնը ձեր կյանքում»* գիրքն ուժ կհաղորդի ձեզ, որ դառնաք այնպիսին, ինչպիսին Աստված ստեղծել է ձեզ: Այն կսովորեցնի նոր քայլեր անել և նորովի գործածել ձեր ներուժը: Այս գիրքն օգտակար կլինի յուրաքանչյուրին:



**Հովիվ Էդ Քինգ, Գիտ. Թեկն.**
*«Redemption Church International» եկեղեցի*
*3350 Փլեզնթ Ռիջ Ռոուդ*
*ք. Նոքսվիլ, Տենեսի նահանգ, 37921*
*(865) 521-6602*
*www.redemptionchurch.com*

# Երախտագիտության խոսք

Ես ցանկանում եմ հայտնել իմ երախտագիտությունը նրանց, ովքեր օգնեցին, որ այս հրատարակչական նախագիծը հաջողությամբ պսակվի:

Առաջինը՝ ես երախտապարտ եմ իմ գեղեցիկ կնոջը՝ Բարբարային, ով շարունակաբար և սիրով «ստիպել» է ինձ լիովին համապատասխանել այն ամենին, ինչի համար Աստված կանչել է ինձ, և հատկապես այն բանի համար, որ նա մանրակրկիտ ձևով ստուգել է այս գիրքը՝ մինչև տպագրության հանձնելը՝ համոզվելու համար, որ սա լինելու է այն գլուխգործոցը, որը մենք նախատեսել էինք: Իմ լավ ընկեր պրն. Ջոն Մեյսոնին՝ «Ինսայթ» հրատարակչական ընկերությունից, ով տարիներ առաջ խրախուսեց ինձ «բացահայտել» իմ ստեղծարար ձիրքը և գրել այն գրքերը, որոնք, որպես ներուժ, իմ ներսում էին: Պարոն Շոն Սթարմին՝ իր ստեղծարար մոտեցման համար, ով օգնեց մեր գրքերի ձևավորման, գունավորման և դիզայներական գաղափարների հարցում, որոնց շնորհիվ մեր գրքերի տեսքն ասես արտահայտում է դրանց բովանդակությունը: Իմ հրաշալի և գեղեցիկ դուստր Քրիստթի Չավեսին, ով մեր ծառայության աշխատակազմի անդամն է, նա օգնեց ինձ վերջնականորեն որոշել դատարկ էջերի տեղն այս գրքում: Մեր հրաշալի, պտղաբեր և ստեղծագործող քարտուղար Սինդի Լոպեսին, ով հետևել է այս գրքի պատրաստման և համակարգչային ձևավորման աշխատանքներին, մի խոսքով՝ օգնել է ինձ, որ այն հաջողություն ունենա, ինչպես որ լինելու է: «Ինսայթ» հրատարակչական ընկերության աշխատակիցներին՝ լիարժեք աշխատանքի համար՝ խմբագրման, տեխնիկական խմբագրման և գրքին վերջնական տեսք հաղորդելու համար: Տիկին Թամարա Սոյերին, ով աշխատեց գրքի պատրաստման վերջնական փուլերում՝ օգնելով իր խորաթափանցությամբ, ստեղծարարությամբ, նաև՝ խմբագրական հմտություններով:

# Ներածություն

2001 թվականի սեպտեմբերի 11-ի առավոտյան արթնացա ժամը 04: 45-ին՝ Կալիֆոռնիայի ժամանակով: Ես խոհանոց գնացի, որ սուրճ պատրաստեմ կնոջս՝ Բարբարայի համար, նստեցի խոհանոցի սեղանի մոտ՝ Աստվածաշունչ կարդալու և Աստծո հետ ժամանակ անցկացնելու համար:

Ես նարնջի հյութ էի խմում և պատրաստվում էի նոր օրվան, երբ որոշեցի հեռուստացույց միացնել ու ծանոթանալ աշխարհի և օրվա լուրերին: Միացրի «MSNBC» հեռուստաալիքը, որը մշտապես աշխատում է ուղիղ եթերով, և մինչև 05: 30-ը ծավալվում էին Նյու Յորք Սիթիի ողբերգական դեպքերը:

Ամերիկայի Միացյալ Նահանգները և ամբողջ աշխարհին անմիջապես պատվեցին տրտմության ամպով: Իրավիճակը ցավալի և ողբերգական էր. այն հիշեցրեց ինձ թանձր մառախուղները, որոնք ծածկում են առափնյա տարածքը: Մենք շատ անգամներ ենք նման մառախուղներ տեսել, քանի որ ապրում ենք օվկիանոսի մոտ:

Ծննդյանս օրը սեպտեմբերի 11-ին է, բայց այդ օրվա իմ բոլոր ծրագրերն անմիջապես ետին պլան մղվեցին՝ մեր երկրի վրա կատարված հարձակման պատճառով:

Բարբարան և ես (ինչպես և մեծամասնությունը) չէինք հեռանում հեռուստացույցից և ապշած հետևում էինք, թե ինչպես էր Ազգային գվարդիան փակում երթևեկությունը դեպի քաղաք և քաղաքից դուրս: Հաջորդ յոթանասուներկու ժամվա ընթացքում տեղի ունեցածը նման էր կաթվածահար անող ուժի, որը եկավ մեր ամբողջ պետության վրա, հատկապես՝ Նյու Յորք Սիթիի:

Մի քանի շաբաթ անց՝ ում հանդիպում էինք, ասում էին. «... որքա՜ն սահմանափակված էինք մենք»՝ տեղափոխությունների, ֆինանսների, հաղորդակցության և շատ այլ հարցերում:

Այս գրքի վերնագիրը՝ *«Սահմանափակող գործոնը ձեր կյանքում»*, ծնվեց այդ օրերին հնչող նմանատիպ արտահայտություններից: Այս գիրքն ընթերցելիս հիշե՛ք, որ դուք սահմանափակված չեք ձեր կրթությամբ կամ դրա բացակայությամբ, ձեր ռասայով, դավանանքով կամ մաշկի գույնով: Հարուստ կամ աղքատ ընտանիքում ծնվելը նույնպես չի սահմանափակում ձեզ: Դուք հատուկ եք Աստծո համար և սահմանափակված չեք ոչնչով և ոչ մի ազդեցությամբ:

Սաղմոս 78. 40, 41-ում գրված է. «Որքա՜ն հաճախ նրանք բարկացրին Նրան անապատում և տրտմեցրին Նրան անջուր վայրում: Այո՛, նրանք ետ դարձան և փորձեցին Աստծուն, և *սահմանափակեցին* Իսրայելի Սուրբին» (KJV):

Այլ թարգմանությունների մեջ «սահմանափակեցին» բառի փոխարեն գրված է «նեղացրին», «բարկացրին» կամ «զայրացրին»: Մի թարգմանության մեջ էլ գրված է, որ նրանք *«բորբոքեցին Աստծո բարկությունը»:* Մի եբրայական մեկնության մեջ օգտագործվում է *«սահման»* բառը՝ նշելով. «Աստծո շուրջը սահմաններ էին կառուցվել և սահմանագծեր էին անցկացվել, որոնք խոչընդոտում էին Նրան այն աստիճան, որ Նա չէր կարողանում գործել Իսրայելի զավակների փոխարեն»:

Որքա՜ն հաճախ ենք մենք սահմանափակում Աստծուն՝ ասելով. «Դու կարող ես ինձնից ստանալ այսքանը և վե՛րջ... ո՛չ ավելին»:

Ես ուզում եմ առաջին հերթին շնորհակալություն հայտնել ձեզ, որ ձեռք բերեցիք այս գիրքը, և ապա, որ ժամանակ եք հատկացնելու այն ընթերցելու և դրա շուրջ մտորելու համար: Թող որ այս ուղերձը բարձրացնի, խրախուսի և առաջ մղի ձեզ այն ընթացքի մեջ, որը դուք անցնում եք Տիրոջ հետ:

Հովիկ Ռասել Պիլլար

*«Ցանք և հունձք» ծառայություն*

# Գլուխ 1

# Ի՞նչ եք սպասում Աստծուց

Թոմաս Քարլայլը մի աներևակայելի արտահայտություն է արել. «Կյանքի ողբերգությունը ոչ այնքան մարդկանց կրած դժվարություններն են, որքան նրանց բաց թողնված հնարավորությունները»:

Մտածելով այս արտահայտության վերաբերյալ՝ ես մի պատմություն եմ հիշում, որն անհեթեթ է թվում, բայց այն իրականում տեղի է ունեցել: Մեզ մոտ՝ Հարավային Կալիֆոռնիայում, մարդիկ լսում են բազմաթիվ անբարո դեպքերի և վրդովեցուցիչ միջոցառումների մասին: Որոշ ժամանակ անց մարդը հոգնում է նման բաներ լսելուց: Քանի որ եղանակի մասին ասելու գրեթե ոչինչ չկա (այն միշտ նույնն է), լրատվամիջոցները շարունակ զբաղեցնում են Կալիֆոռնիայի բնակիչներին անհեթեթ պատմություններով: Տարիներ առաջ Լոս Անջելեսի լուրերի թիմը ներկայացրեց մի պատմություն, որն ասես «անհեթեթ» բառի սահմանումը լիներ:

Այս պատմությունը մի մարդու մասին է, ով սիրում էր թռչել և երազում էր օդաչու դառնալ: Նա միացավ ԱՄՆ-ի Օդային ուժերին՝ հույս ունենալով, որ կիրականացնի իր երազանքը: Դժբախտաբար, վատ տեսողությունը թույլ չտվեց նրան հասնել իր

ցանկալի աստիճանին: Այնպես որ, երբ նա հեռացավ ծառայությունից, նրա միակ մխիթարությունը իր տան ետևի բակի վրայով թռչող ռազմական ինքնաթիռները դիտելն էր: Մեկ անգամ, երբ նա նստած էր իր տան ետևի բակի սիզամարգին և տխուր դիտում էր, թե ինչպես էին այլ մարդիկ իրականացնում իրենց երազանքը, նրա գլխում մի միտք է ծագում:

Նա գնաց տեղական զինվորական խանութ և գնեց հելիումի բալոն և 45 ռետինե օդերևութաբանական փուչիկներ: Այս փուչիկները բոլորովին նման չեն երեկույթներին օգտագործվող սովորական փուչիկներին: Դրանք շատ դիմացկուն գորշ-սպիտակավուն գնդեր են, որոնց տրամագիծը փչած ժամանակ մեկ մետրից ավելի է: Հիշե՛ք, որ նա գնեց 45 այդպիսի փուչիկ: Ես մի փոքր անհանգստություն եմ զգում, երբ պարզապես մտածում եմ այս մասին:

Ոգևորությունից դողալով՝ նա բերեց այդ փուչիկներն իր տան ետևի բակը: Արդյո՞ք նրա գաղափարը կգործեր: Նա կկարողանա՞ր բարեհաջող թռչել՝ ըստ իր կազմած ծրագրի: Այդ մարդը ոչ ոքի չասաց, թե ինչ էր պատրաստվում անել: Նա օգտագործեց չափազանց դիմացկուն ռետինե կպչուն ժապավեն՝ ամրացնելու համար այդ ծանր փուչիկներն իր սիզամարգի թեթև պլաստիկ աթոռին: Նա զգուշորեն կապեց աթոռն իր մեքենայի թափարգելին և փչեց փուչիկները: Դրանից հետո նա թեթև նախաճաշ վերցրեց իր հետ և լիցքավորեց հրացանը: Նրա պատկերացմամբ, մթնոլորտի ստորին շերտերում իր ուզածի չափ թռչելուց հետո, նա հերթով կպայթեցներ փուչիկներն իր հրացանով և դանդաղ վայրէջք կկատարեր: Որքան էլ այդ մարդը խելամիտ համարեր իր գաղափարը, նրան սպասում էր իր կյանքի մեծագույն ցնցումը:

Երբ պատրաստություններն ավարտվեցին, նա նստեց իր թեթև աթոռին և կտրեց այն կապող պարանը: Ի զարմանս այդ

մարդու՝ նա դանդաղորեն չբարձրացավ ամպերի մեջ. **նա վեր սլացավ հրթիռի պես**: Արագությունն այնքա՜ն մեծ էր, որ նա ճոճվում էր մի կողմից մյուսը՝ հուսահատորեն փորձելով պահպանել հավասարակշառությունը: Նա գցեց ձեռքից իր կերակուրը, բայց կարողացավ պահել հրացանը:

Նա չբարձրացավ մթնոլորտի ստորին շերտերը: Այդ փուչիկները շարունակ վեր էին տանում նրան, մինչև որ նա հասավ մոտավորապես **3.200 մետր** բարձրության՝ գտնվելով լիովին անօգնական վիճակում: Այդ բարձրության վրա նա չէր կարող հրացանով պայթեցնել թեկուզ մեկ փուչիկ, քանի որ կկորցներ հավասարակշռությունը և իսկապես կսկսեր սավառնել, բայց՝ գլխով ներքև: Այդ մարդը մնաց օդում՝ պահված օդերևութաբանական փուչիկներով, ամուր բռնած իր աթոռից և հրացանից: Նրա ոտքերն անօգնական կախված էին տասներկու ժամ շարունակ, մինչ նա թռչում էր՝ մտածելով, թե արդյո՞ք կկարողանա ցած իջնել: Նա հիշեց, որ ոչ ոքի չէր պատմել իր ծրագրի մասին: Ոչ ոք չէր կարող իմանալ՝ որտեղ փնտրեր նրան. առավել ևս՝ մարդիկ չէին փնտրի նրան **3.200** մետր բարձրության վրա:

Հավատում եք, թե ոչ՝ այս պատմությունը լավ ավարտվեց, բայց դրա շարունակությունն է՛լ ավելի ծիծաղելի է: Այդ մարդը սավառնեց օդում և օդի հոսանքներով հասավ Լոս Անջելեսի Միջազգային օդանավակայան: Մի օդաչու, ով այդ ժամանակ պատրաստվում էր վայրէջք կատարել և դեռևս անցնում էր ամպերի միջով, հանկարծ աջ կողմ է շրջվում և ականատես է լինում մի տեսարանի, որը երբեք չի մոռանա: Նա օդում տեսնում է մի մարդու՝ «անպարկեշտ» բարձրության վրա, նստած սիզամարգերում դրվող թեթև պլաստիկ աթոռի վրա, որին կպչուն ժապավեններով օդերևութաբանական փուչիկներ էին ամրացված, և մի հրացան էր ամուր սեղմել: Երբ օդաչուն իր անձնակազմի հետ

ուշքի եկավ այդ տեսարանից, անմիջապես հաղորդեց դիսպետչերական կենտրոնին, որ իր ինքնաթիռն անցնում է մի մարդու կողքով, ով 3.000 մետր բարձրության վրա է՝ նստած պլաստիկ աթոռի վրա, ձեռքին էլ՝ հրացան: Այսօր մարդիկ կմտածեն, որ դա նոր ահաբեկչական ռազմավարություն էր:

Լոս Անջելեսի Միջազգային օդանավակայանը մոտ է օվկիանոսին, և մութն ընկնելուն պես ափամերձ տարածքի քամու ուղղությունը փոխվում է: Արդեն երեկոյան, քամին այդ մարդուն քշեց դեպի օվկիանոսը: Մարդիկ շփոթված էին. ոչ ոք չէր պատկերացնում՝ ինչպես կարելի է փրկել նրան: Ի վերջո, առափնյա անվտանգության աշխատակիցները ուղղաթիռ բարձրացրին այդ սխրանքի համար: Չնայած փրկարարների մեծ փորձառությանը՝ նրանք մեծ դժվարությամբ փրկեցին այդ մարդուն, քանի որ փուչիկները քշվում էին ուղղաթիռի պտուտակներից առաջացող քամու հոսանքից: Ի վերջո, նրանք կարողացան բարձրանալ անմիջապես նրա գլխավերևը և պարան իջեցնել նրա մոտ: Նա բռնեց պարանը, և ուղղաթիռն ապահով ցամաք հասցրեց նրան:

Վայրէջք կատարելուն պես նրան սպասում էր Լոս Անջելեսի ոստիկանությունը, ինչպես նաև թղթակիցներ՝ բոլոր հեռուստակայաններից: Թեև այդ մարդուն ձերբակալեցին, բայց գոնե մասամբ իրականացրեց իր երազանքը. նա դարձավ սեփական «օդանավի» օդաչուն:

Ես չեմ առաջարկում, որ ինչ-որ անհեթեթ երազանք ունենաք և դիմեք այնպիսի ծայրահեղությունների, որ թե՛ տեղական ոստիկանությունը, թե՛ լուրերի թղթակիցներն սպասեն ձեր վերադարձին: Բայց ես խրախուսում եմ նայել ձեր ներկա իրավիճակին: Դուք ունեցե՞լ եք երազանքներ, որոնք անկատար են մնացել: Դուք հավատո՞ւմ եք, որ ձեր կյանքում երբեք առաջընթաց չեք ունենա՝ ձեր կրթության, ռասայական պատկանելության կամ

բնավորության պատճառով: Կարծում եք՝ դուք անտեսվա՞ծ եք մարդկանց և Աստծո կողմից:

## ԱՐԹՆԱՑՐԵ՛Ք ՁԵՐ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ

Մեծ ավետարանիչ Ռ. Վ. Շամբախը մի հայտնի արտահայտություն ուներ. «Դուք չունե՛ք ոչ մի նեղություն: Դուք միայն պետք է հավատա՛ք Աստծուն»: Ես ուզում եմ մեկ քայլ առաջ գնալ՝ ասելով. «Ձեր բոլոր նեղությունները ի չիք կդառնան, երբ սպասում ունենաք Աստծուց»: **Եթե դուք չեք ապրում Աստծո խոստումներով և չեք տեսնում դրանց իրականացումը, դո՛ւրս եկեք ձեր ինքնաստեղծ սահմանափակումներից և արթնացրե՛ք ձեր սպասումները:** Թո՛ւյլ տվեք, որ ձեր սպասումն Աստծո հանդեպ դուռ բացի դեպի նոր ներկան և ավելի պայծառ ապագան:

Երբեմն մարդիկ լճանում են իրենց հավատքի մեջ կամ այլևս չեն ցանկանում լսել հավատքի մասին: Մենք այնքա՛ն ենք լսել հավատքի մասին, որ կարծում ենք, թե ամեն ինչ գիտենք: Բայց հավատքը գործում է Աստծո նորոգվող սիրո պես: **Այն երբե՛ք չի հնանում. այն նոր է ամեն օր և մշտապես երիտասարդացնում ու բժշկում է:** Հավատքը կարելի է պարզապես սպասում անվանել: **Եթե դուք կորցրել եք ձեր սպասումն Աստծուց, նշանակում է՝ դուք կորցրել եք *հետաքրքրությունը կյանքի հանդեպ:***

Աստված հանդիպում է ձեզ այնտեղ, որտեղ գտնվում եք. այս սկզբունքն անփոփոխ է: Երբ դուք ապաշխարեցիք և փրկություն ստացաք, Աստված իջավ ձեզ մոտ և բարձրացրեց ձեզ՝ նստեցնելով Իր կողքին: ***Նա լիովին ընդունեց ձեզ*** չնայելով ձեր անցած կյանքին: Բայց նրա ընդունելությունը պատճառ ուներ: Նա օգնության հասավ և բարձրացրեց ձեզ, քանի որ դուք աղաղակեցիք Նրան. դուք ***սպասում էիք***, որ Նա փրկեր ձեզ:

Աստծո բնավորությունը նույնն է: Կարևոր չէ, թե քանի տարի է՝ Աստծո հետ եք, կամ որքան հաղթանակներ և ձախողումներ եք ունեցել: Այսօր *Աստված կհանդիպի ձեզ այնտեղ, որտեղ դուք գտնվում եք*, ինչպես և անցյալում: Նրա գործը ձեր կյանքում հիմնված չէ ձեր անձի վրա: Նա չի հանդիպի ձեզ՝ հիմնվելով ձեր մաշկի գույնի, կրթության կամ դրա բացակայության վրա, և ո՛չ էլ՝ ձեր սոցիալական կարգավիճակի: **Աստված հանդիպում է ձեզ՝ համաձայն ձեր՝ Նրա հանդեպ ունեցած սպասումի:**

Սպասման ուժը այն սահմանն է, որն առանձնացնում է տղամարդկանց՝ տղաներից, և կանանց՝ աղջիկներից: Աստված այս երկիր է ուղարկել սպասման զորությունը: Այն հաջողություն կբերի ձեզ՝ անկախ այն բանից, թե ինչով եք զբաղված, քանի որ սպասումը՝ հոգևոր օրենք է:

## Ի՞ՆՉ ԵՔ ԴՈՒՔ ՍՊԱՍՈՒՄ

Ես միշտ շատ վաղ եմ արթնանում կիրակի օրերին: Մի կիրակի առավոտ սուրճ էի խմում և հեռուստացույցով մարզական հաղորդում էի դիտում, որը պատմում էր մի հայտնի ամերիկյան ֆուտբոլիստի մասին: Հաղորդումը բաղկացած էր բազմաթիվ հարցազրույցներից, որոնցում հեղինակավոր մարդիկ գովում էին այդ ֆուտբոլիստի հմտությունները: Մարզիչները և ֆուտբոլիստները մեկը մյուսի ետևից համաձայնում էին, որ խաղի ժամանակ նրանք ստիպված էին հատուկ ծրագրեր մշակել՝ նրան հաղթելու համար: Երբ ի վերջո խոսեց այդ ֆուտբոլիստը՝ ասելով, որ թեև իր մասնագիտության մեջ նրան վերաբերվում են մեծ հարգանքով և ակնածանքով, սակայն նա երբեք չի հայտնվի «փառքի սրահում» մի քանի բարոյական ձախողումների պատճառով: Դրանից հետո նա մի բան ասաց, որը գրավեց իմ ուշադ-

րությունը. «Երբ ես դաշտ էի դուրս գալիս՝ խաղալու, ես **սպասում ունեի**, որ լինելու էի լավագույն խաղացողը դաշտում»: Նրա սպասումը լավ ծառայություն էր մատուցել նրան և հաջողակ էր դարձրել այն բնագավառում, որում նա կիրառել էր այն: Միայն պատկերացրեք, թե ինչպիսի՜ օրինակ կդառնար այդ հանրահայտ անձնավորությունը, եթե կիրառեր իր կյանքի բոլոր բնագավառներում միևնույն սպասումը, որն ուներ ամերիկյան ֆուտբոլում:

Մինչ ես հագնվում էի, հաղորդումն այդ ֆուտբոլիստի մասին շարունակվում էր: Նա պատմեց իր մեծ հաջողությունների մասին, նաև անդրադարձավ իր բարոյական ձախողումներին՝ ասելով հետևյալը. «Գիտեք, կարծում եմ՝ այն դևերը, որոնք իմ մեջ են, հավիտյան ինձ հետ են լինելու»:

**Աստված կարող է անել մեզ համար ընդամենը այն, ինչին մենք կարող ենք հավատալ կամ սպասել Նրանից**: Մենք՝ քրիստոնյաներս, ***չենք կարող սպասում ունենալ ինքներս մեզնից կամ մեր կարողություններից:*** Մեր կարողությունները և ուժերն իրենց տեղն ունեն, բայց դրանք կարող են օգնել մեզ միայն որոշ չափով, ինչից հետո ամեն ինչ մեր շուրջը կքանդվի: Մենք պետք է սպասում ունենանք Աստծուց: Մեր հավատքը պետք է ուղղված լինի Աստծուն, ոչ թե այն բաներին, ինչ մենք ենք ցանկանում:

Մեր սպասումն է որոշում, թե որքանով Աստված կարող է գործել մեր կյանքում: Առակաց 6.2-ում՝ «էմփլիֆայդ» թարգմանությունից, ասվում է հետևյալը. *«Դու ծուղակն ես ընկել քո շուրթերի բառերով. դու բռնված ես քո բերանի խոսքով»* (AMP): Աստվածաշունչը դժվար չէ հասկանալ. այն շատ պարզ բացատրում է իր ասելիքը: Լսելով մարդկանց՝ դուք մի քանի րոպեում կարող եք հասկանալ, թե ինչպիսի սպասում ունեն: Նրանք, օրինակ, ասում են. «Ես այսպիսին եմ», կամ՝ «Այս բանն է կատար-

վում ինձ հետ, և ելք չկա», կամ՝ «Կարծում եմ՝ քանի որ իմ ընտանիքն այդպիսին է եղել, ես էլ այդպիսին կլինեմ»: Նրանք *բռնված են իրենց բերանի խոսքով*՝ իրենց բառերով: ***Եթե դուք կարող եք բռնվել ձեր բառերով, դուք նույնպես կարող եք ազատություն ստանալ դրանցով:*** Դուք չպե՛տք է ապրեք այնպես, ինչպես ապրում եք: Դուք չպե՛տք է հուսալքված լինեք: Դուք չպե՛տք է կրեք ձեր խնդիրները: Դուք կարող եք փոխել ձեր կյանքը: Սա ուսուցում չէ դրականորեն մտածելու մասին. սա գրված է Աստվածաշնչում, իսկ Աստվածաշունչը **դրական** է:

Կրկին՝ **մեր սպասումն է որոշում, թե որքանով Աստված կարող է գործել մեր կյանքում**: Եթե դուք քիչ եք սպասում, քիչ եք աղոթում, քիչ եք դավանում Խոսքը, կարդում եք ձեր Աստվածաշունչը փոքր հավատքով, Աստված շատ բան չի անի ձեզ համար: Նա չի կարող, որովհետև Նա ազատություն է տալիս ձեզ՝ ապրելու համաձայն Իր Խոսքի, կամ՝ ավելի ցածր մակարդակի վրա: Եթե դուք հավատում եք Աստծո Խոսքին և արթնացնում եք ձեր սպասումները՝ հեռացնելով սահմանափակումները ձեր կյանքից, դուք ամեն օր կարող եք փոխել ձեր կյանքը:

## ՈՒԺ, ՈՐՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է ԿԱՆԳՆԵՑՆԵԼ

Ձեր կարծիքով, ինչո՞ւ Պողոս առաքյալն այդքան շատ հրաշալի գործեր արեց Հիսուս Քրիստոսի համար: Ձեր կարծիքով, ինչո՞ւ նա ստացավ հայտնությունը Քրիստոսում մեր արդար դիրքի մասին: Ինչո՞ւ նա գրեց Նոր կտակարանի երկու երրորդ մասը: Պատճառը Դամասկոսի ճանապարհի մոտ տեղի ունեցած միջադեպը չէր: Եվ պատճառն այն չէր, որ նա կուրացավ, իսկ հետո նրա տեսողությունը վերականգնվեց: Բոլորիս կյանքում էլ հրաշքներ եղել են: Հրաշքները չէ, որ դրդեցին

Պողոսին մեծության հասնել և խաղաղություն գտնել Աստծո մեջ, այլ՝ նրա մշտական սպասումը այն Աստծուց, Ում նա հավատացել էր:

Փիլիպեցիների 1.6-ը թույլ է տալիս հասկանալ, թե ինչ կար Պողոսի սրտում: Համաձայն Աստվածաշնչի «էմփլիֆայդ» թարգմանության՝ նա գրում է. *«Եվ ես համոզված եմ և վստահ եմ հենց այս բանում, որ Նա, Ով բարի գործ սկսեց ձեզանում, կշարունակի մինչև Հիսուս Քրիստոսի օրը [ընդհուպ մինչև Նրա վերադարձը]՝ զարգացնելով [այդ բարի գործը] և կատարելագործելով և լիարժեք ավարտին հասցնելով այն ձեզանում»* (AMP):

Այլ կերպ ասած՝ Պողոսը ***մշտական սպասում*** ուներ, որ ինչ հանգամանքների էլ բախվեր, ***Աստծո խոսքը*** լիարժեք կերպով ***կկատարվեր*** իր կյանքում: Նա երբեք չէր նահանջում և չէր սահմանափակում իր սպասումները: Նա երբեք չէր ապրում անցյալում՝ մշտապես խոսելով «Դամասկոսում տեղի ունեցածի» մասին, ասես դա միակ կարևոր իրադարձությունը լիներ նրա քրիստոնեական կյանքում: ***Նա ամեն օր շարունակում էր իր ընթացքը***՝ մոռանալով ետևում մնացածները և ձգտելով առաջ՝ ***լիարժեք սպասումով*** այն ամենի հանդեպ, ինչն իր առջևում էր (Փիլիպեցիների 3.13):

***Դուք պետք է դառնաք հենց Պողոսի պես*** : Դուք պետք է հավատաք, որ անկախ այն բանից, թե ինչ է սպասվում ձեր կյանքի ճանապարհին, Քրիստոսը կավարտի այն աշխատանքը, որն սկսել է ձեր մեջ: Դուք պետք է հասկանաք սա և շարունակ մեծ սպասումներ ունենաք: Միշտ չէ, որ ամեն բան կլինի այնպես, ինչպես դուք ծրագրել եք, բայց դա բոլորովին կարևոր չէ: Երբեք թույլ մի՛ տվեք, որ արգելքները և դժվարությունները հանգցնեն ձեր սպասումը: ***Սպասումը՝ թանկ գանձ է***, որն Աստված տվել է այն մարդկանց, ովքեր պատկանում են Իրեն: Ձեր

սպասումը կվերածվի հոգևոր ***ուժի, որն անկարելի է կանգնեցնել***, քանի որ այն կգործադրի Աստծո զորությունը ձեր կյանքում: Ոչինչ չի կարող կանգնեցնել Աստծո ծրագիրը ձեր կյանքում, երբ դուք ապրեք սպասումով. ո՛չ ընտանիքը, ո՛չ ռասայական տարաձայնությունները, ո՛չ անուսնալուծությունը, ո՛չ հիվանդությունը, ո՛չ կրթության չափը և ո՛չ էլ ձեր ներկա աշխատանքը:

Այս ամենը շատ լավ է հնչում, այնպես չէ՞: Բայց ինչպե՞ս անցնել խրախուսական խոսքերից դեպի այս իրողությունը: Մենք չենք ուզում պարզապես ոգևորված լինել: Որպեսզի իրական քայլեր անենք այս ուղղությամբ, մենք պետք է հասկանանք, թե ինչպես ենք սահմանափակում Աստծուն, և ընդմիշտ ազատվենք հոգևոր թյուրըմբռնումներից: Եթե դուք իսկապես պատրաստ եք ստանալու այն ամենը, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար, ուրեմն սկսե՛նք:

# Գլուխ 2

# Որոշե՛ք ձեր սահմանափակող գործոնը

Միակ բանը, որը կարող է կանգնեցնել մեր սպասումները, մեր սահմանափակումներն են: Հետաքրքիր է, որ «սահմանափակել» բառը Աստվածաշնչում հիշատակվում է ընդամենը երեք անգամ (ըստ՝ «Քինգ Ջեյմս»-ի թարգմանության): Քանի որ Աստված՝ բարի Աստված է, Նրա օրհնություններն անսահմանափակ են: Ես համոզված եմ, որ «սահմանափակել» բառը հազվադեպ է օգտագործվում, քանի որ այն գրեթե օտար է Նրա բառապաշարին:

«Սահմանափակում» բառն օգտագործվում է մեզ խրատելու համար, քանի որ դրա հետևանքները կարող են վնասել մեզ կամ խոչընդոտել մեր առաջընթացը, եթե մենք Խոսքով լցված չլինենք: Օրինակ՝ «սահմանափակել» բառը եբրայերենում նշանակում է *«արգելք դնել և ասել Աստծուն, որ թույլ չեք տալիս Նրան անցնել այն»:* Այն նույնպես նշանակում է *«շրջան գծել Աստծո շուրջը»* և *«սահմաններ կառուցել Աստծո առջև»:*

Աստված սահմանափակ չէ, բայց մենք փորձում ենք սահմանափակել Նրան: Մենք երևակայական սահմաններ ենք ստեղծում մեր կրոնական մտածելակերպով՝ ենթադրելով, որ

Աստված միայն անում է որոշ բաներ, որոշակի կերպով և որոշ մարդկանց համար: Մենք երևակայական շրջաններ ենք գծում մեր կյանքի որոշ բնագավառներում, որպեսզի թույլ չտանք Նրան մուտք գործել դրանց մեջ: Մենք կարծում ենք, որ ինքներս կարող ենք հոգալ մեր մասին, կամ՝ պարզապես չենք հավատում, որ Նա ցանկանում է միջամտել և օգնել մեզ:

Երեխա ժամանակ պատահե՞լ է, որ գիծ քաշեիք հողի վրա և ոչ ոքի թույլ չտայիք հատել այն: Դա ճշտորեն նկարագրում է «սահմանափակել» բառը: Մենք երևակայական արգելքներ ենք դնում մեր կյանքի որոշ բնագավառներում՝ թույլ չտալով Աստծուն նույնիսկ մոտենալ դրանց: Հնարավոր է՝ մենք չենք ցանկանում պատասխանատու կամ հաշվետու լինել մեր կյանքի այդ բնագավառների համար: Կամ միգուցե վախենում ենք, որ ստիպված կլինենք փոխել մեր կյանքը, եթե թույլ տանք Աստծուն մուտք գործել այդ բնագավառները: Ոմանք պարզապես ցանկանում են ապրել իրենց նախընտրած ձևով և հրաժարվում են հնազանդեցնել իրենց կամքը: Ինչն էլ պատճառ հանդիսանա, ***եթե մենք մերժում ենք Աստծո միջամտությունը մեր կյանքի որևէ բնագավառում, մենք սահմանափակում ենք Նրան՝ թույլ չտալով, որ Նա օրհնի մեզ և հայտնի Իր մեծ զորությունը և ողորմությունը:***

Զավեշտական է, որ երբ մենք չենք ստանում այն, ինչ ցանկանում ենք, կամ՝ երբ Աստված չի օգնում մեզ այնպես, ինչպես մենք կարծում էինք, մենք մեղադրում ենք Նրան, բարկանում ենք Նրա վրա կամ մտածում ենք, որ չենք հետաքրքրում Նրան: Մենք հիասթափվում ենք այն ամենից, ինչ սովորեցնում և ներկայացնում է քրիստոնեական կյանքը: Մենք սկսում ենք մտածել, որ այն չի գործում, որ այն վերաբերում է միայն «տկարներին», որոնց հենակներ են պետք: Բայց և այնպես, *իրակա-*

*նում* հենց *մե՛նք* ենք ***սահմանափակում Աստծուն՝ մեր գործերով և որոշումներով:*** Մե՛նք ենք սահմաններ կառուցում Նրա առջև, շրջաններ գծում մեր կյանքի որոշ բնագավառներում կամ արգելքներ դնում՝ թույլ չտալով Նրան անցնել դրանք:

## ԻՍՐԱՅԵԼԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Իսրայելի զավակները հենց այսպես վարվեցին: «Էմփլիֆայդ» թարգմանության մեջ Սաղմոս 78-ում տեսնում ենք, թե ինչպես էին նրանք սահմանափակում Աստծուն այն շրջաններով և արգելքներով, որ իրենք ստեղծել էին Նրա և իրենց միջև: Նրանք մոռացել էին այն մեծ հրաշքները, որոնք Նա արեց Եգիպտոսում: Նրանք մոռացել էին, թե ինչպես Նա դուրս բերեց իրենց Եգիպտոսից Իր զորավոր ձեռքով: Քանի որ անապատում հանգամանքները *մի փոքր տարբերվում էին* իրենց սպասվածից, նրանք սկսեցին *տրտնջալ և մեղադրել Տիրոջը:*

*«Բայց և այնպես, նրանք շարունակեցին մեղք գործել Աստծո դեմ՝ բարկացնելով Բարձրյալին և ապստամբելով Նրա դեմ անապատում (երաշտի երկրում):*

*Եվ նրանք փորձեցին Աստծուն իրենց սրտերում՝ խնդրելով կերակուր՝ համաձայն իրենց [եսասիրական] ցանկության և ախորժակի:*

*Այո՛, նրանք խոսեցին Աստծո դեմ. նրանք ասացին. «Կարո՞ղ է Աստված [կերակուրով] սեղան պատրաստել անապատում: Ահա, Նա զարկեց վեմին այնպես, որ ջրերը բխեին, և հոսանքները տարածվեին, բայց Նա կարո՞ղ է նաև հաց տալ: Կարո՞ղ է Նա միս տալ Իր ժողովրդին»:*

*Այդ պատճառով, երբ Տերը լսեց, [խիստ] բարկացավ. կրակ բորբոքվեց Հակոբի դեմ, և Նրա բարկությունը բարձրացավ Իսրայելի դեմ:*

*Որովհետև նրանք չհավատացին Աստծուն [նրանք չապավինեցին Նրան], և նրանք չվստահեցին Նրա փրկությանը (Նրա փրկարար զորությանը)»:*

*Խոսքեր 17-22 (AMP)*

Աստվածաշնչում գրված է, որ Հին կտակարանը *տրվեց* մեզ և *գրվեց մեր խրատի համար* (տե՛ս Ա Կորնթ. 10.6): Այս պատմությունները պետք է *օրինակ լինեն մեզ համար* և սովորեցնեն, թե ինչպես ապրել, ինչպես պատվել և հավատալ Աստծուն: Նշանակում է՝ մեզ համար ***կարևոր է հասկանալ, թե ինչու իսրայելցիները այդպես վարվեցին, և ինչու էին նրանք ստիպված նման գին վճարել իրենց արարքների համար:*** Թեև այդ մարդիկ ապրում էին այլ միջավայրում և մշակույթում, նրանց սիրտը և վերաբերմունքն, ըստ էության, նույնն էին, ինչպես այսօր:

Իսրայելցիները հեռանում էին Աստծուց, երբ անապատում էին: Մեր դեպքում, անապատը խորհրդանշում է որոշակի մտածելակերպեր: Մեր «անապատը» այն է, երբ մենք հայտնվում ենք ոչ հարմարավետ պայմաններում կամ հանգամանքներում: ***Եթե մենք զգոն չլինենք, այդ անապատը սահմանափակող գործոն կդառնա:***

Միգուցե ձեր «անապատը»՝ ձեր մաշկի գույնն է կամ այն, որ դուք կրթություն չունեք: Միգուցե ձեր անապատը՝ ձեր ամուսնությունն է, այն ընտանիքը, որտեղ ծնվել եք կամ որտեղ հայտնվել եք ամուսնանալուց հետո: Միգուցե դուք մտածում եք, որ ձեր սահմանափակող գործոնը՝ ձեր անհատականությունը կամ բնավորությունն է, ձեր հիվանդությունը կամ սահմանափակ կարողությունը:

Միգուցե դուք վերապրել եք ցավոտ ամուսնալուծություն կամ ձեր մտերիմ մարդու մահը: Այս պատճառով դուք կարող եք զգալ ձեզ անապատում: Դուք համոզված եք, որ ստիպված եք սահմանափակ կյանք վարել և երբեք չեք հասնի ձեր կյանքի նախկին մակարդակին, երբ այդ անձնավորությունը ձեր կողքին էր:

Միգուցե դուք հաջողակ ծառայություն եք ունեցել վստահելի առաջնորդի թիմում, բայց այդ առաջնորդը բարոյական ձախողում է ունեցել: Այժմ դուք մոլորված եք զգում. թվում է՝ ձեզ դավաճանել են: Դուք ասես թափառում եք և չգիտեք՝ ուր գնալ:

Միգուցե ձեզ թվում է, թե ձեր կյանքը սահմանափակված է այլ մարդու հանգամանքներով, և այդ պատճառով չեք կարող առաջընթաց ունենալ: Դուք կարող եք զգալ ձեզ չափազանց ծեր, չափազանց երիտասարդ, չափազանց հոգնած կամ չափազանց հիասթափված: Ձեզ նույնիսկ կարող է թվալ, որ հարուստ լինելը սահմանափակում է ձեր անմիջական շփումը մարդկանց հետ, կամ՝ որ դուք սահմանափակ եք՝ բավականաչափ միջոցներ չունենալու պատճառով:

**Անկախ այն բանից, թե ինչն եք համարում ձեր անապատը, դուք *պետք է հիշեք* մի քանի շատ կարևոր բաներ, որպեսզի չավարտեք ձեր կյանքն այնպես, ինչպես Իսրայելի զավակները:**

Եթե մենք մի պահ կանգ առնենք և կարդանք Սաղմոս 78.1-16-ը, կտեսնենք, որ Աստված անհավատալի հրաշքներ գործեց Իսրայելի համար: Նա ազատեց նրանց աշխարհի ամենաազդեցիկ կայսրությունից միայն Իր Խոսքի դրսևորումներով և Մովսեսի ձեռքի գավազանով: ***Նա կիսեց Կարմիր ծովը*** և անցկացրեց նրանց այնպես, որ մինչև իսկ նրանց հագուստը չթրջվեց, և ***նրանք անցան չոր գետնի վրայով:*** Թեև ժողովուրդն ամեն օր քայլում էր ավազի վրայով, որը հղկաթղթի նման մաշում էր նրանց կոշկատակերը, ***Աստված հրաշք գործեց. նրանց կոշիկներն այդպես էլ չմաշվեցին***, և եթե դուք երեխաներ ունեք, կհասկանաք, թե ինչ հրաշք էր դա: ***Նա սննդարար կերակուր*** տվեց նրանց՝ լոռամարգիների, պրասի և մանանայի տեսքով: ***Նա ջուր տվեց նրանց չլսված մի տեղից***՝ վեմից: ***Նա անձամբ տրամադրեց նրանց «հովացում»*** ցերեկը և ***«ջեռուցում»***՝ գիշերը,

որպեսզի նրանք նույնիսկ թեթև ցուրտ չզգային: ***Նա տվեց նրանց հարմարավետ կացարաններ՝ քնելու համար, և լավ հասարակություն, որում կարելի էր ապրել:*** Իսրայելցիներն ունեին գերբնական մատակարարում. նրանք անվտանգ և ապահով էին:

Չնայած այս ամենին՝ խոսք 17-ում գրված է. «...*նրանք շարունակեցին մեղք գործել Նրա դեմ...*» Ի՞նչ էին նրանք անում. միևնույն բանը, ինչ մենք ենք անում, երբ սահմանափակում ենք Աստծուն. նրանք տրտնջում էին և բողոքում: Խոսք 18-ը հայտնում է, որ նրանք միս էին խնդրում: Մի թարգմանության մեջ գրված է. *«Ինչո՞ւ ես այդպիսի միատեսակ կերակրացանկ տալիս մեզ: Չե՞ս կարող ժամանակ առ ժամանակ հորթի սթեյք տալ»:* Մեկ այլ թարգմանություն շարունակում է. «Նրանք սկսեցին հեգնանքով խոսել և ապրել»: Պատկերացնո՞ւմ եք այդ հանդգնությունը: Այն խիստ զայրացրեց Աստծուն: Մոֆաթի թարգմանության մեջ գրված է. *«Նա խիստ զայրացավ, և Նրա բարկությունը բորբոքվեց»:*

***Աստված բարկացավ, որովհետև*** այն ***ժողովուրդը***, որին Նա ցույց էր տվել Իր հրաշագործ զորությունը, ***այլևս չէր հավատում Իրեն:*** Իր խիստ անհավատության մեջ, Իսրայելի ժողովուրդը երեք հարց էր տալիս.

1. ***Կարո՞ղ է Աստված անել սա:***
2. ***Կարո՞ղ է Աստված անել սա ինձ համար:***
3. ***Կարո՞ղ է Աստված անել սա ինձ համար հիմա:***

## ԿԱՐՈ՞Ղ Է ԱՍՏՎԱԾ ԱՆԵԼ ՍԱ

Ես ուզում եմ, որ մի պահ մտածեք ձեր ներկա իրավիճակի մասին: Դուք անապատո՞ւմ եք: Դուք զգում եք, որ ձեզ հետ ոչինչ չի՞ կատարվում, և ձեր կյանքն աննպատա՞կ է: Դուք սահմանա-

փակե՞լ եք Աստծուն *այսօր* ինչ-որ հանգամանքի կամ իրադարձության պատճառով, որը տեղի է ունեցել ձեր կյանքում *երեկ:* Պատահե՞լ է, որ մտածեք, թե արդյոք Աստված կարո՞ղ է վերականգնել ձեր կյանքը: *Երբ ժամանակավոր հուսալքություն և հիասթափություն եք ապրում, մի՛ մտածեք, որ դրանք պարզապես զգացմունքներ են:* Այս երկու դիրքորոշումները դրդում են մեզ սահմանափակել Աստծուն: Դրանք լուրջ սահմանափակող գործոն են առաջացնում մեր կյանքում: **Հուսալքությունը և հիասթափությունը՝ սերմեր են, որոնք հունձք են տալիս անհավատության, սահմանափակումների և սպասման բացակայության տեսքով**:

Աստծո բարկության պատճառներից մեկն այն էր, որ իսրայելցիները վիճարկում էին Նրա կարողությունը բոլոր անհավատալի հրաշքներից հետո, որոնք Նա արդեն գործել էր: Մենք ոչնչով չենք տարբերվում նրանցից: Անկասկած՝ *Աստված մեծ հրաշքներ է գործել ձեր կյանքում:* Նա ***փրկել է ձեզ*** դժոխքում հավիտյան ապրելուց: Նա ***բժշկել է ձեզ***, նա ***ազատ է արձակել ձեզ***, Նա ***բարգավաճում է տվել ձեզ***, և Նա ***մեծ ողորմություն և գթասրտություն է ցուցաբերել ձեր հանդեպ:*** Աստված շատ բարի և հրաշալի բաներ է տվել ձեզ: Մի՞թե դուք կասկածելու եք, որ Նա կարող է ազատել ձեզ ներկա հանգամանքներից, որովհետև, ձեր կարծիքով, դրանք **չափազանց մեծ են Նրա համար**: Դուք իսկապես հավատո՞ւմ եք, որ ձեր իրավիճակն այնքան բարդ է, որ Նա չի կարողանա շտկել այն: Դուք իսկապես հավատո՞ւմ եք, որ ձեր կյանքն այնքան խճճված և խառնաշփոթ է, որ Նա չի կարողանա կրկին լիարժեք դարձնել այն: Դուք իսկապես հավատո՞ւմ եք, որ ձեր խնդիրներն այնքան բարդ են, որ Նա չի կարողանա լուծել:

Հավատքը կամ սպասումն առաջանում է, երբ Աստծո կամքը *հայտնի է դառնում*: Եթե դուք դժվարանում եք հավատալ, որ «Աստված կարող է» ինչ-որ բան անել ձեզ համար, դուք պետք

է իմանաք Նրա կամքը: Նրա կամքը գրված է **Նրա Խոսքում**: Նրա կամքը հայտնվում է Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու բնավորության և ծառայության մեջ: Արդյո՞ք, երբ իմանաք Աստծո կամքը, դուք **կարող եք վստահ լինել, որ Նա կկատարի Իր** խոստումները: **Իհարկե, որովհետև** *Աստված մարդ չէ, և Նա չի ստում:* Եթե կասկածեք Աստծո կարողությանը, դուք Եվայի պես կհայտնվեք միևնույն դիրքում՝ Եդեմի պարտեզում: Օձի միջոցով սատանան վիճարկեց, որ Աստված կարող էր կատարել այն, ինչ խոստացել էր (տե՛ս Ծննդ. 3.1,4): Թույլ մի՛ տվեք սատանային կամ որևէ մեկին փորձեր անել ձեզ վրա՝ տեսնելու համար, թե արդյո՞ք կհավատաք, որ Աստված ի զորու է կատարելու Իր խոստումները: Թույլ մի՛ տվեք թշնամուն շշնջալ, որ դուք հավատք չունեք Աստծո հանդեպ: Հավատք ունենալը դժվար բան չէ: Հավատքը չի նշանակում՝ ստիպել ձեզ դատարկ մտավոր դավանանք անել: *Հավատքը պարզապես նշանակում է՝ ունենալ սպասում, որ Աստված հավատարիմ կլինի* ***Իր Խոսքին:*** Սպասո՛ւմ ունեցեք, որ Նա կկատարի Իր Խոսքը, որն ասել է ձեզ. ահա և ամբողջ հավատքը: Հենց որ դուք համոզված լինեք, որ Աստված կպահի Իր Խոսքը, դուք ոչ միայն կիմանաք, որ Աստված կարող է, այլև համոզված կլինեք, որ Նա կկատարի:

## ՄՏԱԾԵ՛Ք ԱՅՍ ՄԱՍԻՆ...

Եթե Աստված հրաշքներ գործեց հազարավոր տարիներ առաջ, նշանակում է՝ Նա նույնպես հրաշքներ է գործում այսօր:

- Նա չի փոխվում:
- Եթե Հիսուսը հրաշքներ գործեց Ավետարաններում, ինչո՞ւ չպետք է հրաշքներ գործի այսօր՝ շնորհքի *ավելի գերազանց* ժամանակաշրջանում:

- Ինչո՞ւ Սուրբ Հոգին, Ով բժշկում էր, ազատագրում էր և փրկում էր մինչև Իր ժամանակաշրջանի սկիզբը, պետք է ավելի քիչ գործի այն բանից հետո, երբ ստանձնեց Իր պաշտոնը Պենտեկոստեի օրը:
- Եթե Աստված արդարացրեց ձեզ Հիսուս Քրիստոսով, ինչո՞ւ Նա պետք է թողնի ձեզ անեծքի տակ հիմա:
- Եթե Աստծո Որդին հայտնվեց՝ սատանայի գործերը քանդելու համար (տե՛ս Ա Հովհ. 3.8), մի՞թե Նա հրաժարվեց այդ իշխանությունից Խաչի վրա չարչարանքներ կրելուց և հարություն առնելուց հետո:
- Մի՞թե Հիսուս Քրիստոսի գթասրտությունն ավարտվեց այն բանից հետո, երբ Նա բարձրացավ և նստեց Հոր աջ կողմը:

Երբ սկսում եք վիճարկել Աստծո կարողությունը, դուք դիտարկում եք Նրան շատ ցածր մակարդակի վրա: Ծննդոց 18-րդ գլխում գրված է, որ Աբրահամին այցելեցին երեք հրեշտակներ՝ մարդկային կերպարանքով: Աբրահամը շտապեց ճոխ սեղան պատրաստել նրանց համար, իսկ հետո կանգնած մնաց նրանց կողքին, մինչ նրանք ճաշում էին: Նրանցից մեկն ասաց Աբրահամին, որ վերադառնալու է, և իր վերադարձի ժամանակ Սառան ծննդաբերած կլինի, և նրա գրկին նորածին տղա կլինի:

Սառան ականջ էր դրել վրանի մուտքի մոտ: Լսելով այդ անհավատալի խոստումը՝ նա սկսեց ծիծաղել իր մտքում: Նրա պտղաբերության տարիքը վաղուց անցել էր: Նա և Աբրահամը շատ ծեր էին, և նույնիսկ միտքը երեխա ունենալու մասին ծիծաղելի թվաց նրան: Տերն անմիջապես հարցրեց Աբրահամին, թե ինչու Սառան ծիծաղեց՝ նման բան լսելով: Նա հանդիմանեց Աբրահամին նրա կնոջ վարքի համար՝ ասելով. «*Տիրոջ համար դժվար բան կա՞ արդյոք»* (խոսք 14): ***Ձեր հավատքի և սպասման***

*մեծագույն թշնամիներից մեկը կասկածելն է, թե արդյո՞ք Աստված կարող է կատարել Իր խոստումը:*

Եփեսացիների 3.20-ը մի զարմանալի ճշմարտություն է հայտնում մեզ: Եթե դուք երկար ժամանակ է՝ քրիստոնյա եք, անկասկած՝ լսել եք այս խոսքը: Ոմանք այնքա՛ն ծանոթ են այս խոսքին, որ կարող են առանց մտածելու կրկնել այն: Հենց դա է պատճառը, որ նրանք գրեթե **չունեն** սպասում այս խոսքի հիման վրա: Ես թույլ տվեցի ինձ առանձնանցել որոշ բառեր, և աղոթում եմ, որ երբ կարդաք այս ազդեցիկ խոսքը, այդ բառերը պարզապես ***դուրս թռչեն այս էջից*** և հպվեն ձեր սրտին՝ ***ավելացնելով ձեր սպասումը:*** Ահա այն. «*Բայց Նրան, որ կարող է առատությամբ անել ամեն բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության չափով, որ մեզանում ներգործում է...*»: Աստված ոչ միայն **կարող** է անել, Նա կարող է անել ***առատությամբ, ամեն բաներից ավելի***, քան դուք երբևէ կարող եք խնդրել կամ մտածել:

Ուշադրություն դարձրեք այս խոսքի բանալի հատվածին. «***...այն զորության չափով, որ մեզանում ներգործում է»:*** Ազատվե՛ք ձեր սահմաններից, ջնջե՛ք այն շրջանները, որոնք գծել եք Աստծո շուրջը, և հեռացրե՛ք այն արգելքները, որ թույլ չեք տվել Նրան անցնել: *Հավատացե՛ք Նրա խոսքին և թո՛ւյլ տվեք, որ Նրա զորությունը գործի ձեզանում և ձեր միջոցով*: Ապաշխարե՛ք Աստծուն թերագնահատելու և Նրա մեծության ու զորության մեջ կասկածելու համար: Հավատացողի համար **ամեն ինչ հնարավոր է**, իսկ ***Տիրոջ համար ոչինչ դժվար չէ:***

## ԿԱՐՈ՞Ղ Է ԱՍՏՎԱԾ ԱՆԵԼ ԴԱ ԻՆՁ ՀԱՄԱՐ

Իսրայելցիների երկրորդ սխալն այն էր, որ նրանք կասկածում էին, որ Աստված կարող էր ինչ-որ բան անել անձամբ իրենց

համար: Այլ կերպ ասած՝ նրանք հարցնում էին. *«Կարո՞ղ է Աստված անել դա ինձ համար»:*

Երբ մենք «անապատում» ենք, նման հարցը կարող է երկու բան նշանակել: Առաջինը՝ մենք չենք համարում, որ արժանի ենք, որ Աստված ինչ-որ բան անի մեզ համար: Եվ երկրորդը՝ մենք լիովին կլանված ենք մեր անձնական կարիքներով և ցանկություններով, ոչ թե այն բաներով, ինչ Աստված է ցանկանում մեզ համար: Մենք կխոսենք երկրորդ դիրքորոշման մասին քիչ անց: Այժմ խոսենք այն սահմանափակ մտածելակերպի մասին, ըստ որի մենք արժանի չենք, որ Աստված պատասխանի մեզ:

Շատ հաճախ մենք մոտենում ենք Աստծուն թերարժեքության բարդույթով: Եթե պարզապես մտածենք այս մասին, Աստծո առջև թերարժեքության բարդույթ ունենալն այնքան էլ խելամիտ չէ: ***Աստված սիրում է ձեզ*** այնքան, որ *ուղարկեց Հիսուս Քրիստոսին* այս երկիր՝ ***Իր կյանքը խաչի վրա տալու և հարություն առնելու համար***, որպեսզի ***դուք հավիտենական փրկություն ունենաք:*** Աստված ոչ միայն *ցանկանում է*, որ դուք ստանաք Իր օրհնությունները հիմա՝ *այս աշխարհում*, ***այլև***՝ որ ***դուք*** հավիտյան ***ապրեք*** Իր հետ ***Երկնքում:*** Ուրեմն, ի՞նչ խոսք կարող է լինել թերարժեքության մասին: Այնուամենայնիվ, մենք մտածում ենք, որ Աստված կգործի Բիլլի Գրեհեմի, Օրալ Ռոբերտսի, Բենի Հինի, Չարլզ Սթենլիի և այլ նման ծառայողների համար, բայց Նա չի անի նույնը մեզ համար:

Նման մտածելակերպը սահմանափակումների պատճառ է դառնում: Մենք սահմանափակում ենք Աստծո ձեռքը մեր կյանքում՝ կառուցելով խոչընդոտներ և սահմաններ Նրա առջև: Մենք հավատում ենք, որ Նա չի ցանկանա օգնել մեզ, որովհետև մենք «այդքան չարժենք»:

Որտեղի՞ց առաջացան այդ սահմանափակումները: Միգուցե ամոթի՞ց, որևէ իրավիճակի՞ց մեր կյանքում, կամ՝ մեր բնավորությունի՞ց: Միգուցե մենք ընդունել ենք այն կրոնական միտքը, որ պետք է օրվա առաջին կեսը նվիրենք աղոթքին, իսկ երկրորդը՝ Խոսքի՞ն: Թե՞ մտածում ենք, որ բավականաչափ խելացի չենք, այնքան էլ հոգևոր չենք կամ մաշկի «ոչ ճիշտ» գույն ունենք: Միգուցե մենք սահմանափակել ենք Աստծուն՝ մտածելով, որ ինչ-ինչ կերպով չենք արդարացրել Նրա սպասումները: Իսկ միգուցե մենք մտածում ենք, որ Նա սիրելինե՞ր ունի:

Եթե սա վերաբերում է ձեզ, մտածե՛ք այս մասին. եթե **ձեր** կյանքում ինչ-որ «միգուցե» կա, չե՞ք կարծում, որ նման «միգուցեներ» կլինեն **ամեն մեկի** կյանքում: Այնուամենայնիվ, քանի որ Աստված անաչառ է (տե՛ս Գործք 10.34), այդ «միգուցեները» որևէ նշանակություն չունեն: Նա սիրում է բոլորիս հավիտենական սիրով, և չի նախընտրում մեկին՝ մյուսից: Բայց և այնպես, Նա պատվում է հավատքը կամ սպասումը, ինչը նշանակում է, որ Նա պատասխանում է հավատացողներին: Սմիթ Վիգլսվորթը մեկ անգամ ասաց, որ Աստված կանցնի միլիոնավոր մարդկանց կողքով, որպեսզի հպվի նրան, ով հավատում է Իրեն: Յուրաքանչյուրը, ով կնայի Աստծուն՝ սպասելով, որ Նա գործելու է իր համար, երբեք հուսախաբ չի լինի: Եթե Աստված որևէ բան է արել ինչ-որ մեկի համար, Նա կանի նույնը ձեզ համար: Դուք պարզապես պետք է հավատաք Նրա Խոսքին և սպասեք, որ Նա կկատարի այն, որովհետև **Նա հավատարիմ է Իր Խոսքին**:

«Վենդի» կոչվող արագ սննդի ցանցը հայտնի է գրեթե ամբողջ աշխարհում: Այդ ցանցի հիմնադիր Դեյվ Թոմասը կարող էր մեծ սահմանափակումներ կառուցել իր կյանքում, բայց նա այդպես չվարվեց: Դեյվը մեծացել էր մանկատանը: Նա կարող էր հավատալ, որ իր հանգամանքների պատճառով երբեք ոչնչի չէր հասնի: Նա կարող էր հավատալ այն ստին, որ ինքը ոչ ոքի

պետք չէր, և թափառեր այդ անապատում՝ մինչև կյանքի ավարտը: Մի ամուսնական զույգ՝ Միչիգան նահանգից, որդեգրեց նրան, և միասին տեղափոխվեցին Օհայո նահանգ: Թեև այդ զույգը շատ բարի էր նրա հանդեպ, նա, միևնույն է, կարող էր թերարժեքության բարդույթ ունենալ: Նա կարող էր շարունակ մտածել, որ չէր համապատասխանում այն միջավայրին, որտեղ ապրում էր, և որ իր կյանքն ավելի վատն էր, քան ուրիշներինը:

Դեյվ Թոմասը թույլ չտվեց, որ իր որբ լինելու փաստը ճնշեր կամ սահմանափակեր իրեն: Նա չտրտնջաց և չասաց. «Աստված գործում է այլ մարդկանց կյանքում, որովհետև նրանք ապրում են իրենց ծնողների հետ: Հազիվ թե Աստված կարողանա օգնել ինձ»: Ո՛չ, Դեյվը հավատաց: Նա ուներ հաստատ դիրքորոշում իր կյանքում և գիտեր, որ Աստծո օգնությամբ կարող էր հաջողության հասնել ամեն ինչում: Նա վերցրեց աննշան թվացող մի բան՝ շրջանաձև համբուրգերը, և վերածեց յուրահատուկ ուտեստի: Նա ստեղծեց իր հայտնի «քառակուսի» համբուրգերները, իսկ մի քանի հասարակ համեմունքների փոխարեն ստեղծեց բազմաթիվ միջոցներ՝ համբուրգերը համեմելու համար: Նրա *«Որտե՞ղ է հորթի միսը»* կարգախոսը շատ հայտնի դարձավ և մեծ շահույթ բերեց նրան: Նա սկսեց վաճառել ավելի մեծ համբուրգերներ: Նրա ստեղծարարությունը վերջ չուներ: Նա ցանկանում էր այնպես անել, որ կերակուրը պատրաստվեր ըստ մարդկանց անհատական ցանկությունների, և նրան հաջողվե՛ց դա: Դեյվ Թոմասը մահացավ 2001 թվականին՝ թողնելով գրեթե յոթ ու կես միլիարդ դոլարի ժառանգություն և ավելի քան 6.600 սննդի կետեր ամբողջ աշխարհում: Աստված հավատարիմ էր այն մարդու հանդեպ, ով սպասում էր Իր օրհնություններին:

Ես գիտեմ ևս մեկ իրական պատմություն մի ռումինացի տղայի մասին, ով մեծացել էր մանկատանը: Համաձայն որոշ

երկրների օրենքների՝ ծնողները կարող են հրաժարվել իրենց երեխաներից, և այդ տղայի մայրը հենց այդպես էլ վարվել էր: Ծննդաբերությունից հետո նա թողեց իր երեխային հիվանդանոցում: Կարճ ժամանակ անց նրա հայրը վերցրեց նրան և տուն տարավ, բայց երեխան մշտական ծեծի էր ենթարկվում: Ի վերջո, մեկ օր նրա հայրը հավաքեց որդու իրերը և մանկատուն տարավ նրան՝ թողնելով մանկատան շենքի դռան մոտ:

Այս փոքրիկ տղան կարող էր կորցնել հույսը, և բոլորը կհասկանային նրան: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպես նա պետք է զգար իրեն: Այնուամենայնիվ, նույնիսկ նման սարսափելի և անգութ հանգամանքներում նա չհուսալքվեց: Ամեն երեկո նա աղոթում էր, որ ինչ-որ մեկը գար Ամերիկայից և որդեգրեր իրեն: Նա ոչ միայն աղոթում էր, այլև պատմում էր բոլորին, որ դա տեղի էր ունենալու: Բոլոր երեխաները ծիծաղում էին նրա վրա և ծաղրում էին նրան: Նույնիսկ մանկատան աշխատակիցներն էին կշտամբում նրան՝ պատվիրելով նման անհեթեթ աղոթքներ չանել: Նրանք ասում էին, որ նա չպետք է հուսար իր հորինած գաղափարին: Բայց այդ տղան պատասխանում էր, որ Աստված լսելու է իրեն, ինքը որդեգրվելու է և ապրելու է Ամերիկայում:

Երբ այդ տղան գրեթե ութ տարեկան էր, մի ամերիկուհի միսիոներ զգաց, որ Տերն առաջնորդում է իրեն գնալ այդ մանկատուն և օգնություն առաջարկել: Երբ մանկատան երեխաները լսեցին այդ մասին, վազեցին այդ տղայի մոտ և ասացին, որ բակում մի ամերիկուհի կա: Նա այնքա՜ն արագ վազեց, որ արդեն շնչակտուր էր լինում: Նա միայն կարող էր բռնել այդ կնոջ շրջազգեստի փեշերից և հևալով խոսել նրա հետ իր մայրենի լեզվով: Միսիոներուհին գթասրտություն զգաց այդ տղայի հանդեպ՝ նմանեցնելով նրան իր թոռնիկին: Եվ շաբաթ, կիրակի օրերին նրան տանում էր իր տուն:

Մեկ օր՝ աղոթքից հետո, այդ կինը զանգահարեց Ամերիկայում ապրող իր զարմուհուն: Նրա զարմուհին հրաշալի դեռահաս աղջիկ ուներ, բայց ծանր հղիության պատճառով բժիշկներն ասել էին, որ նա այլևս չի կարող երեխաներ ունենալ: Նա իր ամուսնու հետ միշտ երազում էր որդի ունենալ, բայց տարիներ շարունակ բժիշկների եզրակացությունը նրա առողջության մասին՝ չէր փոխվում: Միսիոներուհին խնդրեց այդ զույգին մտածել այդ ռումինացի տղային որդեգրելու մասին: Այդ կնոջ զարմուհին և նրա ամուսինը հովվի օգնականներ էին մի մեծ և արթուն եկեղեցում: Նրանք հաստատված և հարգված ծառայողներ էին, ովքեր ղեկավարում էին իրենց եկեղեցու Աստվածաշնչյան դպրոցը և միսիոներներ էին ուղարկում աշխարհով մեկ: Այդ զույգն աղոթեց, իսկ Աստված արեց մնացածը: Ամուսինը տեսիլքում տեսավ փոքրիկ որբ տղաների, և Աստված խոսեց նրա հետ. «Ինչպե՞ս կզգայիր քեզ, եթե այդ տղաներից մեկը լինեիր»: Եվ այդ զույգն անմիջապես հասկացավ, որ ռումինացի տղային որդեգրելն Աստծո կամքն էր:

Կարճ ասած՝ նրանք որդեգրեցին այդ ռումինացի տղային: Այսօր նա հաճախում է մի եկեղեցի Միացյալ Նահանգների հարավում, որը սովորեցնում է Աստծո ամբողջական Խոսքը: Այդ տղան հիացած է, որ ապրում է Ամերիկայում և հաճախում է մի եկեղեցի, որտեղ մարդիկ հավատում են Աստծուն՝ ինչպես և ինքը: Նա կենդանի վկայություն է նրանց համար, ովքեր ծաղրում էին նրան և փորձում էին լռեցնել: Աստված լսեց այդ փոքրիկ տղայի աղոթքը, որը բարձրանում էր մի ռումինական մանկատան խորը «տիղմից», և հաստատեց նրա փոքրիկ ոտքերն ամուր և ապահով հիմքի վրա: Աստված կատարեց այն, ինչը, մարդկանց ասելով, անհնար էր: Փորձեք ասել այդ փոքրիկ ռումինացուն, որ նրա հանգամանքները չափազանց մեծ են Աստծո համար, կամ՝ որ Աստված չի լսում նրա աղոթքները: Փորձեք ասել նրան, որ նա կարևոր չէ Աստծո համար:

Ինչո՞ւ Աստված դուրս հանեց մանկատնից այդ փոքրիկ տղային, բայց թողեց մյուսներին: Մի՞թե այդ տղան Նրա սիրելին էր: Մի՞թե Նա սիրում էր այդ տղային ավելի շատ, քան մյուսներին: Իհարկե՝ ո՛չ: Աստված տեսավ այդ փոքրիկ տղայի սպասումը և շտապեց պատասխանել դրան: Դա անհնարին և անհավանական էր թվում: Բայց մենք արդեն կարդացինք Աստվածաշնչում, որ Տիրոջ համար ոչինչ դժվար չէ: Նա *գործում է՝ համաձայն մեր սպասման:* Նա ***գործում է՝ համաձայն Իր Խոսքի,*** որը խոստանում է, որ ***մենք գլուխ ենք, ոչ թե պոչ***: Նա ցանկանում է, որ մեր հանգամանքներից բարձր լինենք, ոչ թե՝ ցածր:

Ամենահետաքրքիրն այն էր, որ Աստված չդադարեց հրաշքներ գործել այդ տղային որդեգրող ընտանիքում: Թեև նրա «նոր մորը» ասել էին, որ բժշկական տեսանկյունից անհնար էր, որ նա երեխաներ ունենար, սակայն Աստված ցույց տվեց, որ նրանք սխալ էին: Ի զարմանս բոլորին՝ այդ կինն անսպասելի հղիացավ և ապահով հղիություն ունեցավ: Մի քանի ամսվա ընթացքում այդ ընտանիքը, որը մեկ երեխա ուներ, երեք երեխա ունեցավ: Անկասկած՝ Տիրոջ օրհնությունները կհարստացնեն մեզ, և հիմա այդ ընտանիքի կապարճը լիքն է:

Եթե դուք կարծում եք, որ Աստված կգործի այլ մարդկանց համար, բայց ոչ՝ ձեզ համար, ազատվե՛ք այդ մտածելակերպից: Դո՛ւրս եկեք ձեր ինքնահնար սահմանափակումներից և հավատացե՛ք Աստծուն: Նա ձեր կողմն է, ոչ թե՝ ձեր դեմ:

## ԿԱՐՈ՞Ղ Է ԱՍՏՎԱԾ ԱՆԵԼ ԴԱ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՀԻՄԱ

Իսրայելցիների երրորդ հարցն էր՝ *«Կարո՞ղ է Աստված անել դա ինձ համար* ***հիմա****»:* Այլ կերպ ասած՝ նրանք համոզված էին, որ իրենց ներկա հանգամանքներն անապատում *սահմա-*

*նափակում էին Աստծուն:* Նրանք մոռացել էին, որ ստրուկներ էին աշխարհի ամենաազդեցիկ կայսրության մեջ, երբ Աստված հրաշքով ազատեց նրանց: Անապատով անցնելիս հանգամանքները շատ ծանր էին թվում: Նրանք եզրակացրին, որ կարող են ստանալ Աստծուց ընդամենը մեկ մեծ հրաշք և մի քանի փոքրիկ հրաշքներ, այն էլ՝ ժամանակ առ ժամանակ: Ինչպես և մեզնից շատերը, նրանք մտածում էին, որ մեկ տարում իրենց հատկացված էր միայն մեկ-երկու միջամտություն Աստծուց:

Նման մտածելակերպի *պատճառով է*, որ մեզնից շատերը մշտապես պատասխաններ չեն ստանում Աստծուց: Միգուցե Նա ինչ-որ հրաշալի բան է արել մեզ համար մեկ շաբաթ առաջ, բայց այսօր մենք մեկ այլ իրավիճակում ենք, և մեզ թվում է, թե չափազանց շատ կլինի, եթե նս մեկ հրաշք խնդրենք Աստծուց: Աստված մեկ անգամ օգնեց մեզ, բայց Նա կարո՞ղ է անել դա նս մեկ անգամ, և այն էլ՝ այսքան շուտ՝ *հիմա:* Մենք նույնիսկ չգիտենք՝ կարո՞ղ ենք համարձակ խնդրել Նրանից:

Սա այն բնագավառն է, որտեղ մենք պետք է մարզենք մեր սպասումը: Արդյոք մենք կհամարձակվե՞նք հավատալ, որ Աստված մշտապես կփրկի մեզ: Կամ՝ բարգավաճում կտա: Կամ՝ կազատի կապանքներից: Այն, ինչ Նա արել է մեզ համար անցյալում, հրաշալի է, բայց չափից շատ չի՞ լինի, եթե մենք կրկին խնդրենք Նրա միջամտությունը: Միգուցե մեր դատողության և ողջամտության պակասը կրկին խնդիրներ է առաջացրել: Միգուցե մենք ձախողվել ենք՝ չդիմանալով գայթակղությանը: *Կարո՞ղ է Աստված օգնել մեզ հիմա:*

Աստվածաշունչն ասում է, որ երբ Աստված նման ակնարկներ լսեց իսրայելցիներից, *Նրա բարկությունը բորբոքվեց:* Պատճառն այն էր, որ Ինքը *շատ մեծ գին էր վճարել* նրանց ազատության համար, և *զարմացած էր, որ նրանք չէին հավա-*

*տում*, որ Ինքը կարող էր կրկին օգնություն ցուցաբերել նրանց ներկա իրավիճակում: Նա ապշած էր, որ նրանք վիճարկում էին Իր սերն իրենց հանդեպ: Դա ապտակ էր՝ ուղղված Աստծուն:

Այս ճշմարտությունը շատ ավելի նշանակալի է մեզ համար այսօր, որովհետև մենք ապրում ենք շնորհքի ժամանակաշրջանում, որն ավելի մեծ է, քան օրենքի ժամանակաշրջանը: Մի՞թե Աստված երկիր չուղարկեց Իր միակ և սիրելի Որդուն մեզ համար: Մի՞թե Հիսուսը չմատուցեց մեծագույն և վերջնական զոհը մեր ազատության համար: Մի՞թե Նրա զոհը ցույց չտվեց, թե որքան է Հայրը սիրում մեզ, և ցանկանում է օգնել ամեն պահի: Մի՞թե հրաշքները դադարեցին այն բանից հետո, երբ Հիսուսը մահացավ և հարություն առավ: Չէ՞ որ Սուրբ Հոգին դեռ կատարում է Իր պաշտոնն այստեղ՝ երկրի վրա: Չէ՞ որ Նա օգնում է մեզ, մխիթարում է և ցույց է տալիս Աստծո կամքը:

***Եթե Աստված փրկեց ձեզ դժոխքից՝ տալով հավիտենական կյանք, երբ ձեր կյանքը լիովին խորտակված էր, ինչո՞ւ եք կարծում, որ այժմ դուք փրկվելու եք ձեր գործերով:*** Մի՞թե հիմա ամեն բան պետք է արվի մեր ուժերով՝ առանց որևէ աստվածային օգնության կամ միջամտության: Մի՞թե Աստված ժլատ դարձավ այն բանից հետո, երբ դուք դարձաք Նրա որդին կամ դուստրը: **Աստված ցանկանում է գործուն մասնակցություն ունենալ ձեր կյանքում ամեն ժամանակ, ամեն ժամ և բոլոր հանգամանքներում:** ***Աստված կփրկի ձեզ հիմա***, ինչպես որ փրկեց ***անցյալում:***

Սաղմոսների գրքում Դավիթն անվարան աղաղակում էր Աստծուն՝ օգնություն խնդրելով: Ամբողջ Սաղմոսների գրքում կարող եք տեսնել, թե որքանով նա կախում ուներ Աստծուց: Նա փնտրում էր Աստծուն՝ նույնիսկ եթե Աստված հենց նոր էր ազատել իրեն զորավոր թշնամուց, երբ հանկարծ մեկ այլ պատուհաս էր գալիս: Դավիթը գիտեր, թե Ում մոտ էր պետք փախչել:

Եվ կարևոր չէր, թե քանի անգամ էր նա ստիպված լինում վազել Նրա մոտ և օգնություն խնդրել. ամեն դժվարին իրավիճակում Նա կրկին փնտրում էր Աստծո երեսը:

Կարդանք Ա Թագավորաց 13.14-ը: Այս խոսքից քիչ առաջ Սամուել մարգարեն հանդիմանել էր Սավուղին՝ նրա ղեկավարելու ձևի համար: Սավուղն ապավինել էր Աստծուն ընդամենը մի քանի անգամ: Մնացած դեպքերում նա ապավինում էր իր ուժերին, իր մտածելակերպին կամ մարդկանց կարծիքներին: Մեկ անգամ նա նույնիսկ փորձեց պատասխան ստանալ կախարդության միջոցով (նույնն է՝ ինչ հմայությունը, սև մոգությունը կամ մահացածների հետ հաղորդակցվելը, բախտագուշակությունը, հորոսկոպները և այլն): Սամուելը հայտարարեց Սավուղին, որ նա այլևս թագավոր չի լինի, որովհետև Աստված փնտրում է Իր սրտի *համեմատ* մարդու: Նոր կտակարանում՝ Գործք 13.22-ում, գրված է, որ Դավիթն Աստծո սրտի *պես* առաջնորդ էր, և որ նա լիովին կատարել էր Աստծո կամքը՝ իր սերնդի համար:

Թեև փոխվել են սերունդները, փոխվել են ժամանակները, և միգուցե փոխվել են նաև ձեր իրավիճակները, բայց **Աստված չի փոխել** Իր նախապայմանը: Նա դեռ փնտրում է Իր սրտի *համեմատ* մարդկանց: Դուք գիտե՞ք, թե ինչ է դա նշանակում: Գիտե՞ք, որ լինել այդպիսին նշանակում է նաև՝ հավատալ, որ Աստված կօգնի ձեզ *հիմա:*

Այն եբրայերեն բառը, որը թարգմանված է *«համեմատ»* բառով, նշանակում է *«ծգտել ինչ-որ վայրի և ապրել այդտեղ հալածանքների ժամանակ, մնալ այդտեղ»:* Այն հունարեն բառը, որը թարգմանված է *«պես»* բառով, այդպիսի իմաստ ունի. *«ծածկվել ինչ-որ բանով և միացած լինել ինչ-որ բանին»:* Սա պարզապես նշանակում է, որ Աստված փնտրում է այնպիսի մարդկանց, ովքեր շարունակ փնտրում են Իր օգնությունը՝ ան-

կախ այն բանից, թե քանի անգամ է Նա օգնել նախկինում: Ուրեմն, Աստծուն հաճելի է, երբ մենք շարունակաբար պահպանում ենք այդ դիրքորոշումը և փնտրում ենք Նրա օգնությունը մեր կյանքի ամեն բնագավառում: **Նա *երբեք չի հոգնում* ձեզնից, երբ խնդրում եք Նրա օգնությունը**: Նա երբեք չի հոգնում ձեզ փրկելուց և ձեզ համար պայքարելուց: Նա **տհաճություն է զգում**, երբ **մենք շարունակաբար միացած չենք** Նրան և ծածկված չենք Նրանով ամեն իրավիճակում: Նա ցանկանում է լինել ձեր Հայրն ամեն ինչում: Նա ցանկանում է և՛ սովորեցնել, և՛ օգնել ձեզ:

Ես ցանկանում եմ, որ ուշադրություն դարձնեք ևս մեկ փաստի, որը շատ կարևոր է: Գործք 13.22-ում Ղուկասը, ով այս գրքի հեղինակն է, շարունակում է՝ ասելով, որ եթե մենք Աստծո սրտի պես մարդիկ լինենք, կկարողանանք կատարել Նրա կամքը մեր կյանքում և մեր սերնդի մեջ: Նշանակում է՝ եթե մենք շարունակաբար ***չխնդրենք և չակնկալենք*** Նրա օգնությունը և առաջնորդությունն ամեն իրավիճակում, մենք ***չենք կարողանա կատարել Նրա կամքը:*** Եթե դուք քրիստոնյա եք, սա շատ կարևոր է, որովհետև դուք ցանկանում եք մշտապես Նրա կամքի մեջ լինել:

Զարմանալի է, որ եթե մենք չհավատանք, որ Աստված կարող է ինչ-որ բան անել *հիմա*, մեր անհավատությունը, որքան էլ աննշան թվա, կարող է հեռացնել մեզ Աստծո կամքից: Պատճառն այն է, որ մենք սահմանափակում ենք Աստծո ձեռքը մեր կյանքում, և շատ հավանական է՝ նաև այլ մարդկանց կյանքերում: Մենք որոշում ենք, որ մեր ուժերը կամ մեր գործելակերպն ավելի լավն են, քան Տիրոջ ճանապարհը: Երբ ուրանում ենք այն գործի զորությունը, որը Հիսուսը կատարել է մեզ համար Խաչի վրա, մենք որոշում ենք մնալ շփոթության և հանգամանքների գերության մեջ: Դրանով մենք երես ենք թեքում այն սիրուց, որը Հայրը ցանկանում է ամեն ժամանակ շնորհել մեզ:

ժխտելով, որ Նա ցանկանում է ինչ-որ բան անել մեզ համար *հիմա*՝ մենք մեծ վնաս կհասցնենք մեր և Աստծո հարաբերություններին: Գործք 13.36-ը պնդում է, որ Դավիթը ծառայեց իր ամբողջ սերնդին Աստծո կամքով: Եթե հետևենք Դավթի օրինակին, ***մեր հնազանդությունը և սպասումը կարող են ազդել մի ամբողջ սերնդի վրա:*** Մենք կարող ենք անել սա, եթե ամբողջովին ծածկված լինենք Աստծով և միացած լինենք Նրա սրտին ամեն նեղության կամ հանգամանքի մեջ: Միգուցե դուք երկրի ղեկավար չեք, բայց ձեր ընտանիքի ղեկավարն եք: Ձեր գործերը և սպասումը Տիրոջից՝ կարող են ազդել ձեր երեխաների և թոռների վրա:

Հիշե՛ք, որ մեր սահմանափակումները որևէ կերպով չեն ազդում Աստծո վրա: Դուք չեք կարող կարճացնել Աստծո ձեռքը ձեր կյանքում թերարժեքության բարդույթի կամ ձեզ հետ պատահած որևէ դժբախտության պատճառով: Կյանքում կլինեն անհաջողություններ, հիասթափություններ, խոչընդոտներ և նեղություններ: Բայց Աստված **հենց այս պատճառով** է Փրկիչ տվել ձեզ: Նա ցանկանում է, որ մենք հեռացնենք ամեն սահմանափակում և հավատանք Նրան *հիմա:* Հեռացրե՛ք աչքակալները ձեր աչքերից և մո՛ւտք գործեք ձեր արդարության մեջ՝ որպես Աստծո որդի կամ դուստր: **Ապավինե՛ք Նրան *հիմա* և քայլե՛ք Նրա զորությամբ**:

# Գլուխ 3

# Նրանից *առանձի՞ն*, թե՞ *Նրանում*

Ավելի վաղ ես նշեցի, որ հաճախ մարդիկ կասկածում են, որ Աստված ինչ-որ բան է ցանկանում անել *իրենց* համար, քանի որ անհարմար են զգում իրենց, երբ խնդրանքներ են ներկայացնում Նրան: Պատճառն այն է, որ նրանք ձգտում են կատարել *իրենց* ցանկությունները, փոխարենը լիովին ձգտեն, որ *Աստծո* ցանկությունները կատարվեն իրենց կյանքում: Նման վերաբերմունքը գալիս է Աստծո հետ ժամանակ չանցկացնելուց, Նրա բնավորությունը չճանաչելուց և Նրա կամքը չհասկանալուց: Աստծուն սահմանափակելու ձևերից մեկն այն է, որ մենք ցանկանում ենք ապրել *մեր* ձևով և ձգտում ենք *մեր* ցանկություններին, փոխարենը՝ ձգտենք այն ամենին, ինչ Նա է ցանկանում մեզ համար:

Տարիներ առաջ, երբ քարոզվում էր բարգավաճման մասին ուղերձը, որոշ ուսմունքներ այդ մասին մի փոքր շեղվեցին ճշմարտությունից: Այո՛, Աստված *հոգում է* ձեր կարիքները և *ցանկանում է*, որ դուք առողջ և հաջողակ լինեք: Նա չի ցանկանում, որ ինչ-որ մեկը պարտքերի ծառա դառնա: Այնուամենայնիվ, Աստված *չտվեց* բարգավաճման ուղերձը, որպեսզի մենք հարստություն կուտակենք մեզ համար: **Նա ցանկանում է, որ մենք բարգավաճենք, որպեսզի օրհնենք այս աշխարհի մարդկանց**: Այլ կերպ ասած՝ Նա ցանկանում է, որ դուք հարուստ լի-

նեք, որպեսզի ազատորեն հոգաք այս աշխարհի կարիքները և ֆինանսավորեք մարդկանց համաշխարհային հունձքը: Նա չի ցանկանում, որ դուք բախվեք դժվարությունների՝ այդ գործը կատարելիս, հայտնվեք ծանր հանգամանքներում կամ կախվածություն ունենաք այլ մարդկանցից: Նա ցանկանում է, որ մենք համախմբված՝ մեկ մարդու պես, ուղարկենք և ֆինանսավորենք Ավետարանի ուղերձը աշխարհով մեկ:

Փողը շատ կարևոր թեմա է Ավետարաններում. Հիսուսը խոսեց ավելի շատ այս մասին, քան Երկնքի: Այն, թե ինչպես ենք մենք օգտագործում մեր միջոցները, մեծ կապ ունի մեր սրտի, մեր հոգևոր վիճակի և մեր գործերի հետ:

Գիտելիքն այն մասին, որ Հիսուսը շեշտադրում էր փողի հետ ճիշտ վարվելը, պետք է շատ բան ասի մեզ: Այնուամենայնիվ, մարդիկ, ովքեր չէին ճանաչում Աստծո բնավորությունը, չհասկացան այս ճշմարտությունը, ինչպես նաև՝ բարգավաճման հոգևոր սկզբունքները: Նրանք փորձում էին հարստություն կուտակել իրենց համար և հավատում էին Աստծուն միայն շքեղ կյանքի և նյութական հարմարավետության համար՝ անարգելով բարգավաճման իրական նպատակը: Նրանք ավելի շատ ուրախանում էին նոր մեքենայի համար, քան մեկ այլ երկրում հարյուր վերստին ծնված մարդկանց համար:

Այդ մարդիկ փորձեցին օգտագործել Աստծուն ինքնագործող սարքի պես՝ տալով իրենց միջոցները միայն Նրան և սպասելով հունձքի: Տալը և ստանալը՝ **հոգևոր ճշմարտություն է**, բայց քանի որ այդ մարդիկ չգիտեին Աստծո բնավորությունը, այդպես էլ չկարողացան վեր բարձրանալ իրենց ցանկասիրությունից: Երբ նրանք չստացան այն, ինչի համար հավատում էին, նրանք հուսախաբ եղան՝ գալով այն եզրակացության, որ բարգավաճման ուղերձը խաբեություն է: Այդ ուղերձը ճշմարիտ է. սխալմունքն այդ

մարդկանց սրտերում էր: Նրանք փորձում էին վերցնել հոգևոր սկզբունքը և գործադրել այն *Նրանից առանձին*, ոչ թե *Նրանում*:

Հիշե՛ք՝ **հավատքը գործում է, երբ հայտնի է Աստծո կամքը**: Եթե դուք չգիտեք Աստծո բնավորությունը և սիրտը, այդպես էլ չեք հասկանա Նրա ուղերձի հիմքում ընկած ճշմարիտ նպատակը: Երբեմն մարդիկ փորձում են գործել առանց Աստծո կամքի, փոխարենը հավատք ունենան Նրա կամքի *մեջ:* Մեր սպասումը կամ հավատքը պետք է մշտապես լինի Աստծո *մեջ*, ոչ թե ուղղված լինի *մեր* ցանկություններին: Աստված տալիս է մեր սրտի ցանկությունը, բայց դա տեղի է ունենում միայն՝ երբ մեր սիրտը *միացած է* Նրան և Նրա կամքի *մեջ* է: Նա չի գործի Իր բնավորությանը հակառակ՝ տալով ձեզ այնպիսի բաներ, որոնք միայն *ձեր* կամքը գոհացնելու համար են: Երբ դուք ճանաչեք Նրան, կարող եք լիարժեք կերպով ակնկալել, որ կստանաք ձեր խնդրածը, քանի որ դուք *ճանաչում եք* **Նրա կամքը**: Այս ճանաչողությունը հնարավոր է ձեռք բերել միայն մտերիմ հարաբերությունների շնորհիվ: **Երբ մենք մտերմորեն շփվում ենք Նրա հետ, և երբ լիովին կառչած ենք Նրանից, Նա կոչում է մեզ Իր ընկերը**: Այդ ժամանակ է, որ մենք անսասան վստահություն կամ սպասում ենք ունենում: Մենք վստահություն ենք ստանում, որ գործում ենք Նրա հետ, և լիարժեք հանգիստ ենք ապրում Նրա սիրո մեջ: Արդյունքում՝ մենք վայելում ենք Նրա խաղաղությունը մեր կյանքում և մարդկանց մաքուր սրտով առաջնորդում ենք դեպի Աստված:

## ՈՉ ԹԵ ԱՄԵՆ... ԱՍՈՂԸ

Մատթեոս 7.21-23-ում մի հետաքրքիր ճշմարտություն է գրված.

*«Ոչ թե ամեն Ինձ Տե՛ր, Տե՛ր ասողը կմտնի Երկնքի արքայությունը, այլ նա, ով կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է:*

*Շատերը կասեն Ինձ այն օրը, Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք, և Քո անունով դևեր հանեցինք, և Քո անունով շատ զորություններ գործեցինք:*

*Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե «Երբեք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ»»:*

Այս մարդիկ հրաշագործություններ էին արել: Միգուցե նրանք մեծ շենքեր էին կառուցել, հարյուրավոր գրքեր էին գրել կամ նույնիսկ մեծ հեռուստատեսային ծառայություններ էին հիմնադրել: Պարզ երևում է, որ նրանք մարգարեացել էին և դևեր էին հանել: Նրանք գործել էին այս ամենը այն զորության պարգևներով, որոնք Հիսուսը տվել էր՝ երբ նրանք վերստին ծնվել էին:

Երբ Աստված պարգևներ է տալիս, դրանք **մնում են** մարդու հետ ամբողջ կյանքում, **անկախ այն բանից**՝ այդ մարդը շարունակո՞ւմ է մտերիմ լինել Աստծո հետ, թե՞ ոչ: Պատճառն այն է, որ Աստված ***ազնիվ է*** (անկախ այն բանից՝ մենք ազնի՞վ ենք, թե՞ ոչ), և երբ Նա ինչ-որ բան է տալիս մեզ, դա մնում է մեզ հետ: Եփեսացիների 4.12,13-ում գրված է, որ Նա պարգևներ է տալիս, որպեսզի Քրիստոսի մարմինը հասունանա, քաջալերվի և վերապրի Նրա փառքը:

**Մտածե՛ք, թե ինչ տեղի կունենար ձեզ հետ, եթե Աստված ետ պահեր ձեզնից Իր փառքն ինչ-որ մեկի սխալ կենսաոճի պատճառով**: Մի՞թե ուրախ չեք, որ Նա այդպես չի վարվում: Դժբախտաբար, շատերը **թյուրըմբռնում ունեն հենց այս հարցում**: Նրանք **հրապուրվում են այն փառքով**, որն ստանում են **որևէ ծառայողի պարգևից**, և **երբ բացահայտվում է, որ այդ ծառայողն ապրում է մեղքի մեջ, նրանք հիասթափվում են Աստծուց, այդ ծառայությունից և, ի վերջո, եկեղեցուց**: Նրանք սահմաններ են կառուցում իրենց շուրջը, արգելքներ են դնում իրենց և Աստ-

ծո միջև, և այլևս թույլ չեն տալիս Աստծուն մուտք գործել իրենց կյանք: **Նրանք չեն հասկանում, որ փառքը, որն իրենք վերապրում են, *Աստծուց է*, ոչ թե ծառայության պարգևից**: Աստված այնքա՛ն խորապես է սիրում մարդկանց, որ ցանկանում է, որ Իր փառքը վերապրելը չսահմանափակվի ոմանց սխալներով և մեղքերով: Աստծուն վերապրելը *բխում է Աստծուց,* ոչ թե որևէ մարդուց կամ պարգևից: *Անմտություն է* **սահմանափակել** կամ թողնել **Աստծուն** *մարդու* **ձախողման պատճառով**: Իմաստունը հրապուրվում է *Աստծով*, ոչ թե ծառայության պարգևով:

Ճիշտ է, որ մարդիկ օրհնված կլինեն՝ նույնիսկ եթե ծառայության պարգևով օժտված մարդն արատավորի իր անձը, բայց Աստված չի ծաղրվում. **գոյություն ունի գին, որը պետք է վճարել Աստծո պարգևների և Նրա անունով գործելու համար**: Մատթեոս 7-րդ գլխում գրված է, որ այս մարդիկ օգտագործում էին Նրա անունը, բայց չէին ճանաչում Նրան:

Ես ուզում եմ, որ ուշադրություն դարձնեք այս հատվածի ամենակարևոր գաղափարին: **Չնայած նրանց բոլոր բարի գործերին՝ Հիսուսը սարսափ ներշնչող մի բան ասաց.** *«Երբեք ձեզ չե՛մ ճանաչել»:* Այլ կերպ ասած՝ այս մարդիկ **հավատում էին իրենց անձերին** և այն ամենին, ինչ իրենք կարող էին անել **իրենց ուժերով, պարգևներով և գիտելիքով**: Նրանք հավատում էին իրենց գործերին, իրենց ուժեղ անհատականությանը, իրենց գործարար ըմբռնմանը, իրենց քարոզներին՝ դրական մտածելակերպի մասին, բայց նրանք չունեին հավատք Աստծո հանդեպ: Այս մարդիկ (և Խոսքն ասում է, որ *«շատերն»* են այդպիսին) բարի գործեր էին անում՝ շնորհիվ *իրենց* մտավոր կարողությունների և ուժեղ անհատականության: Նրանք հազվադեպ էին հարցնում, թե ինչ էր *Նա* ցանկանում: Մարդը կարող է աղոթել, բայց միևնույն է՝ չհաղորդակցվել Տիրոջ հետ: Նման աղոթքը միակողմանի

է. այդպես աղոթող մարդը երբեք չի լսում Նրա կամքը կամ Նրա կարծիքը որևէ հարցի վերաբերյալ: Այսպիսով, նման մարդիկ երբեք չեն հաղորդակցվել Աստծո հետ մշտական և մտերիմ կերպով: Նրանք ճշմարտապես չեն ճանաչել Նրա բնավորությունը և այն, ինչ կա Նրա սրտում: Նրանք աշխատանք չեն տարել իրենց սրտի հետ՝ դրանք ենթարկվող, գործածելի և զգայուն դարձնելու համար, որովհետև նրանք ժամանակ չեն անցկացրել և չեն լսել, թե ինչ է Նա ցանկացել ասել: Նրանք միայն ճանաչել են Աստծո տված պարգևները և այն զորությունը, որը ստացել են այդ պարգևների հետ:

Աստծո թագավորության մեջ ճշմարիտ ձևով գործելու համար պահանջվում է ավելին, քան պարգևներ և գործարար հմտություններ: Անհրաժեշտ է վարվել Աստծո **սրտի** և **բնավորության** համեմատ, որպեսզի հաճելի լինեք Նրան: Ջեզանում հավատք կամ սպասում է առաջանում, երբ Աստծո սիրտը և բնավորությունը ձևավորվում են ձեր ներսում, որովհետև դուք ***ճանաչում եք*** Աստծուն հենց այս երկուսի շնորհիվ: Նա դառնում է ձեր Ընկերը, և դուք ***լսում եք*** Նրան, ***վստահում եք*** Նրան և ***կատարում եք այն, ինչ Նա պատվիրում է:*** Դուք չեք փորձում *թագավորություն կառուցել* **ձեր ձևով**, քանի որ այդպես դուք միայն կմեծարեք **ձեր անձը**:

Թույլ տվեք նշել, որ կան աստվածավախ տղամարդիկ և կանայք, ովքեր կառուցում են մեծ եկեղեցիներ, գրում են տասնյակ գրքեր և ղեկավարում են մեծ հեռուստատեսային ծառայություններ՝ ապավինելով *միմիայն* Տիրոջը: Այնուամենայնիվ, շատերն այդպիսին չեն: Թույլ տվեք շրջասության ենթարկել այն, ինչ Հիսուսն ասաց այն մարդկանց, ովքեր որոշեցին չվստահել Իրեն: «Դու Իմ ընկերը չես: Ես չեմ ճանաչում քեզ: Դու ապավինել ես քո **ցանկություններին** և քո **կարողություններին**՝ Ինձ ապա-

վինելու փոխարեն: Այժմ հեռացի՛ր Ինձնից, որովհետև դու **անօրինություն և ծածուկ մեղքեր գործող մարդ ես»:**

## ԱՍՏԾՈ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Ես օգտագործում եմ այս աստվածաշնչյան խոսքերը, քանի որ ցանկանում եմ, որ դուք հասկանաք Աստծո հետ շփվելու և Նրան մտերմորեն ճանաչելու կարևորությունը: Ես ուզում եմ, ***որ դուք ճանաչեք*** Նրան և լինեք Նրա ընկերը: Մի՛ տարվեք ձեր ցանկություններով և ճանապարհներով: Հաջորդ անգամ, երբ մտածեք, թե արդյո՞ք Աստված կանի *ձեզ համար* այն, ինչ խնդրում եք Նրանից, ստուգե՛ք ձեր դրդապատճառները: Ո՞րն է ձեր կասկածների պատճառը: Դուք ժամանակ անցկացրե՞լ եք Նրա հետ: Դուք եղե՞լ եք Նրա ներկայության մեջ, որտեղ ուրախության լիություն է, և որտեղ Նա կարող է հայտնել Իր կամքը, և դուք կարող եք ճանաչել այն: Երբ Նրա ներկայության մեջ լինեք, դուք կիմանաք՝ արդյոք Նա կտա՞ ձեզ այն, ինչ ցանկանում եք: Դուք լիարժեք վստահություն կունենաք, և արդյունքում՝ մեծ սպասում, կամ կիմանաք, որ Նրա կամքը չէ, որ դուք հիմա ստանաք այն, ինչ խնդրում եք:

**Ինչո՞ւ ենք սահմաններ կառուցում, շրջաններ գծում և արգելքներ դնում՝ սահմանափակելով Նրան:** Եթե մենք ուշադրություն դարձնենք մեր սրտի *ճշմարիտ դրդապատճառներին*, կտեսնենք, որ չունենք **հավատք *Նրա հանդեպ:*** Մեր **սահմանափակումները հիմնված են** մեր մտավոր **աչքակալների, եսասիրական դիրքորոշումների և մեղավոր ցանկությունների** վրա:

Աստված շատ լուրջ է վերաբերվում Իր և ձեր հարաբերություններին: Ժամանակն է, որ ***հեռացնենք ամեն սահմանափակում*** (սահմանափակում է համարվում նաև այն, որ մենք

թույլ չենք տալիս Աստծուն մուտք գործել մեր կյանք, որովհետև ցանկանում ենք ապրել մեր ձևով): Արագորեն հեռացրե՛ք ձեր դրած արգելքները և թո՛ւյլ տվեք, որ Նա մուտք գործի ձեր կյանք: ***Եթե դուք սկսում եք տեսնել այն սահմանափակումները, որոնք հեռացրել են Նրան ձեզնից, ներողությո՛ւն խնդրեք Նրանից և բացե՛ք ձեր սրտի դուռը՝ կատարելով անհրաժեշտ փոփոխություններ ձեր կյանքում:*** Սկսե՛ք **հաղորդակցվել Նրա հետ** և **վայելե՛ք ձեր փոխադարձ շփումը**: Դուք չպետք է վախենաք կամ սարսափեք Նրանից: Նա խորապես սիրում է ձեզ և օրհնությունների ճանապարհ է պատրաստել ձեզ համար: Աստծո ճանապարհը և կամքը՝ կատարյալ ընտրություն է: ***Ընդունե՛ք Նրա կամքն այսօր և սկսե՛ք ճշմարտապես ապրել***:

## Գլուխ 4

# Աստծո անսահման էությունը

Երբ դուք վերստին ծնվեցիք, Աստված ուխտ կնքեց ձեր և Իր միջև: Նա խոստացավ երբեք չթողնել ու չլքել ձեզ: Նա խոստացավ ձեզ օրհնություններ՝ նեղությունների և փորձությունների ժամանակ: Բացի այդ, Նա տվել է մեզ մի շարք նկարագրություններ այն մասին, թե ինչպես է վերաբերվելու մեզ ամեն ժամանակ և բոլոր հանգամանքներում: *Յոթ* թիվն Աստվածաշնչում՝ Աստծո *կատարյալ թիվն* է: Այն խորհրդանշում է, որ Նա *լիարժեք և կատարյալ Փրկիչ է:* Նրա յոթ փրկարար անունները, որոնք վերաբերում են Նրա ուխտին, լրացնում են **մարդու բոլոր կարիքները**:

Պատվիրելով մեզ քարոզել Ավետարանը բոլոր ազգերին՝ Հիսուսը խրախուսում էր մեզ՝ կորսված և մահացող աշխարհին պատմել Նրա մեծ փրկության, այսինքն՝ Նրա ուխտի յոթ անունների մասին: Նա պատվիրեց մեզ **ազդարարել Բարի լուրն** այն մասին, թե ինչպես է հոգալու մեր բոլոր կարիքները: Մենք պետք է **սովորեցնենք այս աշխարհի մարդկանց հեռացնել այն սահմանափակումները**, որոնք նրանք կառուցել են իրենց կյանքերի և երկրների շուրջ, և **թույլ տալ, որ Աստծո ուխտն օրհնի, բժշկի, ազատագրի և բարգավաճում տա նրանց**:

Աստված հայտնի է շատ այլ անուններով, օրինակ՝ Առավոտյան Պայծառ Աստղ, Ալֆա և Օմեգա, Դաշտի Շուշան, Վարդ, Լույս, Գառ և այլն: Նրա յոթ փրկարար անունները խիստ կարևոր նշանակություն ունեն հավատացյալների համար: Այս անունները հստակ **պատկերում են** Նրա ուխտը մեզ հետ, և մենք պետք է **երբեք չսահմանափակենք Նրա փրկարար աշխատանքը** մեր կյանքում:

Կարդալով այս անունները՝ գնահատե՛ք ձեր ներկա հանգամանքները և մտածելակերպը: Միգուցե դուք սահմանափակե՞լ եք Աստծուն այս բնագավառներից որևէ մեկում: Եթե որևէ սահմանափակում գտնեք, անպայման մի կողմ դրեք այս գիրքը և հեռացրե՛ք այն, այնուհետև շարունակեք:

Աստված չի թողել մեզ խավարի մեջ: Նա հստակ ցույց է տվել, թե ինչպես է ցանկանում օգնել մեզ և ցուցաբերել Իր սերը մեր հանդեպ: Մենք կարող ենք ավելի լավ հասկանալ Նրա վերաբերմունքը մեր հանդեպ՝ ուսումնասիրելով Նրա յոթ փրկարար անունները:

## ԵՀՈՎԱ ՇԱՄՄԱ

«**Եհովա Շամմա**» անունը նշանակում է՝ «Տերը ներկա է»: Աստված ուխտ է կնքել ձեր՝ Աստծո որդու կամ դստեր հետ, որ ***երբեք չի թողնի ձեզ***՝ անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունենում ձեր շուրջը, ինչպես են մարդիկ վարվել ձեզ հետ կամ ինչ կորուստներ եք ունեցել: Թեկուզ մարդիկ հալածեն և լքեն ձեզ, Աստված խոստացել է, որ միշտ ձեզ հետ է լինելու: Ինչպիսի՜ անմտություն կլինի սահմանափակել Նրան այս բնագավառում՝ մտածելով, որ դուք միայնակ եք, և փորձելով գործել առանց Նրա ներկայության և առաջնորդության:

***Եհովա Շամման ուխտի անուն է, և ովքեր պատկանում են Աստծուն, ստացել են այս հավիտենական խոստումը Նրանից:*** Թույլ մի՛ տվեք, որ մեղքի զգացումը ձեր մեջ սահմանափակի այս խոստումն ստանալու կարողությունը: Մի՛ եղեք չափազանց անվճռական, և թույլ մի՛ տվեք, որ թշնամին այն աստիճան դատապարտի ձեզ, որ չկարողանաք վայելել Աստծո ուխտի այս կողմը: Աստված ցանկանում է լինել ձեր Ընկերը, Ով ներկա է ձեր կյանքի ամեն իրավիճակում:

# ԵՀՈՎԱ ՇԱԼՈՄ

«**Եհովա Շալոմ**» անունը նշանակում է՝ «Տերը մեր խաղաղությունն է»: Եսայի 26.3-ում գրված է. *«Դու կատարյալ խաղաղության մեջ կպահես նրան, ով շարունակ Քո մասին է մտածում, որովհետև նա վստահում է Քեզ» (*KJV): Խաղաղությունն ***իրավամբ*** պատկանում է հավատացյալներին՝ իրենց ***ուխտի հիման վրա:*** Այս աստվածաշնչյան հատվածը սովորեցնում է մեզ, որ ***եթե շարունակ մտածենք Նրա խոսքի, Նրա սրտի և Նրա բնավորության մասին, մենք կարող ենք վստահ լինել, որ Նա կունենա Իր վերջին արդար խոսքը մեր կյանքի ամեն իրավիճակում:*** Սա նշանակում է՝ ձեր գործերին հավատալու փոխարեն ***հավատալ Աստծուն:*** **Կարևոր չէ, թե ինչ են հաղորդում լուրերի հերթական թողարկմամբ.** Աստվա՛ծ է ձեր խաղաղությունը: **Կարևոր չէ, թե ինչ են ասում բժիշկները.** Աստված է ձեր խաղաղությունը: **Միգուցե դուք սխալ եք գործել, և այժմ ամեն ինչ խառնաշփոթի է վերածվել**, բայց եթե ***ապաշխարեք և ի սրտե դառնաք*** Նրան, դուք ***կարող եք վստահություն և խաղաղություն ունենալ***, որ ամեն ինչ բարեհաջող կավարտվի:

***Խաղաղությունը պատկանում է նրանց, ովքեր մուտք են գործում դրա մեջ:*** Եթե դուք վախի մեջ եք, նշանակում է՝ սահմա-

նափակել եք Աստծո սերը ձեր կյանքում: Դուք խաղաղություն չեք ունենա, եթե լսեք ձեր և այլ մարդկանց մտքերը, կամ՝ եթե սահմանափակեք Աստծուն: Իրականում, ***խաղաղության բացակայությունը՝ շատ լավ ցուցանիշ է, որով կարող եք որոշել, թե արդյո՞ք դուք սահմանափակել եք Աստծուն ձեր կյանքի որևէ բնագավառում***: Եթե այսօր դուք խաղաղություն չունեք, դա նշան է, որ դուք շրջան եք գծել Աստծո շուրջը, կապել եք Նրա ձեռքը, արգելք եք դրել՝ թույլ չտալով Նրան անցնել այն, և սահմաններ եք կառուցել Նրա առջև:

Եսայի 26.12-ում գրված է. *«Ով Տեր, Դու կհաստատես մեզ համար խաղաղությունը, որովհետև մեր բոլոր գործերն էլ Դու գործեցիր մեզ համար»:* Այլ կերպ ասած՝ ***եթե դուք հաղորդակցվել եք Աստծո հետ, լսել եք Նրա կամքը և հետևել եք դրան, դուք կարող եք խաղաղ լինել:*** Թեկուզ թվա, որ ձեր միջոցները բավական չեն, իսկ ճանապարհը նեղ է, ***եթե ձեր գործերը հիմնված են Աստծուն հնազանդվելու վրա, դուք իրավամբ կարող եք խաղաղություն ունենալ՝ համաձայն ձեր ուխտի:*** Այնպես որ, տրամաբանական է, որ նրանք, ովքեր սահմանափակում են Աստծուն՝ կատարելով իրենց կամքը, ընկճված և անհանգիստ են: Հնազանդվե՛ք Տիրոջը՝ Նրան, Ով խորապես սիրում է ձեզ և հոգում է ձեզ համար: Կատարե՛ք այն, ինչ Նա պատվիրում է, և ուղղե՛ք ձեր միտքը դեպի Նրա Խոսքը, որն արտացոլում է Նրա կամքը և բնավորությունը: Եթե այսպես վարվեք, դուք կատարյալ խաղաղություն կունենաք:

## ԵՀՈՎԱ ԻՐԵ

«**Եհովա Իրե**» անունը նշանակում է՝ «Տերը կմատակարարի»: Աստված զոհ ***մատակարարեց*** Իր Որդու՝ ***Հիսուս Քրիստոսի*** միջոցով: Այդ ***Զոհը՝ աշխարհի փրկությունն*** էր: Այն երաշխավորեց, որ մենք կստանանք այն ամենը, ինչի համար Հիսուսը մահա-

ցավ, և սա չի սահմանափակվում միայն նյութական կարիքներով: Այս ուխտի անունը նշանակում է, որ Աստված ***կմատակարարի մեզ այն, ինչի կարիքը ունենք*** ամեն իրավիճակում, ամեն հանգամանքում և ամեն ժամանակ: Եթե Նա սննդարար մանանա տվեց Իսրայելի զավակներին անապատում, Նա կանի նույնը նաև ձե՛զ համար: Մի՛ սահմանափակեք այս ուխտը միայն փողով: Աստված կմատակարարի այն առաջնորդությունը, որի կարիքը ունեք, այն խաղաղությունը, որի կարիքը ունեք, և այն խոսքերը, որոնց կարիքը ունեք. մի խոսքով՝ այն ամենը, ինչի կարիքը ունեք, քանի դեռ դուք Նրանից եք սպասում ձեր պատասխանը:

## ԵՀՈՎԱ ՆԻՍՍԻ

«**Եհովա Նիսսի**» անունը նշանակում է՝ «Տերը մեր դրոշն է»: Երբևէ մտածե՞լ եք, թե ինչու են ազգերը և բանակները դրոշներ կրում: Դրոշը՝ ***հաղթանակի խորհրդանիշ է: Տերը դրոշ է բարձրացրել մեր կյանքում***՝ համաձայն Իր ուխտի՝ ***որպես հաստատ հաղթանակի նշան:*** Թշնամին տեսնում է այս դրոշն Աստծո հետ ուխտ ունեցող մարդկանց կյանքում և համակվում է ***վախով ու դողով:*** Պատճառն այն է, որ Հիսուսը մեկընդմիշտ ***պարտության մատնեց հոգևոր իշխանություններին և զորություններին*** Իր խաչի մահով և հարությամբ, և ***բացահայտ խայտառակեց նրանց*** (տե՛ս Կողոս. 2.15):

Դավիթը գիտեր, որ Տիրոջ այս փրկարար անունը կանչված է իր վրա: Այնպես որ, Նա հարցրեց ինքն իրեն Սաղմոս 42.5-ում. *«Ինչո՞ւ ես տրտում, ո՛վ իմ անձ, և շփոթված ես ինձանում: Աստծո՛ւն հուսա...»* : Այլ կերպ ասած՝ Աստծո հետ ուխտի շնորհիվ այս հաղթանակի դրոշը բարձրացված էր նրա կյանքում: Ինչո՞ւ նա պետք է ընկճվեր, վհատվեր և հուսահատվեր: Ակնհայտ էր, որ եթե Դավիթը հույս ունենար կամ ակնկալեր, որ Տերը

կատարելու էր Իր ուխտը, նրա հաղթանակն ապահովված էր: **Կարևոր չէ, թե որքան դժվար էր թվում պայքարը, կամ թե որքան էր այն տևելու:** Դրա արդյունքն արդեն որոշված էր. ***հաղթանակն անխուսափելի էր:***

Սաղմոս 20.5-9-ում՝ «էմփլիֆայդ» թարգմանությունից, Դավիթը խոսում է այս ուխտի անվան՝ Եհովա Նիսսիի մասին: Նա գրում է.

*«Մենք [աղաղակներով] հաղթանակ կտոնենք Քո փրկության և հաղթանակի ժամանակ, և մեր Աստծո անունով կբարձրացնենք մեր դրոշները: Թող Տերը կատարի քո բոլոր խնդրանքները:*

*Հիմա ես գիտեմ, որ Տերը փրկում է Իր օծյալին. Նա կպատասխանի նրան Իր սուրբ երկնքից՝ Իր աջ ձեռքի փրկարար ուժով:*

*Ոմանք վստահում են կառքերին, և ոմանք՝ ձիերին, և պարծենում են դրանցով, բայց մենք կվստահենք մեր Տեր Աստծո անվանը և կպարծենանք դրանով:*

*Նրանք խոնարհված և ընկած են, բայց մենք բարձրացել ենք և ուղիղ կանգնած ենք:*

*Ո՛վ Տեր, հաղթանա՛կ տուր. թող Թագավորը պատասխանի մեզ, երբ մենք կանչենք»:*

Դավիթը ***մուտք էր գործում*** Տիրոջ հետ ունեցած ***ուխտի մեջ՝ հավատալով*** իր ***ապագա հաղթանակներին:*** Այս ուխտի անունը երաշխավորում է մեզ, որ վստահելով Նրան՝ մենք երբեք ամոթով չենք մնա: Այս հատվածը ցույց է տալիս, որ թեև **ոմանք վստահում են իրենց կարողությանը**, սակայն ***Տիրոջ հետ ուխտ ունեցողները վստահում են Նրա զորեղ ձեռքին:*** Որքա՜ն ողբերգական կլինի, եթե դուք սահմանափակեք Աստծուն ձեր ուխտի այս բնագավառում: Որքա՜ն ցավալի կլինի, եթե չիմանաք, որ

հաղթանակը պատկանում է ձեզ, ընկճված լինեք` մտածելով, որ ամեն ինչ կորսված է, և ցանկանաք, որ ամեն բան շուտ ավարտվի. *հաստատ կանգնեք:* Հեռացրե՛ք սահմանափակումները ձեր մտքից և սրտից ու նայե՛ք Եհովա Նիսսիին` ձեր Հաղթական դրոշին: **Կարևոր չէ, թե ինչ դժվարություններ ունեք այսօր**: Միգուցե ձեր ամուսինը խորը վիրավորանք է հասցրել ձեզ. միգուցե ձեր կինն ուզում է հեռանալ, կամ միգուցե ձեր երեխաներն ապստամբում են ձեր դեմ: Կարևոր չէ, թե ինչին եք բախվել: Աստված չասաց, որ Նա կլինի ձեր հաղթանակը միայն որոշ իրավիճակներում: **Նա ցանկանում է ցույց տալ ձեզ Իր ուխտը**: Նա ցանկանում է ցույց տալ Իր մեծ սերը ձեր հանդեպ: ***Հեռացրե՛ք այն սահմանափակումները, որոնք կառուցել եք Աստծո շուրջը, և հռչակե՛ք ձեր ուխտը ձեր ներկա իրավիճակում:***

Սաղմոս 60.4-ում գրված է. *«Բայց Քեզնից վախեցողներին դրոշակ տվիր, որ ճշմարտության համար բարձրացնեն»:* Ճշմարտությունն այն է, որ Աստված ***հավիտյան հռչակել է*** Իր անունը ձեզ վրա` որպես ***հաղթական դրոշ,*** և սա գործում է այն մարդկանց կյանքում, ովքեր ***հեռացնում են բոլոր սահմանափակումները*** և ***ընդունում են Նրա սերը*** այս մեծ խոստման միջոցով:

## ԵՀՈՎԱ ՑԻԴԿԵՆՈՒ

«**Եհովա Ցիդկենու**» անունը նշանակում է` «Տերը մեր արդարությունն է»: Այս ուխտի անվան մասին կարելի է մի ամբողջ գիրք գրել: ***Կրելով մեր մեղքերը խաչի վրա` Հիսուսն իրագործեց այն, ինչ խորհրդանշում է այս ուխտի անունը:*** Գրեթե 1.500 տարվա ընթացքում Աստված անցնում էր Իսրայելի մեղքերի վրայով, բայց ***Հիսուս Քրիստոսը***` վերջնական Արյան Զոհը, որը շատ ավելի գերազանց էր զոհաբերվող ցլերից և այծերից, ***հա-***

*վիտյան մաքրեց մարդու սիրտը:* Մեզնից միայն պահանջվում էր հավատալ Նրա կատարած աշխատանքին և ընդունել այն: Այնուամենայնիվ, հավիտենական կյանքն ստանալուց հետո մեր մեծագույն կարիքն այն էր, որ կարողանայինք *կանգնել Հոր ներկայության մեջ*՝ առանց մեղքի, դատապարտության կամ թերարժեքության զգացումների: Ահա թե ինչու մենք ստացանք Աստծո արդարության պարգևը:

Թեև *Նրա սերն այնքան մեծ է, որ վեր է մեր մտքից,* սակայն մուտք գործելով այդ սիրո մեջ՝ մենք զգում ենք, թե ինչպես է այն գործում մեր ներսում: Այդ պահից մեր ներսում հաստատվում է նոր օրենք, որը գործում է նոր ուխտի՝ արդարության ուխտի ներքո: Գառան արյամբ փրկված լինելը նշանակում է, որ սատանան այլևս մեր տերը չէ: Իրականում, *այն պահից, երբ* դարձանք Աստծո ընտանիքի անդամը, մենք ինքներս դարձանք *սատանայի տերը:* Մենք իրավաբանական իրավունք ունենք՝ օգտագործելու Հիսուսի անունը և բաժնեկցելու Նրա բոլոր օրհնություններին և ամբողջ իշխանությանը: *Փրկությունը նշանակում է որդիություն՝ բոլոր արտոնություններով:* Հոր էությունը, որը մենք ընդունում ենք, արդարացնում է մեզ:

Որքա՜ն ցավալի է, որ **մենք սահմանափակել ենք մեզ արդարության բնագավառում**: Այն, թե ինչպես են կրոնական ուսուցիչները և մեղադրող եղբայրները նվազեցրել արդար որդիության դիրքը, պարզապես ողբերգական է: Թույլ մի՛ տվեք, որ մարդիկ կամ կրոնական ուսմունքները զրկեն ձեզ արդարության ուխտի առավելություններից: Աստվածաշունչը լի է արդարության մասին խոսքերով. ավելի խորությա՛մբ ուսումնասիրեք այն և կպարզեք, թե *ով* եք դուք, *որտեղից* եք դուք, *ինչ* ունեք հիմա և *ինչպես* պետք է օգտագործեք դա: Երբ ճշմարտապես **հասկանանք և ըմբռնենք մեր ուխտն** Աստծո հետ արդարության բնա-

գավառում, մենք **համարձակ կիռչակենք** Աստծո կամքը, և այն **կկատարվի**: Մենք կարող ենք համարձակ մուտք գործել Աստծո ներկայության մեջ և ներկայացնել Նրան բոլոր փաստերը՝ լիովին ակնկալելով այն արդյունքը, որը ցանկանում ենք:

Հիշեք՝ **արդարությունը պատկերում է Հոր էությունը**: Ճշմարիտ արդարությունը երբեք չի փորձում կատարել սեփական կամքը, և ո՛չ էլ հիմար բաներ է խնդրում: *Արդարությունը՝ Քրիստոսի քայլող և խոսող դեսպանն է այս երկրի վրա:* Այն չի *փորձում* հավատալ. **այն գործում է՝ համաձայն Աստծո Խոսքի և Աստծո ասած հրահանգների**: Կարիք չկա «գործի դնել» արդարությունը. այն մշտապես ձեզ հետ է: **Դուք այն եք, ինչ Աստվածաշունչն ասում է ձեր մասին, և վե՛րջ**:

**Եթե սահմանափակել եք ձեզ**՝ հավատալով, որ դուք պարզապես որդ եք կամ՝ այլ նվաստ էակ, ***ապաշխարե՛ք և ուսումնասիրե՛ք Աստծո Խոսքը***, որպեսզի իմանաք, թե իրականում ով եք դուք: Այն, որ մարդը մուտք չի գործում այս ուխտի մեջ և ամեն օր չի վարվում համաձայն դրա, գրեթե նման է Հիսուսին ապտակ հասցնելուն: **Արդարությունը գերազանց արկած է, և երբ մարդը հասկանում է այն, նրա կյանքն այս երկրի վրա ուրախության է վերածվում**: Թո՛ւյլ տվեք Աստծուն՝ հեռացնել ձեր կողմից դրված արգելքները, որոնց պատճառով Նա հեռու է ձեզնից, և դուք դեռ ապրում եք կարիքի մեջ: Գոյություն ունի բոլորովին նոր աշխարհ, որն սպասում է ձեզ:

## ԵՀՈՎԱ ՌԱՖԱ

«**Եհովա Ռաֆա**» անունը նշանակում է «Ես եմ Տերը՝ քո Բժիշկը»: Եբրայերենում «բժշկում է» բառը *«ռաֆե»*-ն է: Սա է պատճառը, որ հաճախ այս փրկարար անունը նաև արտասա-

նում են որպես «Եհովա Ռոֆե»: *«Ռոֆե»* բառը նշանակում է «կարելով միացնել կամ նորոգել»: ***Աստված խոստանում է մեզ, որ երբ մենք փնտրենք Նրան, Նա կնորոգի մեր կյանքի բոլոր կոտրված մասերը:*** Նա կրկին կմիացնի մեր կյանքի բոլոր մասերը, որոնք պոկվել կամ պատռվել են հիվանդության, տկարության, մտավոր և մարմնական վնասվածքների կամ բռնության պատճառով: Տերը՝ մեր ***Բժիշկը,*** ոչ միայն բժշկում է մեր մարմինը, միտքը և զգացմունքները, այլև՝ մեր ***հոգին:***

Ինչ վերաբերում է հիվանդություններ բժշկելուն, վերջին խոսքը պատկանում է Աստծուն: Բժիշկները կրթված մասնագետներ են, բայց նրանց գիտելիքը սահմանափակ է: Եթե իրենց դասագրքերում գրված չէ որևէ հիվանդության կամախտանշանի մասին, նրանք, որպես կանոն, շփոթվում են՝ չիմանալով, թե ինչ անեն: Աստված է ***ստեղծել*** ձեր մարմինը: Նա ***գիտի***, թե ինչպես է գործում ***ամեն մի բջիջ, և Նրան է պատկանում*** ձեր ԴՆԹ-ի ծածկագրի ***արտոնագիրը:***

Քրիստոնյաները երբեք չպետք է ընդունեն հիվանդությունը և ինչ-որ բան չձեռնարկեն՝ դրա հետ պայքարելու համար, ինչպես որ նրանք չպետք է ընդունեն մեղքը և ինչ-որ բան չձեռնարկեն՝ դրա հետ պայքարելու համար: Հիվանդությունը հեշտորեն ընդունելու պատճառներից մեկն այն է, որ մենք ***մուտք չենք գործում Եհովա Ռաֆա*** ուխտի անվան մեջ: Երբ այս անունն ազդարարվեց Ելից 15.26-ում, երեք միլիոն իսրայելցի հավատացին Տիրոջ Խոսքին, և բոլորը բժշկվեցին: Սաղմոս 105.37-ը պնդում է. «Եվ նրանց հանեց... և նրանց ցեղերում տկար մարդ չկար»: Կարո՞ղ եք պատկերացնել **երեք միլիոն** առողջ և ուժեղ մարդկանց: **Նրանցից ոչ ոք տկար, թույլ և հիվանդ չէր**: Եթե այս խոսքը ճշմարիտ էր ***Իսրայելի համար***, որը Հին կտակարանի օրենքի ներքո էր, որքա՜ն ավելի ճշմարիտ է այն ***մեզ համար*** այսօր:

Մենք ապրում ենք ավելի լավ ուխտի՝ շնորհքի ուխտի ներքո, որը գնվել է Գառան արյունով:

Մի՞թե Աստված նկատի ուներ, որ այս ուխտի անունը նախատեսված է ընդամենը մի քանիսի համար, երբ տվեց այն: Ինչպես և Աստծո բոլոր ուխտի անունների դեպքում, **դրանց առավելություններն *ստանում է յուրաքանչյուրը, ով* ընդունում է Նրա ուխտը**: Մենք չգիտենք, թե ինչու են ոմանք մահանում, իսկ մյուսները՝ ողջ մնում, քանի որ ճշմարտապես չգիտենք մարդկանց սրտերը: Երբեմն մարդը որոշում է մահանալ և Երկինք գնալ՝ այս երկրի վրա մնալու և իր բժշկության համար պայքարելու փոխարեն: Մենք կարող ենք վստահ լինել հետևյալում. ***եթե Աստված ասաց, որ Նա է Տերը՝ մեր Բժիշկը, նշանակում է՝ այս իրավունքը, որը խոստացված է Նրա ուխտի հիման վրա, պատկանում է նրան, ով ճշմարտապես ուխտի մեջ է Աստծո հետ:*** Նոր կտակարանում ***բժշկության կարիք ունեցող յուրաքանչյուր ոք, ում Հիսուսը դիպչում էր կամ՝ ում խոսք էր ասում, ստանում էր այն:***

Հենց հիմա ժամանակ տրամադրեք՝ կարդալու համար մի քանի բժշկության հրաշքների մասին, որոնք Հիսուսը գործեց, երբ այս երկրի վրա էր. Մատթեոս 4.23, 8.1-4,5-13, 9.1-8,27-29, Մարկոս 5.24-34, Ղուկաս 4.38-40, 5.12-15,17-26, 10.9, 17.11-19: Միայն մեկ անգամ էր, որ Նա բժշկեց ընդամենը մի քանի հիվանդի, և դա տեղի ունեցավ մարդկանց անհավատության պատճառով: Բայց նույնիսկ այդ դեպքից հետո Նա չդադարեց սիրել այդ մարդկանց: Նա շարունակեց սովորեցնել նրանց՝ օգնելով հեռացնել անհավատությունից առաջացած սահմանափակումները (տե՛ս Մարկ. 6.5,6):

Եթե դուք սահմանափակել եք Աստծուն բժշկության առումով, ես հորդորում եմ ձեզ ուսումնասիրել Խոսքը: Դադարե՛ք լսել մարդկանց կարծիքները և նայել նրանց կյանքին: ***Նայե՛ք Խոսքին***

***և հավատացե՛ք Տիրոջը:*** Եթե «Բժիշկ» անունը վերաբերում է նրանց, ովքեր իրենց մեղքերից բժշկվելու և վերստին ծնվելու կարիք ունեն, չե՞ք կարծում, որ Աստծո այս ուխտի անունը նույնպես վերաբերում է ձեզ, եթե ձեր մարմինը բժշկության կարիք ունի: Իհա՛րկե: Ես վստահ եմ սրանում, քանի որ մեզ տրված է Նրա ուխտի անունը: Մենք ինքներս ենք որոշում՝ ընդունե՞լ այս անունը, թե՞ սահմանափակել այն:

## ԵՀՈՎԱ ՌԱԱՀ

«**Եհովա Ռաահ**» անունը նշանակում է՝ «Տերը իմ Հովիվն է»: Ես հաճախ եմ լսել տարբեր մարդկանցից, որ մտածելով ամբողջ աշխարհի մասին՝ նրանք հասկանում են, թե որքան աննշան են: Թույլ տվեք ասել ձեզ, որ նման պատկերացումը սխալ է: ***Դուք շատ կարևոր եք Տիրոջ համար:*** Աստված ցույց տվեց սա՝ երբ Երեմիային ասաց. «*Քեզ որովայնում չստեղծած՝ Ես քեզ գիտեի, և արգանդից դեռ դու դուրս չեկած՝ Ես քեզ սրբեցի...*» (Երեմիա 1.5): Աստված **գիտի**, թե ով եք դուք, որտեղ եք դուք և ինչ եք դուք անում: Եթե վերստին ծնված եք, դուք տեղ ունեք Երկնքում: Մաղաքիայի գրքում ասվում է, որ ***մենք այնքա՛ն կարևոր ենք*** մեր Հովվի համար, ***որ Նա նույնիսկ նկատում է, երբ այլ մարդկանց հետ խոսում ենք Նրա մասին:*** Այդ դեպքերը գրանցվում են հիշատակի գրքի մեջ: Մաղաքիա 3.16-ում գրված է. «*Այն ժամանակ խոսեցին Տիրոջից վախեցողներն իրար հետ, և Տերը ականջ դրեց ու լսեց, և հիշատակի գիրք գրվեց Նրա առջև Տիրոջից վախեցողների համար և Նրա անունը պատվական համարողների համար*»:

Ես կասեի, որ սա մեզ շատ կարևոր է դարձնում Նրա համար: Մեր մոլորակում վեց միլիարդից ավելի մարդ է ապրում, բայց Մատթեոս 10.30-ը հայտնում է, որ մենք ***այնքա՛ն կար-***

*Նոր ենք* մեր Հովվի համար, որ նույնիսկ *մեր գլխի բոլոր մազերը հաշված են:* Այդպիսի սերը և ուշադրությունը վեր է մեր մարդկային ընկալումից, քանի որ դրանում հայտնվում է *Աստծո սերը, որի բարձրությունն ու խորությունն անսահման է, և որը վերջ չունի:*

Հովիվը հոգատարությամբ հսկում է իր հոտը: Երբ հոտի ոչխարներից մեկը վնասվածք է ստանում, հովիվն օգնության է շտապում՝ զգուշորեն հանելով փուշը կամ բուժելով վերքը: Եթե ոչխարն առանձնանում է հոտից, հովիվը տուն չի գնում՝ մինչև որ գտնի կորածին և վերադարձնի հոտին:

Որպես մեր ուխտի Հովիվ՝ Տերը հետևում է նրանց, ովքեր Իրենն են: Ղուկաս 15.4-7-ում գրված է, թե ինչպիսի հովիվ է Նա.

> *«Ձեզնից ո՞վ է այն մարդը, որ հարյուր ոչխար ունենա և նրանցից մեկին կորցնի, չի՞ թողնի իննսունիննին անապատում և այն կորածի ետևից գնա՝ մինչև որ գտնի նրան:*
>
> *Եվ երբ որ գտնի, ուրախանալով իր ուսերի վրա կդնի նրան:*
>
> *Եվ տուն գալով՝ բարեկամներին և դրացիներին կկանչի և կասի. «Ուրախացե՛ք ինձ հետ, որովհետև իմ կորած ոչխարը գտա»:*
>
> *Ասում եմ ձեզ, թե այսպիսի ուրախություն կլինի Երկնքում մեկ մեղավորի համար, որ ապաշխարի...»:*

Եթե դուք սահմանափակել եք Աստծո միջամտությունը ձեր կյանքում՝ մտածելով, որ Նա բարկացել է ձեզ վրա, որ ինչ-ինչ պատճառներով դուք չեք կարող կանգնել Նրա առջև, կամ համոզված եք, որ Նա չի կարող հոգ տանել ձեզ համար ձեր ներկա իրավիճակում, ***հեռացրե՛ք այդ սահմանափակումը:*** Վերոնշյալ հատվածը ցույց է տալիս, որ թեև Նա շատ ոչխարներ ունի, բայց ***Նա արագորեն վազում է՝ մեկ կորածին որոնելու համար:*** Երբ

դուք հեռացնեք այն սահմանափակումները, որոնք հեռու են պահում ձեզ Աստծուց, Նա մեղմորեն կհեռացնի այն փշերը, որոնք խոցել են ձեզ՝ սխալ որոշումներ կայացնելու պատճառով: Նա մեղմորեն կկապի և կբուժի այն վերքերը, որոնք ստացել եք ձեր իրավիճակում:

Սաղմոս 23-ը խոսում է այն ուխտի մասին, որը Նա կնքել է մեզ հետ՝ որպես մեր Հովիվ.

*«Տե՛րն է իմ հովիվը, և կարոտություն չեմ ունենա:*

*Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ և հանդարտ ջրերի մոտ տանում է ինձ:*

*Իմ անձին հանգիստ է տալիս, ինձ առաջնորդում է արդարության շավիղներում՝ Իր անվան համար:*

*Թեև գնամ մահվան շուքի ձորով, չար բանից չե՛մ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես, Քո գավազանն ու ցուպը մխիթարում են ինձ:*

*Դու իմ առջև սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց: Դու իմ գլուխն օծում ես յուղով: Իմ բաժակը խի՛ստ լիքն է:*

*Հենց բարիք և ողորմություն կգան իմ ետևից իմ կյանքի բոլոր օրերում, և Տիրոջ տանը կբնակվեմ շա՛տ երկար ժամանակ»:*

Այս Սաղմոսը կարդալիս այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ ***Աստծո բոլոր փրկարար անուններն ամփոփված են «Հովիվ» ուխտի անվան մեջ:*** Այս ուխտի ներքո մենք երբեք կարոտություն չենք ունենա, այսինքն՝ չենք ապրի առանց այն ամենի, ինչն անհրաժեշտ է մեզ: ***Նա մեր խաղաղությունն*** է, և Նա առաջնորդում է մեզ խաղաղության ճանապարհով: ***Նա հետամուտ է լինում մեզ՝ վերադարձնելով Իր մոտ, և վերականգնում է մեզ՝ բժշկելով մեր ցավերը, վերքերը և հիվանդությունները:***

*Նա առաջնորդում է մեզ, որ հասկանանք մեր արդարությունը*, որը մեր ժառանգությունն է՝ շնորհիվ այն գնի, որը Հիսուսը վճարեց մեզ համար: ***Թեև շփոթության, հալածանքի, կործանման և հիվանդության «շուքը» մեր շուրջը լինի, մենք կարող ենք անցնել բարձր գլխով***՝ վստահ լինելով, որ Նա մեզ հետ կլինի: ***Նրա Խոսքը պաշտպանում և առաջնորդում է*** մեր բոլոր իրավիճակներում: Նա օրհնում է մեզ այն մարդկանց ներկայությամբ, ովքեր թողնում են Նրան. ***բարությունը և ողորմությունը՝ մեր բաժինն է*** մեր կյանքի բոլոր օրերում, քանի որ մենք բնակվում ենք Նրա հետ և Նրանում: Ինչպիսի՜ անասելի ուխտ է ամփոփված «Եհովա Ռաահ»՝ «Տերը մեր Հովիվն է» անվան մեջ:

*Այս յոթ անունները տրված են՝ որպես Աստծո անձնական ստորագրություն, որը ցույց է տալիս, թե ինչ է Նա ցանկանում անել և ինչպիսին է ցանկանում լինել մեր կյանքում:* Այս անուններից ոչ մեկը չի անցել. դրանց ազդեցությունը մինչև օրս անփոփոխ է: Այս անունները ներկայացնում են հավիտենական ճշմարտությունն այն մասին, որ Նա նույնն է երեկ, այսօր և հավիտյան (տե՛ս Եբր. 13.8): Աստծո փրկարար անունները մշտապես մեզ հետ են, և դրանց հիմքում ընկած է ճշմարտությունն այն մասին, որ Աստված երբեք չի փոխվում, և որ Նրա Խոսքը մշտապես նեցուկ կլինի մեզ: Սրանով ես չեմ ցանկանում «դրական» աստվածաբանություն փոխանցել ձեզ՝ ասելով, որ Աստված կազատի ձեզ խնդիրներից, նույնիսկ եթե դուք որոշեք մնալ նույն տեղում կամ սահմանափակել Նրան:

Կա երկու պայման՝ այս փրկարար անունները ձեր կյանքում գործելու համար.

- Դուք պետք է ունենաք *հավատք Աստծո հանդեպ*, ոչ թե՝ որևէ բանի կամ մեկ այլ անձնավորության:

- Դուք պետք է *հնազանդ լինեք Աստծուն* և այնպես վարվեք, որ արդար դիրք ունենաք Նրա առջև:

*Աստված կարող է անցնել այն արգելքը*, որը դուք դրել եք, կամ՝ միջամտել ձեր կյանքում, նույնիսկ եթե դուք մեղքի կամ անհավատության մեջ եք: *Այնուամենայնիվ, Նա չի խոստացել, որ կգործադրի Իր փրկարար անուններից թեկուզ մեկն այն ժամանակ, երբ դուք ապավինեք որևէ բանի կամ մեկ այլ անձնավորության:*

Գոյություն ունի երկու գործոն, որոնք թույլ չեն տալիս մարդկանց մոտենալ Աստծուն կամ առաջ գնալ Աստծո հետ՝ **հավատքի կամ սպասման բացակայությունը** և **տեսիլքի բացակայությունը**: *Ի՞նչ պետք է անենք: Մենք պետք է ավելացնենք մեր հավատքը կամ սպասումը և ընդլայնենք մեր տեսիլքը:* Մեր տեսիլքն ընդլայնելու մասին կխոսենք ավելի ուշ: Իսկ այժմ տեսնենք, թե ինչպես ավելացնենք մեր հավատքը և սպասումը՝ մեկընդմիշտ հեռացնելով բոլոր սահմանափակումները մեր կյանքից: Հիշեք՝ *Աստված երբեք չի մերժում նրանց, ովքեր փնտրում են Իրեն:*

## Գլուխ 5

# Զարգացրե՛ք ձեր անսահման ներուժը

Դուք երբևէ լսե՞լ եք այսպիսի արտահայտություն. «Կերակրե՛ք ձեր հավատքը և սովի՛ մատնեք ձեր կասկածները»: Արդյո՞ք սա հնարավոր է: Եթե այո, ինչպե՞ս:

Դուք սովի եք մատնում *կասկածները կամ սահմանափակումները*, որոնք փորձում են գերության մեջ պահել ձեզ, *երբ ավելացնում եք ձեր հավատքն Աստծո հանդեպ:* Աստվածաշունչը սովորեցնում է, որ մենք պետք է ավելացնենք մեր հավատքը, և որ **բոլորս կարող ենք անել դա**: Ձեր հավատքը չի ավելանա, եթե ստիպեք ձեզ դրական դավանություններ անել կամ գրքեր կարդաք դրական մտածելակերպ ունենալու մասին: Դուք չեք կարող հասնել դրան զոհաբերություններ տալով և մտածելով, որ այդպես կարդարանաք Աստծո առջև: Դա չի հաջողվի ձեզ, եթե ձեր կողքին այնպիսի առաջնորդ լինի, ով մշտապես կխրախուսի, որ ճիշտ վարվեք: Դա չի ստացվի, եթե դուք պարզապես հավատաք, որ կարող եք լինել այնպիսին, ինչպիսին ցանկանում եք՝ միևնույն ժամանակ ապրելով մեղքի կամ վախի մեջ:

**Գոյություն ունի հասարակ միջոց՝ ձեր հավատքն ավելացնելու համար:** *Դա տեղի է ունենում, երբ դուք այնքա՛ն եք սիրահար-*

*վում Աստծուն, որ ցանկանում եք անել ամեն բան՝ Նրան հաճելի լինելու համար:* Երբ դուք այսպիսի դրդապատճառ ունեք, այն բարձրացնում է ձեզ բարի գործերից և դրական մտածելակերպից դեպի սիրո ընթացքը, որում գոյություն չունեն այլ դրդապատճառներ, կարիքներ կամ ցանկություններ: Դուք *է՛լ ավելի եք վստահում* Նրան, *որովհետև սիրում եք Նրան: Սա կարելի է նմանեցնել ձեր զգացմունքներին, երբ դեռ նոր էիք սիրահարվել ձեր կողակցին:* Դուք համապատասխանեցնում էիք ձեր կյանքն այն ամենին, ինչը հաճելի էր նրան, որովհետև ցանկանում էիք մտերմորեն հաղորդակցվել նրա հետ: *Դուք հրաժարվում էիք այն ամենից, ինչը կարող էր շփոթություն կամ վեճեր առաջացնել* ձեր հարաբերությունների մեջ: *Դուք հեռացնում էիք այն ամենը, ինչը կարող էր վախի կամ տարաձայնությունների պատճառ դառնալ, այսինքն՝ պահպանում էիք խաղաղությունը ձեր հարաբերություններում: Դուք այնքա՜ն սիրահարված էիք, որ **միակ բանը, որը կարևորում էիք, ներդաշնակությունն ու ապահովությունն էին:***

Նույնը կարելի է ասել ձեր և Աստծո հարաբերությունների մասին: **Երբ սիրեք և ձգտեք հաճելի լինել Նրան, դուք կապրեք խաղաղության և ներդաշնակության մեջ՝ անկախ այն ամենից, ինչ տեղի կունենա ձեր շուրջը**: Դուք կազատվեք այն ամենից, ինչն սպառնում է Նրա հետ ունեցած ձեր հարաբերություններին: Այս քայլերի արդյունքում, դուք հագեցած հարաբերություններ կունենաք Նրա հետ: Եվ լիովին վստահ կլինեք, որ **Նա լսում է ձեզ և ձեր կողքին է** ցանկացած խնդրի ժամանակ: *Երբ կասկածները և սահմանափակումները փորձեն գլուխ բարձրացնել*, դուք **կհեռացնեք դրանք Աստծո Խոսքով**, քանի որ դուք ուխտ ունեք Նրա հետ և գիտեք, որ Նա հավատարիմ է Իր ուխտին: Ահա թե ինչպես կարող եք լինել երկնային մթնոլորտում՝ ապրելով այս երկրի վրա:

Պետրոսի երկրորդ թուղթը սովորեցնում է, թե ինչպես հոգևոր աճ ունենալ և ավելացնել հավատքը (կամ՝ ***ավելացնել մեր***

*վստահությունը և սպասումը Նրանում):* Այս ընթացքի ամեն մի քայլը հիմնված է **փոխհարաբերությունների վրա, որոնք կառուցվում են Աստծո** *մեջ*, ոչ թե պարզապես գործերի, որոնք արվում են Նրանից դուրս և ինքնարդարացման պատճառ են դառնում:

## ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑՔԸ

Այս քայլերը թվարկված են Բ Պետրոս 1.2-7-ում: Այս հատվածում Պետրոսը ցույց է տալիս, թե ինչ մենք՝ վերստին ծնված հավատացյալներս, արդեն ունենք: Խոսք 2-ում նա պնդում է, որ «շնորհքը և խաղաղությունը» ավելանում են նրանց մեջ, ովքեր ճանաչում են Աստծուն, այսինքն՝ ունեն գիտելիք, որը բխում է Աստծո Խոսքը ճանաչելուց և դրան հավատալուց: Նա պնդում է, որ Նրա աստվածային զորությունը տվել է մեզ այն ամենը, ինչ պետք է մեզ կյանքի և աստվածապաշտության համար, և որ մեզ արդեն տրվել են «ամենամեծ և պատվական խոստումները» (խոսք 3,4):

Բայց Խոսք 5-ում Պետրոսը մի հետաքրքիր ընթացք է նկարագրում: Նա գրում է. ***«Եվ սույն այս բանի համար...»***՝ նկատի ունենալով հետևյալը. **«Բացի այն ամենից, ինչ ես արդեն ասացի ձեզ, բացի բոլոր այն օրհնություններից, որոնք արդեն տրվել են ձեզ՝** ***գոյություն ունի ևս մեկ բան»:*** Ավարտելով իր նկարագրությունը՝ նա ցույց է տալիս, թե ինչ տեղի կունենա, եթե մենք կատարենք իր ցուցումները.

> *«Որովհետև այս բաները ձեզանում մնալով և աճելով՝ դատարկ և անպտուղ չեն անի ձեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գիտության մեջ:*
>
> *Բայց նա, որ այս բաներն իր մոտ չունի, կույր է և կարճատես՝ մոռացած լինելով իր առաջին մեղքերից սրբվելը»*
>
> *Բ Պետրոս 1.8,9:*

Այս երկու խոսքերում մեծ իմաստություն կա: *Մինչ* կանդրադառնանք այն քայլերին, որոնք *ավելացնում են մեր սպասումն* Աստծո հանդեպ, կարևոր է ***թվարկել այն առավելությունները,*** որոնք նշված են այս խոսքերում: **Շատ կարևոր է նշել, որ Պետրոսն ավարտեց իր միտքը՝ ասելով. «*Եթե* այս բաները մնան ձեզանում»,** ինչը նշանակում է, որ մենք ենք որոշում՝ անե՞լ դրանք, թե՞ ոչ: ***Եթե*** *մենք չանենք այս քայլերը, միևնույն է՝ Երկինք կգնանք, բայց* ***կապրենք վախի, սարսափի և անհավատության մեջ:*** Այս աշխարհի համակարգը կխստացնի մեր սիրտը. մենք կդառնանք եսասեր և կկատարենք միայն մեր գործերը, որոնք հիմնված կլինեն մեր որոշած ժամանակների և մեր մտավոր կարողությունների վրա: Այլ կերպ ասած՝ *մեր կյանքը մեծ մասամբ կառաջնորդվի սահմանափակումներով*: ***Մենք ոչ միայն կսահմանափակենք Աստծուն, այլև մեր ներուժը, որը կարող էինք օգտագործել Նրա հետ:***

- Այսպիսով, ի՞նչ խոստումներ են տրված մեզ այն դեպքում, եթե որոշենք ավելացնել մեր սպասումը՝ այս աստվածապաշտ քայլերն անելով:
- Մենք չենք լինի դատարկ, անպտուղ, անարդյունավետ և աննպատակ:
- Մենք արդյունավետ կլինենք, կունենանք նաև պտղաբեր և իմաստալից կյանք:
- Մենք կույր չենք լինի Տիրոջ ճանապարհների հանդեպ:
- Մենք կտեսնենք ապագան և համոզվածություն կունենանք, որ ի վերջո Աստված պտտելու է մեր կյանքի իրավիճակները՝ հօգուտ մեզ:
- Մենք կապրենք Աստծո տված արդարությամբ՝ գիտակցելով, թե ինչից ենք փրկվել և մաքրվել:

Եթե քայլ առ քայլ հետևենք այն ընթացքին, որը Պետրոսը նկարագրում է, մենք ոչ միայն **կավելացնենք մեր սպասումն** Աստծո հանդեպ, այլև կազատվենք մեր մտքի ինքնահնար **սահմանափակումներից**, որոնք թույլ չեն տալիս Աստծուն մուտք գործել մեր կյանք:

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԸ

Հրաշալի է հնչում, այնպես չէ՞: Այն քայլերը, որոնք կօգնեն ավելացնել մեր սպասումը և հեռացնել մեր սահմանափակումները, թվարկված են Բ Պետրոս 1.5-7-ում: Պետրոսը պատվիրում է մեզ հետևյալը՝ Սուրբ Հոգու ոգեշնչմամբ.

*«Եվ սույն այս բանի համար ամեն ջանք անելով՝ ձեր հավատքով ներկայացրեք առաքինությունը, և առաքինությամբ՝ գիտությունը:*

*Եվ գիտությամբ՝ ժուժկալությունը, և ժուժկալությամբ՝ համբերությունը, և համբերությամբ՝ աստվածապաշտությունը:*

*Եվ աստվածապաշտությամբ՝ եղբայրասիրությունը, և եղբայրասիրությամբ՝ սերը»:*

Այո՛, դուք պետք է աշխատեք՝ այս քայլերը կատարելու համար: Բայց հիշեք՝ ***ամեն քայլն ավելի է մոտեցնում ձեզ Տիրոջը և դրդում է ավելի շատ սիրել Նրան: Ամեն քայլը դրդում է ձեզ ապավինել Նրա ներկայությանը և զորությանը***, ոչ թե՝ ձեր ուժերին: ***Ամեն քայլը թույլ է տալիս ձեզ քանդել այն սահմանափակումները, որոնք կառուցել եք Նրա շուրջը***, ինչի շնորհիվ Նա կարող է ազատորեն գործել ձեր ներսում: Եվ ***ամեն քայլն իր հետ բերում է այն խոստումները, որոնք մենք արդեն թվարկել ենք:***

Հիշե՛ք, որ դուք կարող եք ապրել առանց այս քայլերի: Բայց եթե այդպես որոշեք, այս գիրքը ձեզ համար չէ: Սա գրված

է *նրանց համար, ովքեր ցանկանում են լիարժեքորեն համապատասխանել Աստծո կամքին, ովքեր ցանկանում են հաջողության հասնել* այնպես, ինչպես դա նկարագրված է Նրա Խոսքում: Այս գիրքն *այն մարդկանց համար է, ովքեր ցանկանում են հաղորդակցվել Աստծո հետ և վայելել Նրա ուխտի օրհնությունները՝ Նրա հետ միասին:* Այս գիրքը *նրանց համար է, ովքեր հավատում են*, որ ամեն ժամանակ և ամեն իրավիճակում *կարող են կանչել Նրա ուխտի փրկարար անունները*, և Նա կհայտնվի Իր զորության բազուկով: Այս գիրքը գրված է *այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են ավելացնել Տիրոջ հանդեպ իրենց վստահությունն ու սպասումը:*

Եթե խոսքը ձեր մասին է, ուրեմն շարունակենք՝ առանց րոպե կորցնելու:

# Գլուխ 6

# Աշխատասիրություն

*«Եվ սույն այս բանի համար, ամեն ջանք անելով…»*
Բ Պետրոս 1.5

Ինչ-որ մեկն ասել է. *«Աշխատասիրությունը պահում է մեզ երեք մեծ չարիքից՝ ձանձրույթից, անառակությունից և կարիքից»:* Ես ուզում եմ մի փոքր փոփոխել այս խոսքը. **«Աշխատասիրությունը պահում է մեզ երեք մեծ չարիքից**՝ *ձանձրույթից, մեղքից և կարիքից»:*

Հետաքրքիր է, որ հոգևոր կայացման յոթ քայլերից առաջ Պետրոսը նշեց *«ամեն ջանք անելով»* արտահայտությունը: **Ջանք անելու կամ աշխատասիրության սկզբունքը մեծագույն հայտնություններից մեկն է, որը մենք՝ քրիստոնյաներս, կարող ենք ստանալ**: Եթե մենք աշխատասեր չլինենք, կձանձրանանք Աստծո իրողություններից, հոգևոր քնի մեջ կմտնենք և կնահանջենք: Այդ վիճակը *մեղավոր ցանկությունների և գործերի պատճառ կդառնա*, և արդյունքում կհայտնվենք կարիքի մեջ: Առանց աշխատասիրության՝ մենք ավելի պատրաստակամորեն կընդունենք մարդկանց խոսքերը, քան Աստծո Խոսքը, որովհետև մենք չափազանց ծույլ կլինենք, որ ինքներս պարզենք ճշմարտությու-

նը: *Այնուամենայնիվ, քանի դեռ մենք չգիտենք ճշմարտությունը, այն չի կարող մեզ ազատ արձակել մեր սահմանափակումներից:*

Որպես հավատացյալ՝ դուք պետք է ձեր և Աստծո փոխհարաբերությունների մեջ ջանք գործադրելը պատկերացնեք գրեթե նույն կերպով, ինչպես որ ջանք եք գործադրում ձեր ամուսնության մեջ: Դուք չեք կարող մեկ անգամ ասել ձեր կողակցին. «Ես սիրում եմ քեզ», իսկ հետո նստել ու զբաղվել այլ գործերով՝ սպասելով, որ այդ մի խոսքը հաջողակ դարձնի ձեր ամուսնությունը: Աշխատասիրությունը փոխհարաբերությունների մեջ՝ առաջնային գործոնն է հաջող ամուսնության համար:

Աստված ցանկանում է գործել մեր կյանքում. Նա ցանկանում է տալ մեզ բժշկություն, ազատագրում, փրկություն և բարգավաճում և կատարել այլ խոստումներ, որոնք գրված են Իր Խոսքում: Այնուամենայնիվ, **մենք չենք ունենա լիարժեք վստահություն Նրա խոստումների հանդեպ, եթե աշխատասիրություն չցուցաբերենք**: Կարևոր չէ, թե որքան է Նա ցանկանում հայտնել Իր սերը մեր հանդեպ. ***եթե մենք ջանք չենք գործադրել Նրա խոստումներն իմանալու համար, մեզ համար դժվար կլինի թե՛ սպասել այդ խոստումներին, թե՛ ստանալ դրանք Աստծուց:***

Հեշտ է հռչակել, որ Աստված ցանկանում է, որ բոլորը բժշկված լինեն, բայց այդքան էլ հեշտ չէ օրեցօր հավատալ, երբ ձեր մարմինը ցավից տանջվում է: Հեշտ է բացականչել, որ Աստված ցանկանում է, որ բոլորը բարգավաճեն, բայց անհրաժեշտ է ջանք գործադրել և աշխատել ձեր ֆինանսների վրա ամեն ամիս, մինչև որ ազատվեք պարտքերից: Այո՛, Աստված ցանկանում է, որ բոլորը բժշկվեն, և Նա ցանկանում է, որ մենք բարգավաճենք այն աստիճան, որ ունենանք ավելին, քան մեզ հարկավոր է: Բայց ձեր հավատքի մեջ անհրաժեշտ է ջանասիրություն, որը կհաղթահարի ձեր բոլոր հանգամանքները և ախտանշաննե-

րը՝ ի հայտ բերելով Աստծո արդյունավետ զորությունը: Աշխատասիրությունը՝ Աստծո խոստումներն ստանալու բանալին է:

## ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱԿՆԱՌՈՒ Է ԴԱՐՁՆՈՒՄ ՁԵԶ

Վեբսթերի բառարանն այսպես է սահմանում «աշխատասեր» բառը. «*աչքի ընկնող, փութաջան և հարատև աշխատանքով*» կամ *«մշտապես ուշադիր ինչ-որ բանի հանդեպ»:* Անեն մեկը այն յոթ քայլերից, որոնք դիտարկելու ենք՝ առաքինությունը, գիտելիքը, ժուժկալությունը, համբերությունը, աստվածապաշտությունը, եղբայրասիրությունը և սերը մեզնից պահանջելու են աշխատասիրություն: Այս հատկանիշների մեջ աճ ունենալու համար դուք պետք է մշտապես ուշադիր լինեք դրանց հանդեպ:

Ձեր հավատքը չի ավելանա, եթե ձեր գլխին ավելի շատ օծման յուղ լցնեն: Ոմանք ասում են. «Ես գիտեմ՝ եթե ինչ-որ հայտնի քարոզիչ գար մեր քաղաք, իմ բոլոր խնդիրները լուծված կլինեին»: Ես ինքս էի այդպես մտածում, և դուք՝ նույնպես: Մենք մտածում էինք, որ եթե Բենի Հինը, Օրալ Ռոբերտսը կամ Ջոյս Մայերը մեր քաղաք գային, նրանք մի խոսք կասեին, և մեր բոլոր խնդիրներն անմիջապես ի չիք կդառնային: Փոխն անմիջապես կգար, ամեն մի պարտք գերբնականորեն կմարվեր, և մեր բոլոր խնդիրները կանհետանային և հանգիստ կթողնեին մեզ:

Մենք մոռանում էինք, որ այդ ծառայողները մշտապես աշխատասեր են եղել և ուշադիր են եղել իրենց կոչմանն ու անձնական կյանքին, որպեսզի Աստծո ձեռքը գործեր նաև իրենց կյանքում: Մենք չէինք մտածում այս մասին: Մենք ձգտում էինք անցավ կերպով լուծել մեր բոլոր խնդիրները: Շատ դժվար էր հանգել այն մտքին, որ իրենք էլ պետք է շարունակ ջանք գոր-

ծադրենք, այսինքն՝ աշխատասեր լինենք: Աստծուն մոտենալը դժվար չէ. դժվար է մշտապես ջանք գործադրելը՝ մեր մարմինը և մտածելակերպը հնազանդեցնելու համար:

**Աշխատասիրությունը նշանակում է՝ որոշում կայացնել և մինչև վերջ պահել այն:** Այն նշանակում է գնալ ուղիղ առաջ, նույնիսկ եթե ձեզ հակառակություն է սպառնում: Աշխատասիրությունը կանգ չի առնում՝ տեսնելով նեղության կրակները. այն անցնում է անմիջապես դրանց միջով, քանի որ գիտի, որ չի այրվելու: Աշխատասիրությունը նշանակում է անցնել տառապանքի կամ հոգևոր հարձակումների ջրերով՝ իմանալով, որ Աստված թույլ չի տա, որ դուք խորտակվեք: Այն նշանակում է վստահորեն առաջ գնալ՝ գիտակցելով, որ Աստված ուղիղ կդարձնի ամեն ծուռ արահետ ձեր առջև:

Մի՛ մտածեք, որ աշխատասիրությունը կամ ջանասիրությունը նշանակում է, որ դուք պետք է մշտապես կատարյալ լինեք ամեն ինչում: Դուք կարող եք ասել. «Տե՛ր, ես տկար եմ այս բնագավառում: Ես տատանվում եմ այս հանգամանքներում: Զորացրո՛ւ ինձ, որովհետև ես որոշել եմ քայլել Քեզ հետ: Ես սիրում եմ Քեզ, և մենք մեկ ենք: Ես տալիս եմ իմ տասանորդները, և ես միայն առաջ եմ գնում՝ անկախ այն բանից, թե ինչպես են տարբեր իրավիճակները փորձում խանգարել ինձ: Տե՛ր, օգնի՛ր ինձ անցնել իմ կյանքի հաջորդ փուլը և քայլել Քեզ հետ»: *Սա ջանասեր աղոթք է: Այն անկեղծ է և լիովին համապատասխանում է Աստծո Խոսքին, քանի որ դուք խնդրում եք, որ ձեր հավատքն ավելանա:* Դուք համարում եք Աստծուն ձեր Աղբյուրը, և գիտակցում եք, որ ձեր կյանքում կան այնպիսի բաներ, որոնց պատճառով կարող եք բաց թողնել Նրա օրհնությունները: Եթե դուք այսպիսի սիրտ ունեք, ջանասիրաբար կձգտեք ճանաչել Նրա Խոսքի ճշմարտությունները և կփնտրեք այն պատասխանը, որի կարիքն ունեք:

*Աշխատասիրությունը նույնքան կարևոր է, որքան մեր հավատքի չափը:* Այս երկուսը գործում են միասին: **Մենք չենք կարող ունենալ մեկը՝ առանց մյուսի**: Եթե որևէ նորահավատ արագ աճում է աստվածային իրողությունների մեջ, իսկ ինչ-որ մեկն էլ, ով երկար ժամանակվա քրիստոնյա է և գաղջ է դարձել, տարբերությունը նրանց միջև աշխատասիրությունն է: Առաջինը ջանասիրաբար սովորում է Տիրոջ մասին, իսկ երկրորդը՝ ոչ: Նույնը վերաբերում է բարգավաճմանը: Եթե ինչ-որ մեկը, թվում է, թե միշտ փող ունի, իսկ մյուսը կորցնում է իր վաստակած ամեն մի դրամը, խնդիրն աշխատասիրության մեջ է: Առաջինն աշխատասիրությամբ է վերաբերվում իր միջոցներին, իսկ երկրորդը պարզապես ապրում է այսօրվա օրով:

Հռոմեացիների 12-րդ գլխում Պողոսը խոսում է այս մասին: Մենք օգտագործում ենք բազմաթիվ խոսքեր այդ գլխից՝ տարբեր սկզբունքներ նկարագրելու համար, բայց հիմնական ուղերձը՝ աշխատասիրությունը, հստակ երևում է ամբողջ գլխում: ***Աշխատասիրությունը՝ ծաղկուն, հաղթական և լիարժեք քրիստոնեական ընթացքի բանալին է:***

## ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՁԱՏՐՎՈՒՄ Է

Մեզնից շատերը ծանոթ են Եբրայեցիների 11.6-ին, որում հեղինակը հայտնում է, որ *«առանց հավատքի անկարելի է հաճելի լինել»* Աստծուն: Շատ հաճախ մենք կանգ ենք առնում այս պնդման վրա և չենք կարդում խոսքի երկրորդ մասը՝ որ «*Աստված վարձատրում է նրանց, ովքեր **ջանասիրաբար** փնտրում են Իրեն*» (KJV):

Ինչ-որ մեկն ասել է, որ *աշխատասիրության* հիմքում կարող է լինել *բարեպաշտությունը* կամ *հարկադրանքը*. առաջինն

*ուղղորդում է մեզ դեպի Աստծո ճանապարհները*, իսկ երկրորդը *ճնշում է մեզ, որ կատարենք «մեր գործերը»*: Ես լիովին համաձայն եմ այս արտահայտության հետ: Ուշադրություն դարձրեք, որ համաձայն Աստծո Խոսքի՝ Աստված վարձատրում է նրանց, ովքեր ջանասիրաբար *«փնտրում են Իրեն»,* ոչ թե նրանց, ովքեր փնտրում են «իրենց ճանապարհները»:

*Շատ հեշտ է նկատել՝ երբ մարդն առաջնորդվում է հարկադրանքով:* Որպես կանոն, դրա հիմքում ընկած է ինչ-որ բան նախընտրած կերպով կատարելու ցանկությունը: Նման մարդիկ *ստիպում են*, *ճնշում են գործադրում*, *շահարկում* և *վերահսկում են* մարդկանց՝ իրենց սպասումներն ի կատար ածելու համար: Երբ աշխատասիրության հիմքում հարկադրանքն է, այն *սահմանափակում է* Աստծուն, քանի որ այդ դեպքում մարդը ցանկանում է գործել իր նախընտրած ձևով: *Միակ վարձատրությունը, որը երբևէ կստանանք* դրանից, *մարդկային մրցանակներն են*, ***որոնք ժամանակավոր են:*** Եթե ինչ-որ մեկը ձգտում է արժանանալ մարդկանց ճանաչմանը կամ ծափահարություններին, *միգուցե* նա հասնի իր նպատակին այս անառողջ աշխատասիրության միջոցով, բայց դրանից բացի՝ այլևս ոչինչ չի ստանա: Ես ցանկանում եմ փնտրել Աստծուն և ամեն ինչ անել այնպես, ինչպես Նա է ցանկանում: ***Ես ցանկանում եմ, որ իմ վարձատրությունները լինեն հավիտենական***, ոչ թե ժամանակավոր:

*Երբ աշխատասիրության հիմքում բարեպաշտություն է, մենք մշտապես կատարում ենք Նրա գործը*: Նման աշխատասիրություն ունեն այն մարդիկ, ովքեր ճանաչում են *Նրա կամքը և բնավորությունը*, և Աստված մշտապես վարձատրում է նրանց ջանքերի շնորհիվ: ***Այնպես որ, կարելի է ասել, որ թե՛ բարեպաշտությունը, թե՛ եսակենտրոնությունը և հարկադրանքն աշխատասիրության հիմքում մշտապես բացահայտում են մեր առաջ-***

*նախերթությունները:* Մենք առաջին հերթին անում ենք այն, ինչն ամենից կարևոր ենք համարում: Ահա թե ինչու է ***անչափ կարևոր*** փնտրել Նրա կամքը ձեր բոլոր գործերում և վստահությամբ կատարել այն:

Սկսելով ուսումնասիրել այս յոթ քայլերը՝ մենք կտեսնենք, թե ինչու էր Պետրոսը խրախուսում մեզ ջանասեր լինել դրանցում: Նա գիտեր իր փորձից, որ *աշխատասիրությունը, որի հիմքում բարեպաշտությունն է, վարձատրվում է:* Ո՞րն է այդ վարձատրությունը: ***Հանգստությունը, գոհունակությունը, հաստնությունը, հոգևոր ուժը և զանազանություն ընդամենը մի քանիսն են այն օրհնություններից, որոնք Աստված տալիս է մեզ, քանի դեռ այս երկրի վրա ենք:*** Այն, որ դուք կարող եք ստանալ Աստծո խաղաղությունը որևէ ճգնաժամային իրավիճակում, ***պարզապես անգնահատելի է:*** Դա վարձատրություն է: Այն, որ բախվելով մեծ սպառնալիքի՝ դուք կարող եք անդրդվելի հավատք ունենալ՝ վախին տրվելու փոխարեն, ***անչափ կարևոր է:*** Սրանք պարզապես օրինակներ են, որոնք ցույց են տալիս, թե ինչ է շնորհված նրանց, ովքեր մշտապես ջանասիրություն են ցուցաբերում աստվածային իրողությունների մեջ և ձգտում են գնալ ոչ թե իրենց, այլ՝ Աստծո ճանապարհներով:

## ՊԱՀՊԱՆԵ՛Ք ՁԵՐ ՍԻՐՏԸ

Առակաց 4.23-ում գրված է. *«Ամեն ջանասիրությամբ պահպանի՛ր քո սիրտը, որովհետև դրանից են կյանքի աղբյուրները»* (KJV): Մինչև Պետրոսի կողմից հիշատակված յոթ բնագավառները դիտարկելը, մենք պետք է իմանանք մեր սրտերը պահպանելու սկզբունքը: Մենք կարող ենք շրջասության ենթարկել այս խոսքը հետևյալ կերպով. ***«Ուշադի՛ր եղիր այն բաների հանդեպ, որոնք մուտք են գործում քո սիրտը, որովհետև այն, ինչ դու***

*տեսնում ես, լսում ես և ինչի շուրջ մտորում ես, շուտով դառնալու է քո կյանքի աղբյուրը»:*

Երբ Աստվածաշունչը խոսում է մեր սրտի մասին, հաճախ այն նկատի ունի մեր հոգին կամ մեր անձի և հոգու միջև նեղ սահմանը: *Այն ամենը, ինչ մենք տեսնում և լսում ենք, մուտք է գործում մեր սիրտը:* Մենք շարժվում ենք մեր *տեսածով* և *լսածով*, և մենք շարժվում ենք մեր տեսածի և լսածի *ուղղությամբ:* Այլ կերպ ասած՝ ***այն, ինչ մենք տեսնում և լսում ենք, մագնիսի պես ձգում է մեզ:***

Ահա թե ինչու է անչափ կարևոր ջանասիրաբար պահպանել մեր սիրտն Աստծո Խոսքով: Այն ամենը մեր տեսածից և լսածից, ինչը հակասում է Խոսքի սկզբունքներին, բնույթին, համոզմունքներին և բարոյական չափանիշներին, պետք է անմիջապես հեռացվի և փոխարինվի Աստծո Խոսքի ճշմարտությամբ: *Սա միշտ չէ, որ կընդունվի մարդկանց կողմից, բայց այսպես վարվելով՝ դուք վարձատրություն կստանաք:* Ավելի լավ է՝ ես վարձատրություն ստանամ Աստծուց, քան արժանանամ մարդկանց ծափահարություններին և հավանությանը: **Ջանասիրաբար պահպանե՛ք ձեր սիրտը:** Սահմաննե՛ր կառուցեք ձեր սրտի շուրջ՝ ընդդեմ այս աշխարհի այլասերման: **Բացե՛ք ձեր սիրտը Աստծո Խոսքի ճշմարտությունների համար, քանի որ *իրական կյանքը* դրանց մեջ է:**

## ՋԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ՝ ԼՍԵԼՈՒ ՄԵՋ

Պատահե՞լ է, որ ինչ-որ բան խնդրեք ինչ-որ մեկից, նա գլխով անի, բայց հետո չկատարի ձեր խնդրանքը: Պատահե՞լ է, որ խոսեք ձեր ամուսնու կամ կնոջ հետ, նա գլխով անի, բայց հետո չկարողանա կրկնել, թե ինչ ասացիք: Այնպես չէր, որ դիմացինը չլսեց ձեզ. նա լսեց, բայց **չհասկացավ**:

Հիսուսը խոսեց այս մասին Ղուկասի Ավետարանի 8.18-ում. «*Տեսե՛ք, թե ինչպես եք լսում...*»: **Մենք պետք է ոչ միայն լսենք, այլև հասկանանք**: Մենք կարող ենք ինչ-որ բան լսել ամբողջ օրվա ընթացքում, բայց միևնույն է՝ չհասկանալ իմաստը: Սա է պատճառը, որ երկու մարդ կարող են նստել եկեղեցական հավաքույթին և տարբեր բաներ հասկանալ: Նրանցից մեկը պարզապես քարոզ է *լսում*, իսկ մյուսը ***հասկանում է*** այդ քարոզը, և ***նրա համար մի նոր աշխարհ է բացվում***: Հիսուսն զգուշացնում էր, որ մենք ուշադիր կամ ջանասեր լինենք լսելու մեջ, որպեսզի հասկանանք այն, ինչ ասվում է:

Ղուկասի 6.49 և Մատթեոսի 13.23 խոսքերում Հիսուսը մի հրաշալի փոխաբերություն է օգտագործում լսելու և հասկանալու վերաբերյալ : Ղուկասի 6.49-ում Հիսուսը նկարագրում է այն մարդկանց, ովքեր պարզապես լսում են. *«Բայց Իմ խոսքերը լսողը և չանողը նման է մի մարդու, որ տունը հողի վրա շինեց՝ առանց հիմքի, որ գետը զարկեց այն, և շուտով վայր ընկավ, և այն տան կործանումը մեծ եղավ»:* Հիսուսն զգուշացրեց մեզ, որ **այս կյանքում դժվարություններ կլինեն**: Կլինեն օրեր, երբ հալածանքը, ամենօրյա հանգամանքների ճնշումները և նեղությունները կհարվածեն մեզ: Բայց Նա նույնպես ցույց տվեց, որ եթե ***լսենք և հասկանանք***, այդ դժվարությունները չեն վնասի մեզ: Երբ կարդում եք Նրա Խոսքը կամ ներկա եք որևէ եկեղեցական հավաքույթի, *դուք պետք է **տրամադրվեք լսելու և հասկանալու համար**, որպեսզի **հաստատություն և հոգևոր իմաստություն** ունենաք, երբ դժվարությունները գան:*

Ահա թե ինչու այս գիրքն ընթերցողներից շատերի կյանքում սահմանափակումներ կան: Ահա թե ինչու դուք համոզված չեք, թե արդյո՞ք Աստված կգործի ձեզ համար: Պատճառն այն է, որ ջանասիրաբար չեք լսել Նրա Խոսքը, որը բացում է ձեր միտ-

քը՝ ցույց տալով, թե ինչ է Նա ցանկանում կատարել ձեզ համար: Փոխարենը՝ դուք պարզապես Աստվածաշունչ եք կարդացել, և երբ ավարտել եք, նույնիսկ մեկ *բառ* չեք հիշել ձեր կարդացածից: Կամ՝ դուք եկեղեցական ծառայության եք գնացել՝ սովորությունից ելնելով, և ավելի ուշադրություն եք դարձրել հավաքույթի վայրում տեղի ունեցածին, քան լսել եք քարոզվող խոսքը: **Երբ մենք ջանասիրաբար չենք լսում, մեր կյանքում սահմանափակումներ են հայտնվում**: Երբ դժվարությունները գալիս են, մենք պարտվում ենք, քանի որ ժամանակին աշխատասիրություն չէինք ցուցաբերել, որպեսզի հասկանայինք, թե ինչ է Աստված տվել մեզ: ***Մենք ուժ, խաղաղություն և վստահություն ենք ձեռք բերում, երբ հասկանում ենք:***

*Ոմանք **ավելի մեծ ուշադրություն են դարձնում աշխարհիկ երգերի բառերին**, քան **Աստծո Խոսքի ճշմարտություններին:*** Ոմանք անգիր չեն հիշում աստվածաշնչյան նույնիսկ մեկ խոսք, բայց գիտեն վերջին հանրահայտ երգերի բոլոր բառերը: Ես ոչ մի խնդիր չունեմ աշխարհիկ երաժշտության հետ: Ես նույնիսկ լսում եմ որոշ բաներ, և դրանք ինձ դուր են գալիս: Ես համոզված եմ, որ մեր կյանքը պետք է հավասարակշռված և հաճելի լինի: Այնուամենայնիվ, ես մի լուր եմ ուզում հայտնել ձեզ. **Սելին Դիոնի կամ Փաֆֆ Դեդդիի երաժշտությունը չի լինի մեր զորությունը և վեմը ճգնաժամի ընթացքում**:

Դուք պետք է ուշադիր լինեք, թե ինչ եք թույլ տալիս ձեզ լսել: Մի քանի օր առաջ ես վարում էի իմ մեքենան և մի հաճելի աշխարհիկ երաժշտական ռադիոկայան էի լսում: Հանկարծ սկսվեց մի երգ, որի բառերը մոտավորապես այսպիսին էին. «Եթե ես հպվեմ քո շուրթերին, դու կդողա՞ս ամբողջ մարմնով: Կմնա՞ս ինձ հետ այս գիշեր և կազատե՞ս ինձ»: Հասկանալի է, որ նման բառերը կարող են ազատել ինչ-որ մեկին միայն շնության

կամ պոռնկության համար: Ես անմիջապես փոխեցի այդ ալիքը: Այդպիսի երգերի բառերը *նախատեսված են ձեզ գործողության մղելու համար*՝ հասցնելով այնպիսի վիճակի, երբ *դրանց ազդեցությունը դառնում է* ձեր կյանքի *որոշիչ գործոնը:* Դուք կարող եք հայտնվել թե՛ բացասական, թե՛ դրական ազդեցության ներքո: Տարիներ առաջ անցկացված մի հետազոտության արդյունքում պարզվել էր, որ ***դատապարտված հանցագործների հակվածությունը բռնությանը, սպանությանը և պոռնոգրաֆիային անմիջական կապ ուներ այն երաժշտական ոճի հետ, որը նրանք լսում էին:*** Նրանց լսած բառերն ազդում էին իրենց կյանքի և մտածելակերպի վրա: Դուք պետք է շատ զգույշ և ուշադիր լինեք այն ամենի հանդեպ, ինչ թույլ եք տալիս ձեզ լսել:

***Գոյություն ունեն օրինություններ և վարձատրություններ, որոնք տրվում են ճիշտ բաներ լսելու և հասկանալու համար:*** Հիսուսը մի օրինակ բերեց այս մասին Մատթեոսի Ավետարանի 13.23-ում. *«Բայց բարի երկրում սերմածը նա է, որ խոսքը լսում է և իմանում (կամ՝ հասկանում), որ նաև պտուղ է տալիս, որը՝ հարյուր, և որը՝ վաթսուն, և որը՝ երեսուն»:* «Բարի հողը», որի մասին Նա խոսում է, ձեր սիրտն է: Մենք կրկին տեսնում ենք, որ անհրաժեշտ է ջանասիրաբար հսկել և պահպանել ձեր սիրտը: Հիսուսն ասաց, որ **այն մարդը, ով լսում և հասկանում է, պտուղ կբերի** իր կյանքում՝ *բարգավաճում, հաջողություն, բժշկություն, ազատագրում և բարեհաճություն:*

## ԻՆՉՊԵ՞Ս ԼՍԵԼ

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ լսելու համար պետք չէ հատուկ օծություն ունենալ: *Մարդն ինքը պետք է լսելու և հասկանալու* ***որոշում*** *կայացնի:* Ուրեմն, ի՞նչ կարող եք անել,

որ ոչ միայն լսեք, այլև՝ հասկանաք. դուք պետք է պատրաստեք ձեր սիրտը: Երբ *կարդում եք Խոսքը* կամ *ներկա եք եկեղեցական հավաքույթներին*, ձգտե՛ք ստանալ այն ամենը, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար: *Խնդրե՛ք Սուրբ Հոգուն* հայտնություն տալ ձեզ և Իր լույսը սփռել Խոսքի վրա, որպեսզի հասկանաք այն: *Խնդրե՛ք Նրան ուղղել ձեր ուշադրությունը* ձեր կյանքի այն բնագավառների վրա, որոնցում դուք պետք է կիրառեք Աստծո Խոսքը: *Խնդրե՛ք Նրան հասկացողություն տալ ձեզ* ձեր կյանքի որևէ հստակ իրավիճակի կամ հանգամանքի վերաբերյալ:

Ջանասե՛ր և ուշադի՛ր եղեք: Թույլ մի՛ տվեք, որ ձեր միտքը թափառի: Նշումնե՛ր արեք ձեր Աստվածաշնչում: Որոշո՛ւմ կայացրեք, որ կկատարեք այն, ինչ լսեցիք: Հակոբոս 1.22-ում գրված է. *«Բայց խոսքը անող եղեք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով»:* Երբ մենք լսում և հասկանում ենք Խոսքը, բայց չենք կատարում այն, մենք վնասում ենք ինքներս մեզ: Խնդրե՛ք Աստծուն զորացնել ձեզ, որ հնազանդվեք ձեր լսածին և կատարեք այն: Հիշեք՝ Տիրոջը ջանասիրաբար փնտրողները *կվարձատրվեն:*

## ՅՍԿԵ՛Ք ՁԵՐ ԱՉՔԵՐԸ

Վերջերս անցկացրած բժշկական հետազոտությունները ապացուցել են, որ եթե երկար ժամանակ ինչ-որ բանի նայենք, մենք կիրապուրվենք դրանով և կփորձենք կառուցել մեր կյանքը՝ համաձայն դրա: Իհարկե, սա չպետք է զարմացնի մեզ, քանի որ մենք կարող ենք ճիշտ այսպիսի պատմություն գտնել Ծննդոց գրքում: Հակոբը միագույն ոչխարներից բաղկացած հոտ ուներ, բայց նա ցանկանում էր, որ իր ոչխարները բծավոր և կետավոր լինեին: Այնպես որ, նա ճյուղեր պոկեց, մաքրեց դրանց կեղևի մի

մասը, որպեսզի սպիտակ բծեր ու կետեր երևային, և ոչխարների ջուր խմելու տաշտը դրեց այդ ձյուղերի առջևում: Ամեն օր նրա ոչխարները գալիս էին ջուր խմելու և նայում էին այդ բծավոր և կետավոր ձյուղերին: Ոչխարները նաև զուգավորվում էին ջրի մոտ: Եվ ահա նրանք բծավոր, կետավոր և երիզավոր գառներ ծնեցին: Ոչխարները փաստորեն ծնեցին այն, ինչին ամեն օր նայում էին (տե՛ս Ծննդ. 30.37-39):

Տարիներ առաջ մի մարքեթինգային ընկերություն հետազոտություն անցկացրեց ամերիկյան ֆուտբոլի «Դալլասի կովբոյներ» թիմի նախկին հարձակվող Տրոյ Էյքմենի մասնակցությամբ: Ամեն խաղից հետո, երբ «ESPN»-ի, «CNN»-ի և այլ հեռուստաալիքների սպորտային լրագրողները հարցազրույցներ էին վերցնում նրանից, Էյքմենը պետք է նույն պատկերատիպով բեյսբոլի գլխարկ կրեր: Նրա հարցազրույցի ցուցադրումից երեսուն օրվա ընթացքում այդ բեյսբոլի գլխարկների վաճառքն ավելացավ 100.000 դոլարով: Այնպես որ, այդ մարքեթինգային ընկերությունը, որը հենց վաճառում էր այդ բեյսբոլի գլխարկները, առաջարկեց նրան տարեկան 250.000 դոլար, եթե նա շարունակեր կրել այդ գլխարկն ամենուր՝ բացառությամբ խաղադաշտ դուրս գալուց:

Ի՞նչ է ցույց տալիս մեզ այս պատմությունը: Մենք շարժվում ենք *մեր տեսածով* և *դեպի մեր տեսածը:* Մատթեոսի 6.22,23-ում՝ «Էմփլիֆայդ» թարգմանությունից, Հիսուսն ասաց.

*«Աչքը մարմնի ճրագն է: Ուրեմն, եթե քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լույսով լեցուն կլինի:*

*Բայց եթե քո աչքն առողջ չէ, քո ամբողջ մարմինը խավարով լցված կլինի: Ուրեմն, եթե քո միջի լույսը [քո խիղճը] խավարած է, որքա՜ն թավ է այդ խավարը»:*

Այն, ինչը մենք տեսնում ենք, կամ ինչին թույլ ենք տալիս՝ շարունակ նայել, ազդում է մեր խղճի վրա: *«Աչք»* բառը հունարենում կարող է նշանակել նաև «շարունակական զննում»: ***Մեղքը մշտապես սկիզբ է առնում փոքր բանից, որը թույլ ենք տալիս մեզ՝ դիտել:***

Եթե ինչ-որ մեկը շարունակ անմաքուր կամ մեղսալի բաներ նայի, **դրանք կխստացնեն կամ կբթացնեն նրա խիղճը**: Նա այլևս չի համարի, որ այն, ինչ ինքն անում է, սխալ է: Օրինակ՝ եթե մարդը շարունակ պոռնոգրաֆիկ նյութեր դիտի, նա կսկսի անվայել կերպով նայել հակառակ սեռին: Նա կսկսի վատ կատակներ կամ ժեստեր անել, նրա հագուստի ոճը կփոխվի, և նրա միջոցները կվատնվեն մեղսալի ցանկությունների վրա: Նա շարունակ կցանկանա ավելին՝ փորձելով բավարարել իր տարփանքը: Նա կապականվի իր տեսածով: Երբ այդ մարդու կյանքում ճգնաժամ գա, հազիվ թե նա կանչի Տիրոջը կամ հավատա, որ Տերը կպատասխանի և կօգնի իրեն: Նա սահմանափակում է ստեղծել Իր և Տիրոջ միջև՝ պարզապես թույլ տալով իր աչքերին՝ սխալ բաներ նայել:

Հոբը մի մարդ էր, ում Տերը շատ էր սիրում: Թեև վախը նրա կյանքում դուռ բացեց թշնամու համար, ով կարողացավ կործանել Հոբի ընտանիքը և ունեցվածքը, Աստված կրկնապատիկ վերականգնեց ամեն ինչ: ***Հոբը գիտեր Աստծուն մաքուր խղճով հետևելու բանալի սկզբունքը:*** Հոբ 31.1-ում նա հայտարարեց, որ ուխտ է արել իր աչքերի հետ, որպեսզի իր խիղճը մաքուր մնա: Հոբը երդվել էր, որ սահմանափակելու է այն, թե ինչին պետք է նայի, և ինչին՝ ոչ: Համոզված եմ, որ բոլորս պետք է այդպես վարվենք:

Եթե մենք ուխտ անենք մեր աչքերի հետ և ջանասիրաբար պահենք այն, եթե մենք ջանք անենք, որ նայենք այն բաներին,

որոնք կզորացնեն մեր հոգին և կամրապնդեն մեր անձը, մենք չենք սահմանափակի Տիրոջը մեր կյանքում: Մենք կկարողանանք համարձակ կանգնել մեր արդարությամբ և կպահանջենք այն օրհնությունները, որոնք իրավամբ մեզ են պատկանում: Երբ խնդիրներ գան, չենք ընկճվի և չենք սեղմվի մութ անկյունում: Սաղմոս 25.15-ում ասվում է. *«Իմ աչքերը մշտապես ուղղված են Տիրոջը, որովհետև Նա կհանի իմ ոտքը ցանցից»* (AMP): Երբ մենք նայում ենք Տիրոջը, կարող ենք սպասել, որ Նա կպատասխանի մեզ:

Եթե այս աշխարհի ճնշումները և ընթացքը դրդել են ձեր աչքերին՝ Տիրոջը նայելու փոխարեն նայել այլ բաների, փոխե՛ք դա: Սկսե՛ք հենց այսօրվանից: Սաղմոս 19.8-ը՝ «էմփլիֆայդ» թարգմանությունից, խոստանում է. «*Տիրոջ կանոններն արդար են, ուրախացնում են սիրտը. Տիրոջ պատվիրանը մաքուր և պայծառ է, լուսավորում է աչքերը»* (AMP): Բացե՛ք Աստծո Խոսքը և թո՛ւյլ տվեք ձեր աչքերին կարդալ այն խոստումները, որոնք Նա տվել է ձեզ: Թո՛ւյլ տվեք ձեր աչքերին կարդալ Նրա կանոնները: Եթե այդպես վարվեք, ձեր մտքերը վեհ կդառնան, և ձեր սիրտը կփափկի: Դուք կտեսնեք այն ուղին, որը Տերը որոշել է ձեզ համար: Առակաց 20.12,13-ում՝ «էմփլիֆայդ» թարգմանությունից, գրված է. *«Լսող ականջը և տեսնող աչքը՝ երկուսն էլ Տերն է ստեղծել... բացի՛ր քո աչքը և հացով կկշտանաս»* (AMP): Թո՛ւյլ տվեք Աստծուն առաջնորդել ձեր քայլերը և ստեղծարար գաղափարներ տալ, որոնք բարգավաճում կբերեն ձեզ: Թո՛ւյլ տվեք Նրան բացել ճիշտ ուղին ձեր առջև, որպեսզի դուք հաջողություն ունենաք ձեր բոլոր գործերում:

Թույլ մի՛ տվեք ձեզ «շարունակ զննել» այնպիսի բաներ, որոնք խստացնում են ձեր խիղճը: Թույլ մի՛ տվեք, որ այն, ինչին դուք նայում եք, սահմաններ կառուցի ձեր և Տիրոջ փոխհարաբե-

րություններում: **Ո՛ւխտ կնքեք ձեր աչքերի հետ և ջանասիրաբար պահե՛ք այն**:

Հավանաբար, այժմ կարող եք նայել ձեր կյանքին և տեսնել, թե ինչպես եք սահմանափակել Աստծուն այն ամենով, ինչ շարունակ դիտել և լսել եք: **Ուշադրությո՛ւն դարձրեք** այդ բաներին և սկսե՛ք փոխել դրանք: Եթե, համաձայն Բ Պետրոս 1.8-ի, դուք ցանկանում եք հաջողակ լինել և ոչ մի բանում պակասություն չունենալ, **պետք է ջանասիրաբար կատարեք այն բաները, որոնք գիտեք**: Կարծում եմ՝ կարելի է վստահաբար ասել, որ ***եթե մենք ոչինչի պակաս չունենք, նշանակում է՝ մենք հեռացրել ենք բոլոր սահմանափակումները, որոնք կառուցել էինք Աստծո շուրջը***:

Այժմ, հասկանալով, թե ինչպես աշխատասիրությունը կարող է որոշել մեր կյանքի սահմանափակող գործոնը, եկեք ուսումնասիրենք այն յոթ քայլերը, որոնք Պետրոսը տվեց մեզ՝ այն յոթ քայլերը, որոնք երաշխավորում են, որ մենք պտղաբեր և անսահմանափակ կյանք կունենանք, քանի դեռ այս երկրի վրա ենք:

# Գլուխ 7

# Գերազանց առաքինություն

*«Եվ բացի այս՝ ամեն ջանասիրությամբ ավելացրե՛ք ձեր հավատքին առաքինություն, և առաքինությանը՝ գիտելիք»:*
Բ Պետրոս 1.5 (KJV)

Առաքինությունը երկակի իմաստ ունի. այն նշանակում է և՛ զորություն, և՛ գերազանցություն: Ղուկասի Ավետարանի 6.19-ը և 8.46-ը պնդում են, որ Հիսուսից *առաքինություն դուրս եկավ* («KJV», հայերեն Աստվածաշնչում՝ «զորություն») և *բժշկեց* հիվանդներին: ***Մարդկանց հունձքը լինելու է Աստծո հրաշագործ զորության շնորհիվ:*** Ահա թե ինչի վրա է պետք ուշադրություն դարձնել վերջին օրերում: Աստծո զորությունը՝ Նրա սիրո արտահայտությունն է: Մարդիկ չեն ձգտի ճանաչել Աստծուն և ստանալ Նրա սերը՝ հիմնվելով այն բանի վրա, որ դուք շքեղ մեքենա կամ բազմասենյականոց ճոխ տուն ունեք: *Մարդիկ **կձգտեն** դեպի Տերը՝ շնորհիվ **ձեր աստվածապաշտ կյանքի**, որ **դուք պատրաստ եք օգնել** նեղության պահին, և **ձեզնից բխող զորության, որը բժշկում, մխիթարում և ազատ է արձակում Հիսուսի անունով***: Այս աստվածապաշտ հատկանիշները կլինեն այն մարդկանց կյանքում, ովքեր մտերիմ շփում ունեն Նրա հետ:

Ձեր առաքինությունը մեծ դեր է խաղում մարդկանց՝ դեպի Քրիստոսը առաջնորդելու հարցում: Ես խոսելու եմ առաքինության այն կողմի մասին, որն օգնում է մեզ լինել սահմանափակումներից ազատ: Խոսքը գերազանց լինելու կամ բարոյական բնավորություն ունենալու մասին է:

Աստծո սերը և զորությունը չեն բխի ձեզնից, եթե չունենաք բարոյական գերազանցություն: Դուք ոչ մի դեպքում ճիշտ քայլեր չեք կատարի, եթե չունենաք ճիշտ դրդապատճառներ: *Նախքան Աստված մեծ գործեր կանի* ***ձեր միջոցով***, *դուք պետք է թույլ տաք Նրան մեր գործեր անել* ***ձեր կյանքում:***

Պետրոսը պնդում է, որ *մենք պետք է առաքինություն* կամ գերազանցություն *ավելացնենք մեր հավատքին:* Մինչև առաջ անցնելը, ուզում եմ, որ հասկանաք հետևյալը. **գերազանցությունը չի նշանակում՝ կատարելություն**: Կատարելապաշտ մարդիկ գտնվում են *վախի հոգու* ազդեցության ներքո: Թեև նրանք մշտապես գերծանրաբեռնված են, սակայն սրտի խորքում նրանք վախենում են, որ վատ տպավորություն կթողնեն մարդկանց վրա, եթե կատարյալ վարք չունենան: Օգտագործելով «կատարյալ» բառը՝ Աստվածաշունչը խոսում է **հասունության**, ոչ թե անթերի լինելու մասին: Երբ հասուն մարդիկ սխալ են գործում, նրանք գիտեն, թե ինչպես ապաշխարել և շտկել հարաբերությունները նրանց հետ, ովքեր վնաս են կրել իրենց սխալի պատճառով: ***Հոգևոր հասունությունը բխում է ուժգին բարոյական բնավորությունից կամ բարոյական գերազանցությունից:*** Համաձայն Պետրոսի խոսքերի՝ այս հատկանիշն անհրաժեշտ է մեզ, որպեսզի մենք ոչ մի բանում պակասություն չունենանք:

Ես նույնպես ցանկանում եմ, որ դուք հասկանաք հետևյալը. *բարոյական գերազանցությունը չի բխում օծությունից:* Որքան էլ օծված լինեք, միևնույն է՝ գալու է *հաշվետու լինելու ժամա-*

*նակը*: ***Ձեր առաքինի բնավորությունը երևում է ձեր անձնական կյանքից***, ոչ թե հասարակական գործունեությունից: Օծությունը *մարդկանց ծառայելու* համար է, իսկ բարոյական գերազանցությունը՝ անձնական կյանքի: Ահա թե ինչու **հավատքին առաքինություն ավելացնելը** մեծ ազդեցություն կունենա մեր կյանքում: Բարոյական գերազանցությունն ավելին է, քան հավատքի դավանանքը: Բարոյապես գերազանց մարդը ***բացարձակ վստահություն է ցուցաբերում*** Աստծո հանդեպ՝ իմանալով առանց կասկածի նշույլի, որ Նա կանցկացնի իրեն ամեն ինչով: Պարզ ասած, այն նշանակում է՝ ապրել այնպես, ինչպես դուք հավատում եք: Այդպիսի կյանքը որևէ կերպով չի սահմանափակում Աստծուն:

Հովսեփը և Սամսոնը՝ երկու օրինակներ են Հին կտակարանից այն մասին, թե ինչ տեղի կունենա այն մարդու հետ, ով ապավինում է միայն օծությանը, և ոչ՝ առաքինությանը: *Երկուսն էլ օծված էին Աստծուց:* Երկուսն էլ արտոնություններ էին վայելում և հաջողակ էին: Այնուամենայնիվ, Հովսեփը *գերազանց բնավորություն ուներ* և չէր ցանկանում մեղանչել Աստծո դեմ՝ անկախ այն բանից, թե ինչ պետք է կրեր դրա պատճառով: Նա բացարձակ վստահություն ուներ Աստծո հանդեպ, ապրում էր համաձայն իր համոզմունքների և որևէ կերպով չէր սահմանափակում Նրա փրկարար զորությունը: Արդյունքում՝ Հովսեփի ազնվությունը փրկեց նրան:

Մենք կարող ենք տեսնել տարբերությունը Հովսեփի և Սամսոնի միջև Ծննդոց 39 և Դատավորաց 16 գլուխներում: Երբ Հովսեփի գործատուի գեղեցիկ կինը փորձեց գայթակղեցնել նրան և սեռական մեղքի դրդել, նա սենյակից փախավ: Հովսեփը չէր ցանկանում մեղանչել Աստծո և նրա ամուսնու դեմ: Նա ապրում էր՝ համաձայն իր հավատքի:

Ի տարբերություն նրան՝ *Սամսոնը լիովին ապավինում էր օծությանը և չէր կառուցում իր բնավորությունը:* Երբ Դալիդան գայթակղեցրեց Սամսոնին, նա խաղաց գայթակղության հետ և թույլ տվեց, որ այն շարունակվի: Ցավոք, Սամսոնը նույնպես ապրում էր համաձայն իր համոզմունքների: Նա սահմանափակում էր Աստծուն և գործածում էր իր հավատքը միայն իր օծության բնագավառում: Ի վերջո, Սամսոնը մեղքի մեջ ընկավ, պատմեց Դալիդային այն ամենը, ինչ կար իր սրտում, և կորցրեց իր օծության աղբյուրը:

Թեև երկուսն էլ մեծ փորձություններ կրեցին, Հովսեփի կյանքը հրաշալի ավարտ ունեցավ, իսկ Սամսոնի ավարտը ողբերգական էր: Աստված օծեց երկուսին էլ, բայց դա բավական չէր: Ինչպես և մենք, նրանք պետք է առաքինություն ավելացնեին իրենց հավատքին: Նրանցից մեկն արեց դա, իսկ մյուսը՝ ոչ:

## ԶԱՐԳԱՑՆԵԼ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Գերազանցությունը չի նշանակում՝ արտաքնապես համապատասխանել ինչ-որ չափանիշի. այն *չափանիշ* է, որը հաստատվում է մարդու ներսից: Ոչ մի մեթոդ կամ ուսուցում չի կարող թաքցնել ձեր սրտի իրական դրդապատճառները: **Ձեր պարգևները, տաղանդները, կարողությունները, կոչումը կամ օծությունը չեն կարող առաքինություն ձևավորել**: Մի՛ շփոթեք այս ամենը բարոյական գերազանցության հետ: Դուք պետք է աշխատանք կատարեք, որպեսզի ձեր առաքինությունն ավելանա, բայց դա միայն տեղի կունենա շնորհիվ Աստծո Խոսքի: Դուք պետք է կառուցեք ձեր ընթացքը Տիրոջ հետ՝ *ճանաչելով Նրա Խոսքը և կատարելով այն, ինչ Աստվածաշունչը պատվիրում է ձեզ:* Դուք պետք է *ձգտում առաջացնեք ձեզանում* արդարութ-

յան հանդեպ: *Դուք չեք կարող թույլ տալ, որ մարդիկ դառնան ձեր աղբյուրը*, քանի որ այդ դեպքում կսահմանափակեք Աստծո ձեռքը ձեր կյանքում: *Դուք չեք կարող թույլ տալ, որ դառնությունը, վրդովմունքը և հուսալքությունը արմատ գցեն ձեր ներսում*, քանի որ դրանք կխեղդեն Աստծո Խոսքը: Անկախ այն բանից, թե ինչի եք բախվում կյանքում՝ **հավատարի՛մ մնացեք Աստծո Խոսքին**, և դուք հավատարմորեն կպահեք ձեր հավատքն Աստծո հանդեպ: Նա չի՛ մոռանա ձեզ:

Ինչպե՞ս անել այս ամենը: Ինչպե՞ս քանդել սահմանափակման զորությունը՝ Աստծուն հավատալու և բարոյապես գերազանց կյանք ունենալու ճանապարհին.

1. **Ունեցե՛ք ձգտում Աստծո հանդեպ**: Սաղմոս 63.8-ում գրված է. *«Իմ անձը պինդ քո ետևից է ընկնում. Քո աջը հաստատ պահում է ինձ»:* Գրելով այս Սաղմոսը՝ Դավիթը ցույց տվեց մեզ, թե ինչպես հեռացնել բոլոր սահմանափակումները, որոնք թուլացնում են մեր սպասումը: Այդ միջոցը՝ ***Աստծուն պինդ հետևելն է:*** Ես նկատի չունեմ, որ մենք պետք է չափազանց զգացմունքային դառնանք: ***Աստծուն պինդ հետևելը պարզապես նշանակում է՝ չհակառակվել Նրան:*** Որ բնագավառում էլ հավատքով մոտենաք Աստծուն, Նա ձեզ հետ կլինի: Պարզապես սկսե՛ք այնտեղից, որտեղ գտնվում եք, և հավատացե՛ք այն չափով, որ չափով ճանաչում եք Նրան: Հասարակ քայլեր արեք. խոսե՛ք Նրա հետ: Հարցրե՛ք Նրան՝ ինչպես վարվել որոշակի իրավիճակում, և վարվեք այնպես, ինչպես ճիշտ եք համարում ձեր սրտում՝ համաձայն Աստծո Խոսքի: Սկսե՛ք կարդալ Սաղմոսների գիրքը և թո՛ւյլ տվեք, որ Աստծո սերը համակի ձեզ: Եթե ամեն օր այսպես վարվեք, դուք հաճելիորեն կզարմանաք՝ նկատելով ձեր մտքի և վերաբերմունքի փոփոխությունը: Երբ նեղություններ գան,

դուք *անմիջապես* կվստահեք Տիրոջը՝ ոչ միայն հավատալով, որ Նրա զորությունը կգործի հօգուտ ձեզ, այլև իմանալով, որ *Նա սիրում է* ձեզ: ***Երբ ճաշակեք Աստծո սերը, ձեր ներսում փափագ կառաջանա Նրա հանդեպ:*** Այդ փափագը կդրդի ձեզ վարվել Նրա կամքով և կխրախուսի, որ չանեք այնպիսի բաներ, որոնք տհաճություն կպատճառեն Նրան կամ կվնասեն Նրա հետ ձեր ընթացքը: Աստծո սիրո մեջ ապրելը՝ հրաշալի փորձառություն է:

2. **Փափագե՛ք Նրա Հոգուն**: Սաղմոս 42.1,2-ում գրված է. *«Ինչպես եղջերուն խիստ ցանկանում և փափագում է ջրերի առուներին, այնպես էլ ես խիստ ցանկանում եմ և փափագում եմ Քեզ, ո՛վ Աստված: Իմ ներսի անձը ծարավ է Աստծուն»* (AMP): Ինչպես որ եղջերուն չի կարող ապրել առանց սառնորակ աղբյուրների, դուք չեք կարող ապրել առանց ձեր հոգու թարմացման: ***Նրա ճանապարհն ամենաբարձրն է, ամենակատարյալն է և ամենաօգտակարն է ձեզ համար:*** Երբ հասկանաք սա, դուք կփափագեք Նրա Խոսքի ջրերին, որոնք կարող եք խմել՝ երբ ցանկանաք: ***Սկսե՛ք սիրել Հոգու իրողությունները, և մարմնի գործերն այլևս չեն հրապուրի ձեզ:*** Սուրբ Հոգին պատրաստ է առաջնորդել ձեզ Իր ներկայության մեջ: Մի կո՛ղմ դրեք այն ամենը, ինչը դժվարություն և տառապանք է պատճառել ձեզ, և խնդրե՛ք Սուրբ Հոգուն առաջնորդել Իր սիրո մեջ: Ճաշակելով Նրա ներկայությունը՝ դուք կփափագեք այն ամեն օր: Դուք կձգտեք և կփափագեք այն թարմությանը, որը միայն Նա կարող է տալ:

3. **Վստահե՛ք Նրան և զրուցե՛ք Նրա հետ**: Եթե զրուցեք Աստծո հետ ձեր կյանքի *ամեն իրավիճակի մասին*, ձեր խիղճը մաքուր կլինի: Դուք իշխանություն ունեք ապրելու՝ ինչպես ցանկանաք, քանի որ դուք ազատ բարոյական էակ եք: Նշանա-

կում է՝ դուք նաև իշխանություն ունեք զսպելու ձեր մարմինը և սանձելու ձեր լեզուն, աչքերը և ականջները: Տիրոջ հետ հաղորդակցվելը կօգնի ձեզ վերահսկողության մեջ պահել այս բնագավառները: Հաճախ ես մտածում էի, որ ճիշտ էի վարվում ինչ-որ հարցում, սակայն երբ խոսում էի Տիրոջ հետ այդ մասին, Նա շտկում էր ինձ: Սկզբում Նրա շտկումները միշտ զարմացնում էին ինձ, բայց որոշ ժամանակ անց հասկացա Տիրոջ իմաստությունը: Ես նկատեցի, որ երբ վարվում էի Նրա ցուցումներով, իմ ծրագրերն անթերի կերպով կատարվում էին: Սաղմոս 27.4-ի վերջին մասում՝ «էմփլիֆայդ» թարգմանությունից, գրված է.

*«...որ ես բնակվեմ Տիրոջ տանը [Նրա ներկայության մեջ] իմ կյանքի բոլոր օրերում, որպեսզի նայեմ և սևեռեմ իմ հայացքը Տիրոջ գեղեցկությանը [քաղցր գրավչությանը և բերկրալի զմայլանքին] և մտորեմ, խորհեմ ու խնդրեմ Նրա տաճարում»* (AMP):

Աստված ***ցանկանում է***, որ դուք հարցեր տաք Իրեն: Նա ***բերկրանք է զգում***, երբ դուք մտորում եք Էր Խոսքի շուրջ, և պահում եք ձեր մտքում այն ամենը, ինչ Ինքն ասել է ձեր մասին: Նա ***սիրում է*** հաղորդակցվել ձեզ հետ: Երբ ձգտեք զրուցել Նրա հետ, դուք կկորցնեք ձեր նախընտրած ձևով անելու ցանկությունը և կսկսեք վարվել Նրա կամքին համաձայն: Հրաշալի է ապրել այս կերպով և զարգացնել Աստծո առաքինությունը ձեր հավատքի հետ:

4. ***Դարձրե՛ք Աստծուն ձեր գանձը:*** Մենք արդեն նշեցինք, որ մեր աշխատասիրությունը մշտապես բացահայտում է մեր առաջնահերթությունները: ***Դարձրե՛ք Աստծուն ձեր գանձը:*** Դարձրե՛ք Նրան ձեր կյանքի ամենակարևոր առաջնահերթությունը: Աստծուն ամենակարևոր առաջնահերթությունը

դարձնելը շատերին է սարսափեցնում: Նրանք սխալմամբ մտածում են, որ դա կվնասի իրենց ընտանեկան կյանքը և կխլի իրենց ամբողջ ազատ ժամանակը: Ո՛չ, դա ***ավելի հագեցած կդարձնի*** ձեր ընտանեկան կյանքը և ձեր ազատ ժամանակը: Աստված ցանկանում է, որ դուք ապրեք և վայելեք ձեր կյանքը: Նա ցանկանում է, որ վայելեք շփումը ձեր ընտանիքի անդամների հետ և թանկ պահեր պարգևեք նրանց: Նա չի ցանկանում, որ ձեր կյանքը ոչ հավասարակշռված լինի: Նա պարզապես ցանկանում է լինել առաջինը ձեր կյանքում, որովհետև այդ դեպքում մնացած ամեն ինչը ճիշտ տեղում կհայտնվի: Աստված պարզապես ցանկանում է ձեր սիրտը: Նա չի ցանկանում ձեր բոլոր դատարկ գործերը և հենց այնպես եկեղեցի հաճախելը: Մատթեոս 6.21-ում գրված է. *«Որովհետև որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ կլինի և ձեր սիրտը»:* Եթե դուք Աստծուն դարձնեք ձեր գանձը, Նա թանկ կլինի ձեզ համար, և ձեր սիրտը Նրա հետ կլինի: ***Եթե ձեր սիրտը Նրա հետ լինի, դուք կձգտեք արտացոլել Նրան ձեր բոլոր գործերում:***

5. **Ապրե՛ք ըստ ձեր համոզմունքների**: Փիլիպեցիների 3.7-10-ը՝ «էմփլիֆայդ» թարգմանությունից, հրաշալի կերպով խոսում է այս մասին.

> *«Բայց այն ամեն նախկին բաները, որոնք ես ունեի, և որոնք կարող էին շահ լինել ինձ համար, ես արդեն համարում եմ որպես [մեկ ամբողջական] կորուստ՝ հանուն Քրիստոսի:*
>
> *Այո՛, ավելին՝ ես ամեն բան կորուստ եմ համարում՝ այն անգին արտոնության (անըմբռնելի մեծության, գերազանց արժեքի և բարձրագույն առավելության) համեմատ, որն է իմ Տեր Քրիստոս Հիսուսին ճանաչելը և շարունակաբար*

*ավելի խորապես և մտերմորեն Նրա հետ ծանոթանալը [ավելի լիարժեք կերպով և ավելի պարզորեն Նրան ընկալելը, իմանալը և հասկանալը]:*

*Հանուն Նրա ես կորցրել եմ ամեն ինչ, և այդ ամենը ընդամենը աղբ (թափթփուկ, անմաքրություն) եմ համարում, որպեսզի կարողանամ շահել (ստանալ) Քրիստոսին (Օծյալին):*

*Եվ որ ես [իրականում] գտնվեմ և իմացվեմ որպես Նրանում լինող՝ չունենալով որևէ [սեփական ձեռքբերումներով ստացած] արդարություն, որը կարող է իմը կոչվել... բայց ունենալով այն [իսկական արդարությունը], որը գալիս է Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով...*

*[Որովհետև իմ վճռված նպատակն է] որ ես ճանաչեմ Նրան [որ ես շարունակ ավելի խորապես և մտերմորեն ծանոթանամ Նրա հետ՝ ավելի լիարժեք կերպով և ավելի պարզորեն ընկալելով և իմանալով և հասկանալով Նրա Անձի սքանչելիքները]... և որ ես այնպես բաժնեկցեմ Նրա չարչարանքներին, որ շարունակ վերափոխվեմ [հոգով՝ Նրա նմանությամբ...]»:*

***Բարոյական բնավորություն ձևավորելը նշանակում է կառուցել խորը սեր ճշմարտության հանդեպ և հետևել այդ ճշմարտությանը՝ անկախ այն գնից, որը պետք է վճարել դրա համար:*** Անհնար է, որ դուք փոխզիջման գնաք ձեր համոզմունքներով և խաղաղություն ունենաք: Փոխարենը՝ օգտագործե՛ք ձեր համոզմունքները, որ ***փոխանցեք Աստծո սերն*** այլ մարդկանց: Մի՛ օգտագործեք ձեր համոզմունքները արդարության մուրճի պես՝ հարվածելով մարդկանց գլխներին, երբ նրանց կյանքը չի համապատասխանում ձեր սպասումներին: ***Համոզմունքները պետք է լինեն աղի պես և Աստծուն ճանաչելու ծարավ առաջացնեն մարդկանց մեջ:*** Թող որ ձեր

համոզմունքները ցույց տան այն խորը սերը, որը դուք ունեք Քրիստոսի և մարդկանց հանդեպ: Կիրառե՛ք ներման սկզբունքը ձեր կյանքում և հրաժարվե՛ք դատող վերաբերմունք ունենալուց մարդկանց հանդեպ: Հաստա՛տ կանգնեք ձեր աստվածաշնչյան համոզմունքների վրա, նույնիսկ եթե ստիպված լինեք մենակ կանգնել:

# Գլուխ 8

# Գիտելիք, ժուժկալություն և համբերատար աստվածապաշտություն

*«<u>Եվ</u> գիտելիքին՝ ժուժկալություն, <u>և</u> ժուժկալությանը՝ համբերություն, <u>և</u> համբերությանը՝ աստվածապաշտություն»:*
Բ Պետրոս 1.6 (KJV)

Թող այս դասի վերնագիրը չվախեցնի ձեզ: Ամեն ինչ այնքան բարդ չէ, որքան թվում է: Պետրոսի երկրորդ թղթի 1.5,6-ում Պետրոսը գրում է. «*...և առաքինությանը՝ գիտելիք, և գիտելիքին՝ ժուժկալություն, և ժուժկալությանը՝ համբերություն, և համբերությանը՝ աստվածապաշտություն...*» (KJV): Ինչո՞ւ է Խոսքը հանձնարարում գիտելիք ավելացնել մեր բարոյական գերազանցությանը կամ առաքինությանը: Մի՞թե նպատակը՝ մեզ ավելի խելացի դարձնելն է: Ինչ-որ չափով՝ այո՛: Մի՞թե մենք պետք է գիտելիք ձեռք բերենք, որպեսզի իմանանք բոլոր բարդ հարցերի պատասխանները: Հրաշալի կլիներ, եթե իմանայինք բոլոր բարդ հարցերի պատասխանները, բայց դրա համար մեզ տրվել է Սուրբ Հոգին: Նա՝ *Միակն է,* Ով *գիտի* մարդկանց սրտերը *և ունի բոլոր պատասխանները:*

Ես համոզված եմ, որ գիտելիք ձեռք բերելու գլխավոր պատճառն այն է, որ գիտելիքը՝ համար առաջին բուժումն է կասկածներից: Ես չգիտեմ ավելի մեծ սահմանափակում, որը մարդը կարող է կառուցել Աստծո և իր միջև, քան Նրան կասկածանքով վերաբերվելը: *Կասկածը կառուցվում է երկու հիմքի վրա՝ **անտեղյակության և անհավատության:*** Մեր կյանքը կասկածներից և սահմանափակումներից ազատելու համար **պետք է քանդենք այս երկու հիմքերը**: Անտեղյակությունից ազատվելու համար **մենք պետք է գիտելիք ձեռք բերենք**: Իսկ անհավատությունը մեր կյանքից հեռացնելու համար **պետք է կատարենք այն, ինչ սովորել ենք**: ***Երբ այսպես վարվենք, խոստումները կիրականանան, և անհավատությունը կհեռանա:***

Գիտելիքը շատ կարևոր է՝ Աստծո և ձեր միջև սահմանափակումները հեռացնելու համար: Դուք համոզված չե՞ք, որ Աստված իսկապես ցանկանում է բժշկել բոլորին: Այդ դեպքում, կարդացե՛ք Աստվածաշունչը և ճանաչե՛ք Նրա կամքը բժշկության վերաբերյալ: Ի՞նչ է Նա ասում: Նրա խոսքերը որևէ պայմաններ ունե՞ն: Այդ խոստումները վերաբերո՞ւմ են ձեզ: Իսկ ի՞նչ կասեք, երբ տանջող մտահոգություն եք ունենում, թե արդյո՞ք Աստված օգնության կգա ձեզ: Դուք կասկածո՞ւմ եք: Եթե այո, դա նույնպես սահմանափակում է: Որպեսզի հեռացնեք այն, դուք պետք է գիտելիք ձեռք բերեք Աստծո բնավորության մասին, նաև՝ Նրա շնորհքի, ողորմության և ձեր հանդեպ ունեցած անվերջ սիրո:

Մտածե՛ք ձեր մասին: Ո՞ր բնագավառներում դուք չունեք գիտելիք Աստծո մասին: Այդ բնագավառները խոցելի են սահմանափակումների և արգելքների համար, որոնք կարող են առաջանալ ձեր և Աստծո միջև: Որոշո՛ւմ կայացրեք գիտելիք ձեռք բերել այդ բնագավառների մասին: Դուք չեք կարող հիմնվել միայն Աստծո մասին վկայությունների, գրքերի կամ մեկնաբանություն-

ների վրա: Դրանք կօգնեն և կոգեշնչեն ձեզ, բայց **Տիրոջ մասին գիտելիք ստանալու միակ վստահելի աղբյուրը Նրա Խոսքն է՝** Աստվածաշունչը: Այդ դեպքում, ձեր բարոյական գերազանցության և հավատքի հետ մեկտեղ, այս նորագյուտ գիտելիքը Տիրոջ հանդեպ ***անպարտելի հավատք*** կառաջացնի ձեզանում:

## ԺՈՒԺԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ժուժկալությունը կարելի է անվանել նաև *ինքնատիրապետում:* Ես մանրամասնորեն չեմ խոսի ինքնատիրապետման մասին, քանի որ բոլորս էլ գիտենք, թե ինչ է այն նշանակում: Այնուամենայնիվ, ցանկանում եմ ցույց տալ ձեզ, որ **ինքնատիրապետումն առանց գիտելիքի սովորաբար փակուղու է տանում**: Եթե փորձեք վերահսկել ձեր անձն ինչ-որ հարցում, բայց չիմանաք, թե ինչու պետք է անեք դա, դուք, որպես կանոն, տեղի կտաք այն բանին, ինչից փորձում էիք հեռու մնալ: Ես պարզ օրինակ կբերեմ դիետայի վերաբերյալ: Երբ դուք գիտեք, որ ձեր մարմինն աշխատում է կանոնավոր մեխանիզմի պես, և դուք պետք է օգտակար էներգիա, սպիտակուցներ և ճարպեր տրամադրեք, որպեսզի այն մաքուր լինի և պատշաճ կերպով գործի, դուք ավելի հեշտորեն կվերահսկեք ձեզ սնվելու բնագավառում: Այնուամենայնիվ, եթե դուք չունեք գիտելիք այս մասին և միայն ցանկանում եք լավ տեսք ունենալ ձեր նախկին դասարանցիների հետ հանդիպման երեկույթին կամ մեկ այլ կարևոր միջոցառման ժամանակ, ձեր ինքնատիրապետման օրերը հաշված են: *Նույնիսկ եթե* հասնեք ձեր նպատակին մինչև այդ օրը, դրանից հետո դուք կվերադառնաք ձեր հին սովորություններին և կսկսեք ուտել՝ ինչ ցանկանաք:

***Երբ մենք չգիտենք, թե ինչու պետք է ինքնատիրապետում ունենանք*** *որոշ բնագավառներում,* ***չենք արդարացնի*** *մեր հույ-*

*սերը դրանցում*: Մենք պարզապես *մեղքի զգացում կունենանք և կսկսենք դատապարտել ինքներս մեզ:* Արդյունքում մենք ***սահմանափակում կդնենք Աստծո և մեր միջև:*** Մենք կսկսենք մտածել, որ կձախողվենք այդ բնագավառներում, եթե կրկին փորձենք: Այնպես որ, մենք արգելք կդնենք՝ ասելով Աստծուն, որ Նա նույնիսկ չդիպչի մեր կյանքի այդ բնագավառներին:

Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչու է կարևոր, որ ինքնատիրապետումը միախառնվի գիտելիքի հետ: ***Գիտելիքը սնուցում է ինքնատիրապետումը և ուժ է տալիս, որ կատարենք մեր առջև դրված առաջադրանքը:*** Այն վստահություն է հաղորդում մեզ, որ անենք այն, ինչը մեր ուժերի սահմաններում է, և այժմ Աստված *ազատորեն կարող է գործել* մեր կյանքում:

## ՀԱՄԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՍՊԱՍՈՒՄ Է ԱՍՏԾՈ ԼԱՎԱԳՈՒՅՆԻՆ

Համբերությունը այն չէ, ինչ դուք մտածում եք: Այն անհույս ակնկալիք չէ, որով ապրում են որոշ քրիստոնյաներ: Համբերությունը չի նշանակում՝ ժպտալով ընդունել այն, ինչ բաժին է ընկնում ձեզ կյանքում: **Համբերությունը քրիստոնեության *պատերազմող* մասն է**: Համբերությունն ասում է. ***«Կարևոր չէ, թե ինչ փորձություններ և նեղություններ են պատահելու ինձ, քանի որ Աստված փոխելու է ամեն ինչ»:***

«Համբերություն» բառը նշանակում է *«հաստատուն և կայուն սպասում»:* Այս սահմանումն ինքնին ուժեղ բնավորություն է ենթադրում: Համբերությունը երբեք չի սասանվում, երբեք չի փոխվում և մշտապես, ամեն իրավիճակում սպասում է Աստծուց տրված լավագույնին: Եթե դուք չեք համարում, որ սա հոգևոր ուժ է, ապա հաջորդ շաբաթվա ընթացքում փորձեք տեսնել,

թե որքանով կկարողանաք կայուն և հետևողական սպասում ունենալ Տիրոջից այն իրավիճակում, որին բախվում եք: Դուք արագորեն կբացահայտեք ձեր համբերության չափը:

Ինքնին հասկանալի է, որ *եթե դուք հաստատուն և կայուն չեք* Աստծուն *սպասելու մեջ*, **ձեր համբերության պակասը սահմանափակում է Նրան**: Կրկին, դուք կարող եք բացահայտել ձեր կյանքի սահմանափակումները՝ գտնելով այն բնագավառները, որոնցում համբերության պակաս ունեք:

Հակոբոսի գիրքը շատ խստորեն է խոսում համբերության մասին: Հակոբոսի 1.2-4-ում գրված է, թե որքան զորավոր և կարևոր է համբերությունը մեզ համար: Գրված է.

*«Բոլորովին ուրախություն համարեք, եղբայրնե՛րս, երբ որ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք.*

*Գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում:*

*Իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որ կատարյալ և ամբողջ լինեք, և ոչ մի բանի պակասություն չունենաք»:*

Տարիներ առաջ **ես մտածում էի**, որ այս խոսքերը նշանակում են հետևյալը. երբ նեղություններ են գալիս, ես պետք է **ժպտալով կրեմ, մինչև որ դրանք լիովին հեռանան**: Կսկիծը սրտումս և արցունքն աչքերիս՝ սրտաշարժ կերպով ասում էի. «Ես ուրախություն եմ համարում սա»: Այնուամենայնիվ, նեղության ամբողջ ընթացքում ես ասես ներքուստ մահանայի, և չէի հասկանում, թե ինչպես կարող էի «ուրախություն» համարել դա:

Այնուամենայնիվ, Հակոբոսը բոլորովին այլ բան նկատի ուներ, և 2-4 խոսքերը նա գրում էր քրիստոնեական *պատերազմող* մտածելակերպով, որը ենթադրում է, որ դուք պետք է լարեք ձեր

հոգևոր ուժերը: Թույլ տվեք շրջասության ենթարկել Հակոբոսի խոսքերն այս հատվածում. *«Իմացե՛ք հետևյալը. դուք կարող եք անցնել ամեն նեղությունով, որ երբևէ կբախվեք,* ***եթե հաստատուն և կայուն սպասում ունենաք*** *ձեր ցանկալի ավարտի համար: Եթե դուք բոլորովին ուրախություն համարեք նեղության ամբողջ ընթացքը, այն կավարտվի ձեզ համար հենց ձեր սպասված կերպով»:*

**Զարմանալի՜ է**: Իհարկե, մենք ուրախությունից չենք թռչկոտում, երբ նեղությունների կամ դժվարությունների ենք բախվում. չէ՞ ոչ մենք խելագար չենք: Այնուամենայնիվ, մենք կարող ենք ուրախ լինել՝ իմանալով, որ ***մեր հաստատուն և կայուն սպասումն արդյունք կտա:*** Մենք **նոր մակարդակի** ենք բարձրանալու **Աստծո մեջ**. ահա թե **ինչի վրա դուք պետք է կենտրոնանաք և ինչով պետք է ուրախանաք**: Դուք կարող եք կրաքարի պես պնդացնել ձեր ճակատը՝ հաստատ իմանալով, որ կանցնեք ձեր նեղության միջով: Իմ ընկե՛ր, այս վերաբերմունքը պարզապես վճռականություն չէ. երբ սա դառնում է ձեր կյանքի ոճը, սա արդեն համբերություն է՝ գործողության մեջ:

Երբ որևէ նեղության կամ դժվարության եք բախվում, *անօգնական մի՛ զգացեք ձեզ և մի՛ սահմանափակեք Աստծուն:* Եթե դուք չգիտեք՝ ինչ անել, *աղոթե՛ք Սուրբ Հոգով*, մինչև որ իմաստություն կստանաք Նրանից: *Մի՛ կենտրոնացեք նեղության վրա:*

Ես ճանաչում էի մի երիտասարդի, ով վարորդական դպրոց էր գնում, և նրա հրահանգիչը մեքենա վարելու մի շատ կարևոր սկզբունք էր սովորեցրել նրան: Այդ մարդն ասել էր. «Մի՛ կենտրոնացիր առջևիդ մեքենայի վրա: Մի՛ կենտրոնացիր կողքիդ մեքենայի վրա: **Նայի՛ր առաջ**: Նայի՛ր առջևիդ երթևեկությանը և մշտապես կկարողանաս ժամանակին արգելակել»: Ես նկատել եմ, որ միևնույն սկզբունքը ճիշտ է ոլորուն ճանապար-

հի դեպքում: Եթե դուք միայն նայեք ձեր մեքենայի առջևի մասին, դուք դժվարությամբ կվարեք այն: Բայց եթե առաջ նայեք և տեսնեք, թե ինչպես է ճանապարհը թեքվում, դուք հեշտորեն կընթանաք դրանով:

Նույն սկզբունքը ճիշտ է նաև հոգևոր կյանքում: Երբ գալիս են նեղությունները և դժվարությունները, **մի՛ կենտրոնացեք ձեր ներկա իրավիճակի վրա**: Առա՛ջ նայեք: ***Նայե՛ք նեղության և դժվարության միջով և տեսե՛ք այն ավարտը, որը ցանկանում եք ունենալ:*** Հակոբոսը խոսում էր հենց այս վերաբերմունքի մասին՝ պատվիրելով «բոլորովին ուրախություն համարել» մեր իրավիճակը:

Դուք պետք է այսպես ապրեք: *Դուք պետք է որոշում կայացնեք, որ դժվարությունները հաղթահարող մարդ եք լինելու*: Իմացե՛ք, որ **Աստված ձեզ հետ կլինի, կօգնի ձեզ** և **երբեք չի թողնի**: Եթե դուք չգիտեք սա և այսպես չեք ապրում, երբեք չեք հասնի հոգևոր հասունության: **Դուք մշտապես** ինչ-որ կերպով **կսահմանափակեք Աստծուն** և մշտապես պակասություն կունենաք ձեր կյանքի որևէ բնագավառում: Սա է *պատճառը*, որ Պողոսը համբերությունը ավելացրեց ինքնատիրապետմանը: **Անչափ կարևոր է, որ հաստատուն և կայուն լինենք սպասման մեջ, որպեսզի ոչ մի բանի պակասություն չունենանք**:

Այս ամենին՝ գիտելիքին, ժուժկալությանը և համբերությանը, ավելանում է աստվածապաշտությունը: Աստվածապաշտություն նշանակում է՝ ապրել՝ ինչպես Հիսուսը կապրեր, այսինքն՝ ապրել այնպես, որ ձեր և Աստծո միջև չլինի *ոչ մի սահմանափակում կամ արգելք՝ առաջացած կասկածների և անհավատության պատճառով:* Այն նույնպես նշանակում է, որ ձեզ հասանելի է կյանքը՝ լի սքանչելիքներով, որոնք դուք արտոնված եք վայելելու, քանի որ ապրում եք Աստծո արդարության մեջ:

*Աստվածապաշտությունը պարզապես նշանակում է՝* ***պաշտել Աստծուն:*** Երբ մենք պաշտում ենք Աստծուն, մեր կյանքը բնականորեն աստվածապաշտ է դառնում: Աստվածապաշտությունը չի որոշվում ձեր մազերի երկարությամբ կամ, կանանց դեպքում, շպարի առկայությամբ: Կրոնական ծեսերը և կանոնները չեն արտահայտում աստվածապաշտությունը: **Երբ մենք պաշտում ենք Նրան, մենք ցանկանում ենք** ***վարվել Նրա պես, խոսել Նրա պես և հաճեցնել Նրան*** **մեր կյանքի ամեն բնագավառում**: Մենք վերաբերվում ենք մարդկանց այնպես, ինչպես Նա կվերաբերվեր: Մենք սիրում ենք մարդկանց անպայմանական սիրով, ինչը և տանում է մեզ դեպի Պետրոսի կողմից նշված վերջին երկու քայլերը:

# Գլուխ 9

# Եղբայրասիրություն և սեր

*«Եվ աստվածապաշտությամբ՝ եղբայրասիրությունը,*
*և եղբայրասիրությամբ՝ սերը»:*
**Բ Պետրոս 1.7**

Եթե դուք սահմանափակել եք Աստծուն, կամ ձեզ թվում է, թե Նա չի օգնելու ձեզ, դուք չեք կարողանա հեշտորեն եղբայրասիրությամբ և սիրով վարվել: Թույլ տվեք բացատրել: Թեև եղբայրասիրությունը և սերը նման են, դրանց միջև իմաստային տարբերություն կա: Հունարեն լեզվում **եղբայրասիրություն** ցուցաբերելը նշանակում է *«ջերմ և գորովալից լինել»,* իսկ **սեր** ցուցաբերելը՝ *«սիրել՝ սոցիալական կամ բարոյական իմաստով»:* Պետրոսը հորդորում էր մեզ դրսևորել այս երկու հատկանիշները՝ աստվածապաշտության հետ:

Հեշտ է բարություն ցուցաբերել այն մարդկանց, ում մենք սիրում ենք, բայց Տերը ցանկանում է, որ մենք բարություն **ցուցաբերենք ամեն մեկին**, հատկապես՝ Աստծո ընտանիքի անդամներին: Ես շատ պատմություններ եմ լսել այն մասին, որ մարդիկ, ում մասին չարախոսել էին, բամբասել էին, կամ ում հանդեպ սխալ էին վարվել, արձագանքել էին դրան՝ հատուկ ընթրիք պատրաստելով իրենցից չարախոսող մարդկանց համար կամ նրանց նվերներ տալով: Նման արձագանքը ոչ միայն *պաշտպանել էր նրանց դառնութ-*

*յունից և վրդովմունքից, այլև դարձել էր* ***աստվածապաշտ վարքի օրինակ հալածանքի ժամանակ:*** Այդպես արձագանքելով նրանք *ջերմություն և գորովանք* էին ցուցաբերել այն մարդուն, ով հեռու էր Տիրոջից: Եղբայրասիրությունը կամ բարությունը մեղադրանքներով և դառնությամբ լի խոսքերին բարի խոսքով է պատասխանում:

Բարության մեկ այլ տեսակ է՝ *ձեր միջոցներով* մարդկանց *օգնելը:* Եթե դուք սահմանափակեք Աստծուն ֆինանսական բնագավառում, **դուք երբեք օրհնություն չեք դառնա մարդկանց համար, այսինքն՝ չեք լինի այնպիսին, ինչպիսին Աստված ստեղծել է ձեզ:** Որոշ ժամանակ առաջ ես լսում էի մի քրիստոնյա կնոջ, ով խիստ մեղավոր էր զգում իրեն, քանի որ մեծ հարստության տեր էր: Ես արագ բուժում գիտեմ նրան տանջող ցավի համար՝ մարդկանց նյութապես օգնելը: Երբ օգնում եք կարիքավորներին, դուք քրիստոսանման եք վարվում նրանց հանդեպ: Արդյունքում նրանց սիրտը և սպասումներն ուղղվում են Աստծուն: Աստված հոգում է կարիքները մարդկանց միջոցով, և եղբայրասիրության իմաստը հենց սրանում է: Եթե այդ կինը միջոցներ տրամադրեր կարիքավորներին, նա կսկսեր դիտարկել իր հարստությունը որպես օրհնություն Աստծուց, որպես գործիք՝ Նրա ձեռքում:

Եղբայրասիրությունը չի սահմանափակվում մարդկանց նյութապես աջակցելով: Այն նույնպես արտահայտվում է *ընկճված կամ հիասթափված մարդուն բարի խոսք ասելով:* Այն արտահայտվում է՝ երբ բժիշկը զրոյացնում է հիվանդի հաշիվը, քանի որ նա անկարող է վճարել: Այն արտահայտվում է՝ երբ զանգահարում եք ձեր միայնակ ընկերներից մեկին: Այն արտահայտվում է՝ երբ առաջարկում եք խնամել ինչ-որ մեկի երեխաներին, որպեսզի նա կարողանա մի փոքր ժամանակ տրամադրել իրեն: Այն արտահայտվում է՝ երբ խրախուսական երկտող եք գրում ձեր երեխայի ուսուցչին կամ նամակ եք ուղարկում որևէ ծառայողի՝ պարզապես գրելով, թե որքան եք գնահատում նրան: Այլ կերպ ասած՝ **եղբայրական սերը նշանակում է՝ անել ուրիշնե-**

րի համար այն, ինչ կցանկանայիք, որ մարդիկ անեին ձեզ համար: *Հաճախ այն մարդիկ, ում հանդեպ բարությամբ են վարվել, այնպիսի զգացողություն են ունենում, ասես* ***Աստված Ինքը իջավ իրենց մոտ և հայտնեց Իրեն՝ այլ մարդու գործերի միջոցով:***

Երբ կապանքների մեջ եք զգում ձեզ, կամ՝ երբ թվում է, թե Աստված մոռացել է ձեր մասին, մի՛ նստեք և տրտմեք, և ավելի մի՛ սահմանափակեք ձեզ: Փոխարենը, **դարձե՛ք օրհնություն ինչ-որ մեկի համար**: Այդկերպ դուք կբացահայտեք, որ երբ եղբայրասիրությամբ եք վարվում, այն *սահմանափակումները*, որոնք ստեղծել եք ձեր և Աստծո միջև, *կանհետանան:* Դուք կպարզեք, որ մարդկանց բարություն ցուցաբերելու միջոցով ինքներդ եք բաց դառնում Նրա սիրո և բարության համար: Նույնիսկ եթե ձեր կատարած գործերը հասարակ լինեն, դուք ինքներդ բավականություն կստանաք դրանցից:

Սերը մի փոքր այլ իմաստ ունի: Այս բառի հունարեն թարգմանությունից (*«սիրել՝ սոցիալական կամ բարոյական իմաստով»*) տեսնում ենք, որ Աստծո սերը միշտ չէ, որ մեղմ է: Երբեմն *ճշմարիտ սերը խիստ է.* հավանաբար, դուք լսած կլինեք «խիստ սեր» արտահայտությունը: Ինչ վերաբերում է սոցիալական կամ բարոյական խնդիրներին, հաճախ ճշմարիտ սեր ցուցաբերելու *աստվածապաշտ տարբերակը*՝ Աստծո Խոսքի համեմատ դիրքորոշում ունենալն է: **Աստված վարվում է այնպես, ինչպես ասել է**: Եթե Աստված մեղք է անվանում որևէ արարք, նշանակում է՝ դա մեղք է: Եթե Աստված պատվիրում է ապրել որոշակի ձևով, Նա հենց դա էլ նկատի ունի: Աստված չի ներկայացնում Իր բոլոր պահանջները, կարծես ցանկանում է բռնապետի պես վերահսկել մեզ կամ հեռու պահել մեզ զվարճություններից: Ընդհակառակը՝ Աստծո Խոսքը պատվիրաններ է պարունակում, *որովհետև Նա սիրում է մեզ:* Նա գիտի, որ եթե ապրենք այնպես, ինչպես ցանկանանք, մենք կկործանվենք: *Նա այնքան է սիրում մեզ, որ սովորեցնում է ճիշտ ապրել*: Ձեր դիրքորոշումը պետք է լինի համաձայն Նրա Խոսքի՝ ամենայն խոնարհությամբ և աստվածապաշտությամբ:

**Եթե դուք սահմանափակել եք Աստծուն ձեր կյանքում, չեք կարողանա սիրել այնպես, ինչպես Նա է սիրում:** Դուք կլինեք այն մարդկանցից, ովքեր ցանկանում են գործել իրենց նախընտրած ձևով, նաև՝ երբ պատրաստ են զգում իրենց: *Ձեր կյանքի չափանիշները կփոխվեն ամեն նոր իրավիճակի հետ.* դուք անկայուն կլինեք: Փոխզիջման կգնաք, քանի որ ներքուստ համոզված կլինեք, որ ինքներդ պետք է ճանապարհ բացեք ձեզ համար, և որ Աստված չի ցանկանում մասնակցել ձեր կյանքին:

Փոխվելու միակ ձևն է՝ ***կրկին սիրահարվել Տիրոջը և Նրա խոսքին:*** Ասե՛ք Նրան, որ ցանկանում եք, որ ձեր կյանքը հաճելի լինի Նրան, և որ դուք օգնության կարիք ունեք՝ փոխվելու համար: Սկսե՛ք խոսել Նրա հետ ընկերոջ պես, և ամեն առավոտ առաջին հերթին խնդրեք Նրա առաջնորդությունը: Խնդրե՛ք Սուրբ Հոգուն պահապան դնել ձեր շուրթերին և ցույց տալ ձեզ, երբ ձեր արձագանքը տարբեր իրավիճակներում հաճելի չէ Նրան: **Որքան ավելի խորապես սիրահարվեք Աստծուն, այնքան ավելի հեշտորեն կկարողանաք ցուցաբերել Նրա սերն այս աշխարհին:**

*«Որովհետև այս բաները ձեզանում մնալով և աճելով՝ դատարկ և անպտուղ չեն անի ձեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գիտության մեջ»* (Բ Պետրոս 1.8): Ես թույլ տվեցի ինձ մի քանի բառ ընդգծել վերևում բերված խոսքում: Ցանկանում եմ, որ դուք ուշադրություն դարձնեք, որ **եթե կիրառեք ձեր հավատքն** ***աշխատասիրության, առաքինության, գիտելիքի, ժուժկալության, համբերության, աստվածապաշտության, եղբայրասիրության և սիրո մեջ, այս հատկանիշները*** **հաջողակ և հաճելի կդարձնեն ձեր կյանքը**: Ինքնին հասկանալի է, որ եթե սահմանափակեք Աստծուն այս բնագավառներից որևէ մեկում, դուք հակառակ արդյունք կստանաք: Ուրեմն, **հեռացրե՛ք բոլոր սահմանափակումները**՝ քանդե՛ք ձեր կառուցած սահմանները, հեռացրե՛ք ձեր դրած արգելքները և **թո՛ւյլ տվեք Աստծուն գործել ձեր կյանքում այնպես, ինչպես Ինքն է ցանկանում:**

# Գլուխ 10

# Սպասում կամ Տ-Ե-Ս-Ի-Լ-Ք

Մենք գիտենք, որ ձեր սպասումն ավելացնելու հիմքը՝ ձեր մտերմությունն է Աստծո հետ: Մենք նույնպես մանրամասնորեն դիտարկեցինք յոթ քայլերը դեպի լիարժեք հոգևոր կյանք: Այժմ պետք է ավելացնենք մեր սպասումը և տեսիլքը: Հռոմեացիների 4.18-ում՝ «էմփլիֆայդ» թարգմանությունից, գրված է. «[Աբրահամը] առանց [մարդկային պատճառներ ունենալու] հույսի [համար]՝ հույսով հավատաց, որ ինքը դառնալու է շատ ազգերի հայրը, ինչպես որ իրեն խոստացվել էր. «Այսքան [անթիվ] կլինեն քո ժառանգները»»:

Աստվածաշնչի «էմփլիֆայդ» թարգմանությունը որոշ բառեր է ավելացնում քառակուսի փակագծերում, որպեսզի մենք լիովին հասկանանք այս խոսքի իմաստը: Ինչպես տեսնում եք, «**մարդկային պատճառներ**» բառակապակցությունը հետևում է Աբրահամի անվանը: Սա պարզապես ցույց է տալիս, որ թեև Աբրահամն արդար մարդ էր, ով հետամուտ էր լինում արդարությանը, աստվածապաշտությանը, համբերությանը, ինքնատիրապետմանը և մյուս հատկանիշներին, որոնց մասին խոսում էր Պետրոսը, նա, ***միևնույն է***, **մարդ էր**. Աբրահամն իրական զգացմունքներ ունեցող իրական մարդ էր: **Նա պետք է *պայքարեր* նույն սահմանափակումների դեմ**, որոնց դեմ մենք ենք պայքա-

րում: Նա պետք է հաղթահարեր նույն **հիասթափության, հուսահատության և հուսալքվածության** զգացումները, որոնց նաև մենք ենք բախվում: Այս խոսքը պնդում է, որ ***բնականորեն Աբրահամն արդեն ոչ մի հույս չուներ. մնացել էր միայն հավատքի հույսը***, և սա շատ կարևոր է մեզ համար:

*«Հույս»* բառը նշանակում է «**սպասում**»: Այն, ինչ *այս աշխարհը հույս է անվանում*, ընդամենը *ցանկություն* է, ***ոչ թե*** *սպասում:* Աշխարհի հույսն այն է, երբ մարդիկ ասում են. «Հուսով եմ՝ նրա մոտ կստացվի» կամ՝ «Հուսով եմ՝ ամեն ինչ լավ կլինի»: Այդպիսի արտահայտությունները պարզապես ցանկություն են արտահայտում, և դրանցում մշտապես որոշ չափով կասկած կա:

**Աստվածաշնչյան հույսը** բոլորովին այլ է: Այն **լիարժեք և առողջ սպասում է**, որ Աստված կկատարի Իր Խոսքը այնպես, ինչպես խոստացել է: *Այն մարդիկ, ովքեր նայում են միայն Տիրոջը, խոսում են համաձայն աստվածաշնչյան հույսի, որովհետև նրանք հավատում են, որ երբեք հուսախաբ չեն լինի*:

Ի՞նչ անել՝ այդպիսին դառնալու համար. սկսե՛ք խորապես և մտերմորեն սիրել Աստծուն, և է՛լ ավելի հաստատվեք այն յոթ հոգևոր հատկանիշների մեջ, որոնց մասին կարդացիք նախորդ գլուխներում: **Երբ սերն Աստծո հանդեպ ավելանա ձեզանում, իսկ այս հատկանիշներն աճեն և հասունանան, ձեր սպասումը կավելանա:**

## ՊԻ՛ՆԴ ԲՌՆԵՔ ՁԵՐ ՍՊԱՍՈՒՄԸ

Տարեց հասակում Աբրահամը շատ ազգերի հայր դառնալու խոստում ուներ, սակայն իր իրավիճակն անհույս էր թվում իրեն: Նույն կերպով, ձեր իրավիճակները կարող են *անհույս թվալ* ձեզ՝ ***բնական տեսանկյունից:*** Այնուամենայնիվ, դուք չեք կարող հիմնել ձեր սպասումները բնական իրադարձություննե-

րի վրա: **Անկախ այն բանից, որ հավատք ունեք Աստծո հանդեպ՝ ձեր կյանքում լինելու են հիասթափություններ և վշտեր, քանի որ դրանք պարզապես այս կյանքի մասն են**: Ես նույնիսկ կարող եմ մարգարեանալ դրանք ձեզ համար: Բայց հիասթափությունների և վշտերի մյուս կողմում **ճշմարիտ սպասումն** Աստծուց, որը վեր կբարձրացնի ձեզ դրանցից:

Հին կտակարանում եբրայերեն «սպասել» կամ «ապավինել» բառը հաճախ օգտագործվում է «ճշմարիտ սպասում» իմաստով: Եսայի 40.31-ում գրված է հետևյալը. *«...Տիրոջն ապավինողները կնորոգվեն ուժով, թևերով վեր կսլանան արծիվների պես, կվազեն և չեն վաստակի, կգնան և չեն հոգնի»:* Այլ կերպ ասած՝ **եթե Աստված** ինչ-որ բան **է խոստացել ձեզ** Իր Խոսքում, և **դուք ի սրտե ընդունել եք**, կարող եք չկասկածել, որ **Նա կկատարի այդ խոստումը**: Երբ Նրա **խոստումներն** իրական դառնան ձեզ համար, դրանք **կնորոգեն ձեր ուժերը** և կօգնեն հաղթահարել մարդկանց կարծիքները և ձեր թվացյալ հանգամանքները:

***Դուք չպետք է թողնեք ձեր սպասումը:*** Դուք չպետք է անեք դա, նույնիսկ եթե ձեր ընտանիքի անդամներն ասեն. «Դու անմի՛տ ես, եթե հավատում ես այդ բաներին: Դու անխե՛լք ես: Դու շարունակ այդ եկեղեցի ես գնում և փող ես տալիս նրանց: Դու ամեն ժամանակ այնտեղ ես և ներկա ես նույնիսկ նրանց աղոթքի հավաքույթներին: Դու գնում ես կիրակի առավոտյան, կիրակի երեկոյան, շաբաթվա կեսին, և նույնիսկ մասնակցում ես նրանց զբոսախնջույքներին: Չե՞ս տեսնում, որ այդ եկեղեցու միակ նպատակը՝ քո փողն է»:

Ո՛չ. դուք սպասում ունեք Աստծուց, և հենց դա է պատճառը, որ դուք եկեղեցում եք ամեն ժամանակ: Դուք անում եք ճիշտ այն, ինչ գրված է Եբրայեցիների 10.23-ում՝ «Նյու Ինտերնեյշնլ» թարգմանությունից. *«Եկե՛ք անսասան պահենք այն հույսը, որը*

*դավանում ենք, որովհետև Նա, Ով խոստացել է, հավատարիմ է»:* Դուք սպասում ունեք, որ Աստված կկատարի այն, ինչ խոստացել է, և չեք սասանվում:

Թույլ տվեք մի քանի սահմանում ներկայացնել ձեզ այն մասին, թե ինչ է ճշմարիտ սպասումը.

- Սպասումը դեռևս չտեսած բաների *ապացույցն* է և *համոզվածությունն* այն բանում, որ դրանք իրական են:
- Սպասումը փաստ է *համարում* այն, ինչը դեռ չի հայտնվել զգայարաններին:
- Սպասումն Աստծո խոստումների իրականացման *երաշխիքն* է:

## ԽՈՍԵ՛Ք՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

Ավելի քան տասը տարի առաջ Աստված պատվիրեց կնոջս՝ Բարբարային, և ինձ եկեղեցի հիմնել Սան Դիեգոյում: Չնայած ժամանակավոր խոչընդոտներին, հիասթափություններին և դժվարություններին՝ մենք շարունակ հիշեցրել ենք Աստծուն Իր տված խոստման մասին, և ճշմարիտ սպասում ունենք, որ Նա կկատարի այն, ինչ խոստացել է մեզ: Աստված անհավատալի հրաշքներ է գործել մեր եկեղեցու միջոցով: Մեզ հյուրընկալող քարոզիչներն ասում են, որ արտոնված են զգում իրենց՝ քարոզելու մի եկեղեցական համայնքում, որը ձգտում է մարդկանց կյանքերում նոր մակարդակ բերել: Մեր ճանապարհը դեռ շարունակվում է, իսկ մեր տեսիլքը ոչ մի դեպքում չի ավարտվել: Ավելի ճիշտ կլինի ասել, որ *մեր տեսիլքն ավելի է ընդլայնվել, իսկ մեր սպասումը՝ էլ ավելի ուժգին է*, քան տասը տարի առաջ էր:

Այն դասերից մեկը, որը մենք քաղել ենք, հետևյալն է. մենք սովորել ենք, որ պետք է **մշտապես խոսենք մեր սպասումների, ոչ թե մեր փորձառության մասին**: Տիրոջ հանդեպ ձեր հույսն ավելացնելու համար՝ դուք պետք է մշտապես խոսեք ձեր սպասման մասին, ոչ թե ձեր հանգամանքների կամ խնդիրների: Դուք չեք կարող թույլ տալ, որ հապաղումները և շեղող հանգամանքները **խանգարեն** ձեր սպասումների իրականացմանը: Դուք չեք կարող հանձնվել միայն այն բանի համար, որ ամեն ինչ չի ընթանում ըստ *ձեր* ծրագրի: **Ձեր սպասումը պետք է լինի Տիրոջ** ***մեջ*****, ոչ թե Նրանից** ***անջատ:*** Նա է ծրագրել ձեր ընթացքը և որոշել ձեր կյանքի ուղին: Դուք պետք է անեք այն, ինչ արդեն գիտեք. **սկսե՛ք այնտեղից, որտեղ գտնվում եք, զարգացրե՛ք ձեր պարգևները և սպասո՛ւմ ունեցեք, որ Նա կկատարի Իր Խոսքը**:

Աստված հստակ խոստումներ է տվել Իր Խոսքում, որոնք պետք է ծառայեն որպես «սպասման ուղեցույց» ձեզ համար: *Աստվածաշնչում կան հստակ* ***խոստումներ*** *ձեր* ***ամուսնության,*** *ձեր* ***երեխաների,*** *ձեր* ***գործի,*** *ձեր* ***ծառայության,*** *ձեր* ***առողջության,*** *ձեր* ***ընկերական հարաբերությունների,*** *ձեր* ***պաշտպանության*** *և* ***ձեր կյանքի ցանկացած բնագավառի մասին:*** **Աստվածաշնչում կան խոստումներ, որոնք վերաբերում են տղամարդկանց և կանանց, ամուրիներին, այրիներին և տարեցներին**: Գտե՛ք հատվածներ Աստվածաշնչից և կառուցե՛ք ձեր կյանքը դրանց հիման վրա: Մի՛ կարդացեք Աստվածաշունչը՝ մտածելով. «Որքա՜ն լավ էր: Ես այնքա՜ն լավ զգացի ինձ այս հատվածը կարդալիս»: Ո՛չ, **գտե՛ք խոստումներ Աստվածաշնչից և դարձրե՛ք դրանք ձեր կյանքի հենարանը**:

Եթե ձեր երեխաներն ապստամբում են, դուք պետք է *սպասում* ունենաք, որ նրանք կփոխվեն՝ ըստ այն խոստումների, որոնք Տերը տվել է Իր Խոսքում: Ձեր կյանքում չպետք է լինեն միայն սիրելի աստվածաշնչյան խոսքեր, ***այլ այնպիսիք, որոնցում***

*դուք համոզված եք:* Եթե ունեք նման խոստումներ Աստվածաշնչից, և եթե կատարում եք այն, ինչ պահանջվում է ձեզնից, **ձեր սպասումը չի թուլանա,** նույնիսկ եթե ձեր երեխաներն ապստամբեն և անմիտ արարքներ թույլ տան: Դուք ամեն անգամ չեք կորցնի ձեր համբերությունը, չեք բղավի նրանց վրա կամ չեք պատժի՝ հիասթափվելով նրանց վարքից: Հազիվ թե ձեր սիրելի աստվածաշնչյան խոսքերը մխիթարեն ձեզ նման իրավիճակներում:

Պահպանե՛ք ձեր հավասարակշռությունն այդ իրավիճակում և շարունակե՛ք բարի խոսքեր ասել ձեր երեխաների մասին: Աղոթե՛ք, որ Աստված պաշտպանի նրանց և հոգևոր պատնեշ կանգնեցնի նրանց շուրջը, որի միջով *ոչ մի թշնամի* չի կարողանա ներս թափանցել: Աղոթե՛ք, որ նրանք *պահպանեն իրենց կուսությունը:* Աղոթե՛ք, որ *Տիրոջից վախեցող* մարդիկ ընկերանան ձեր երեխաների հետ: Հավատացե՛ք, որ Աստծո Խոսքը *մշտապես լույս կլինի* նրանց ոտքերին: Կարևոր չէ, եթե նրանք սխալներ գործեն՝ ինչպես երեխաների մեծ մասը: Աստված տվել է ձեզ պատասխանատվություն նրանց կյանքում. այնպես որ, **մեծ սպասումնե՛ր ունեցեք** և թույլ մի՛ տվեք, որ ձեր սպասումները խոնարհվեն վիատության առջև: Թո՛ւյլ տվեք, որ Նրա խոստումները լինեն ձեր կյանքի հենարանը ամեն իրավիճակում:

***Այն օրը, որը ապրում ենք առանց սպասման, մենք ապրում ենք առանց հավատքի:***

## ՄԵԾ ՍՊԱՍՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աստծուց տրված բոլոր օրհնությունները առավելություններ են տալիս մեզ, և Տիրոջից մեծ սպասումներ ունենալը բացառություն չէ: Սաղմոս 103.2-6-ում թվարկվում է այդ առավելություններից մի քանիսը.

*«Օրհնի՛ր Տիրոջը, ո՜վ իմ անձ, և մի՛ մոռացիր Նրա բոլոր բարիքները.*

*Որ ներում է քո բոլոր մեղքերը, բժշկում է քո բոլոր ցավերը:*

*Որ փրկում է քո կյանքն ապականությունից, որ պսակում է քեզ շնորհքով և ողորմությամբ:*

*Որ կշտացնում է քո սիրտը բարությամբ, և քո մանկությունը նորոգվում է արծվի պես:*

*Արդարություն է անում Տերը և իրավունք բոլոր զրկյալներին»:*

Չեմ սխալվի, եթե ասեմ, որ ձեր կյանքում չկա այնպիսի հանգամանք, որին այս խոսքերը չեն վերաբերում: Անկախ այն բանից, թե ներկայումս ինչպիսի ժամանակավոր կարիքներ կամ խոչընդոտներ ունեք, ***եթե դուք կատարեք այն, ինչ պահանջվում է ձեզնից***` սպասելով Աստծուց, *Նա կպատասխանի* փրկությամբ և բժշկությամբ: ***Նրա Խոսքում կյանք և խոստումներ կան:*** **Մի՛ սահմանափակվեք՝ մշտապես սպասելով, որ ինչ-որ *զգացողություն կունենաք:*** Մի՛ մտածեք, որ ձեր մարմնով պետք է սարսուռ անցնի, կամ պետք է գետնին ընկնեք Աստծո զորության ներքո, նախքան ձեր կյանքում ինչ-որ բան կկատարվի: Դուք ուզո՞ւմ եք զգացմունքներ ունենալ: Այդ դեպքում, ***զգացե՛ք***, թե ինչպես է ***Խոսքը*** մուտք գործում ձեր սիրտը և միտքը: ***Չկա Աստծո գրված խոստումներից ավելի հաստատ կամ ազդեցիկ բան:***

Սաղմոս 31.24-ում՝ «էմփլիֆայդ» թարգմանությունից, գրված է. *«Ուժե՛ղ եղեք և քաջացե՛ք, բոլո՛րդ, ովքեր սպասում են և հուսացած են Տիրոջը»: **Ուժը*** **անասելի առավելություն է, և դուք ստանում եք այն՝ երբ մեծ սպասումներ ունեք Տիրոջից:** Քաջացե՛ք. թող ձեր սիրտն ուժեղ լինի այն բանում, ինչ Նա խոստացել է ձեզ: ***Ես սպասում եմ, որ ինչ-որ լավ բան կկատարվի, քանի որ գիտեմ, որ Նա երբեք հուսախաբ չի անի ինձ***: Ես սպա-

սում եմ, որ իմ ազգն արթնանա, դուրս գա կրոնական հավատալիքներից և օրհնություն դառնա Տիրոջ համար: Ես մեծ սպասումներ ունեմ և գիտեմ, որ Տերը կփրկի և կբժշկի:

Ես միշտ զարմանում եմ, երբ կարդում եմ Դավթի մասին Հին կտակարանում: Նա անհավատալի սպասում ուներ Տիրոջից: Դավթի բոլոր նեղությունների և դժվարությունների մեջ, նույնիսկ երբ Սավուղը և նրա անառողջ միտք ունեցող զինվորները հետապնդում էին նրան՝ նրա կյանքը խլելու համար, նա երբեք չտրտնջաց և չբողոքեց: ***Նա հստակ սպասում ուներ:*** Այն ժամանակ, երբ Դավիթը ցերեկ ու գիշեր պետք է զգուշանար, նա ***հռչակեց իր հաստատ սպասումն*** Աստծուց: Սաղմոս 118.17-ում նա հայտարարեց. *«Ես չեմ մեռնի. կապրեմ և Տիրոջ գործերը կպատմեմ»:* Նրա անզիջում սպասումը մեծ ուժ ստեղծեց կյանքում, և ի վերջ դարձրեց նրան Իսրայելի մեծագույն թագավորներից մեկը:

***Ուրախությունը***՝ **մեծ սպասման ևս մեկ առավելություն է:** Ընկճված, խոժոռված և մելամաղձոտ մարդիկ, կամ նրանք, ովքեր մշտապես ասում են՝ երանի՜ Հիսուսը շուտ գար, մեծ սպասում չունեն: **Երբ դուք սպասում եք Տիրոջը և սնուցում եք ձեր սիրտը Նրա Խոսքով, դուք ընկճված չեք լինի, քանի որ գիտեք՝ ինչպիսին էլ լինի ձեր իրավիճակը, դուք չեք պարտվի**: Եթե դուք մեծ սպասում ունենաք, չեք ցանկանա, որ Հիսուսը վերադառնա միայն՝ որ դուք ազատվեք հաջորդ վարկային վճարումից. դուք կունենաք ուժ և տեսիլք՝ ձեր առջև դրված առաջադրանքը կատարելու համար:

**Մեծ սպասման հաջորդ առավելությունը՝** ***վերականգնումն*** է: Սաղմոս 130.7-ը պնդում է. *«Իսրայելը թող հուսա Տիրոջը, որովհետև Տիրոջ մոտ կա ողորմություն, և Նրա մոտ կա շա՜տ փրկություն»:* Միգուցե ասեք. «Հովի՜վ, երեկ ես աններելի մեղք

եմ գործել»: *Կարևոր չէ, թե ինչ մեղք եք գործել երեկ կամ անցյալ տարի.* եթե դուք *գտնեք* աստվածաշնչյան *խոստումները վերականգնման, արդար դիրքի և ներման* մասին և *սպասում ունենաք*, որ դրանք իրականանալու են ձեր կյանքում, *Աստված Իր առատ շնորհքով կների և կվերականգնի ձեզ:*

**Սպասումը նույնպես** *կյանք* **կտա ձեզ**: Սաղմոս 119.49,50 խոսքերում Դավիթն ասում է հետևյալը. «*Հիշի՛ր Քո ծառայի վրա եղած խոսքը, որ ինձ նրան հուսալ տվիր: Իմ նեղության մեջ այն է իմ մխիթարությունը, որ Քո Խոսքն ապրեցնում է ինձ*»: ***Իմ սպասումը կյա՛նք է բխեցնում ինձնից:*** Նույնիսկ եթե ես այնպիսի լուրեր լսեմ, որոնք փորձեն խեղդել իմ սպասումը Տիրոջ մեջ, ես է՛լ ավելի կխորասուզվեմ Խոսքի մեջ և կնորոգեմ իմ կյանքը: Ես ակնկալում եմ կյա՛նք: Ես ակնկալում եմ մե՛ծ եկեղեցի: Ես ակնկալում եմ, որ կերակրելու եմ Սան Դիեգո քաղաքի աղքատներին: Ես բարի բաներ եմ սպասում իմ բնակավայրում և իմ կյանքում, որովհետև ***Նրա Խոսքը*** հույս է առաջացնում իմ ներսում:

Մենք՝ քրիստոնյաներս, **այն պատասխանն ենք**, որն այս աշխարհը փնտրում է: Շատերի համար մենք միակ «Հիսուսն» ենք, որին նրանք երբևէ տեսնելու են: Ձեր կյանքը պետք է այնքա՛ն լեցուն լինի հոգևոր ուժերով և ուրախությամբ, որ *հրապուրի* մարդկանց: Նրանք պետք է ***ցանկանան*** այն, ինչ դուք ունեք: Սա է պատճառը, որ դուք այս երկրի աղն եք. դուք պետք է քաղց առաջացնեք մարդկանց մոտ այն ամենի հանդեպ, ինչ գիտեք: **Այն սպասումը, որը դուք ունեք Տիրոջ մեջ, անպայման պատասխանվելու է**, անկախ այն բանից՝ այդ պատասխանն արդեն լինվին հայտնվե՞լ է բնական աշխարհում, թե՞ ոչ:

Մեր օրերում մարդիկ ասում են. «Վախենում եմ, որ ահաբեկիչները ներխուժեն մեր պետության կոմպյուտերային համակարգի մեջ: Վախենում եմ, որ նրանք թունավորեն մեր ջրա-

յին համակարգերը կամ այլ կերպով հարձակվեն մեր երկրի վրա: Ես գիտեմ, որ միշտ ինչ-որ վտանգ կա, որը դեռ հայտնի չէ մեզ: Ես նույնիսկ վախենում եմ հանրախանութ գնալ. միգուցե ինձ սպանեն այնտեղ»: Դուք պարզապես պետք է **թույլ տաք, որ ձեր սպասումը** *լույս արձակի*՝ պատասխանելով. ***«Ես հուսացած եմ Տիրոջը»:*** Խոսքն ասում է, որ **Տերը՝ մեր բարձր աշտարակը և անուր ամրոցն է**: Խոսքն ասում է, որ **թեև հազարավոր մարդիկ ընկնեն մեր կողքին, *Նա* կպաշտպանի մեզ**: Ես *սպասում ունեմ*, որ Նրա խոստումները կատարվելու են իմ կյանքում:

*Այն, որ դուք մեծ սպասում ունեք, չի նշանակում, որ պետք է անզգույշ լինեք:* Դուք պետք է մշտապես **իմաստությամբ վարվեք**: Մենք ապրում ենք Կալիֆոռնիայում, որտեղ հաճախակի երկրաշարժեր են լինում, և այդ պատճառով միշտ ունենք պահված ջուր, սնունդ, առաջին օգնության պարագաներ, որոշ գումար, մարտկոցներ, լապտերներ և նման բաներ: Մեզ մոտ կարող է հանկարծակի երկրաշարժ լինել, որը, հնարավոր է, մեծ ավերածություններ առաջացնի: Այնուամենայնիվ, մեր սպասումն ուղղված է Տիրոջը, և որպես բարի տնտեսներ՝ մենք նույնպես պատրաստվել ենք լավագույնս հոգալ մեր մասին: Մենք վստահում ենք Աստծուն մեր անմիջական անվտանգության համար: Եվ դուք նույնպես պետք է ուղղեք ձեր սպասումը Տիրոջը՝ ինչ իրավիճակում էլ լինեք:

## ՍՊԱՍՈՒՄ ԿԱՄ ՏԵՍԻԼՔ

Անկասկած՝ սպասումը *մշտապես* ուղեկցվում է տեսիլքով: Հետաքրքիր է, որ *«տեսիլք»* բառը նշանակում է՝ «հայտնված ճշմարտություն»: Ճշմարիտ տեսիլքը ձեր սրտում՝ ընդամենը ցանկություն չէ. այն ճշմարտություն է, որը *հայտնվել* է ձեզ: **Որ-**

քան աճում է ձեր սպասումը, այնքան ընդլայնվում է ձեր տեսիլքը կամ հայտնությունը:

Ահա թե ինչու է Առակաց 29.18-ում գրված. «Որտեղ տեսիլք չկա, ժողովուրդը կործանվում է» (KJV): Մեկ այլ թարգմանության մեջ գրված է. «Առանց մարգարեության՝ ժողովուրդը կվայրենանա», կամ՝ «...անզուսպ կդառնա»: Եթե **չկա հայտնված ճշմարտություն**, նշանակում է՝ **չկա սպասում**: Որտեղ չկա սպասում, չկա նաև **զսպվածություն**, և **մարդիկ թողնված են՝ անելու այն, ինչ կամենում են**: ***Իսկ երբ չկա հույս և զսպվածություն, մարդիկ կործանվում են:*** **Դուք չեք կարող սպասում ունենալ՝ առանց տեսիլքի**: Դուք չեք կարող լիովին հավատալ Տիրոջ Խոսքին՝ առանց տեսիլքի, որը տեսնում է կատարված խոստումներ, անկախ այն բանից՝ դրանք արդեն հայտնվե՞լ են բնական աշխարհում, թե՞ ոչ:

Ահա թե ինչու դուք չեք կարողանում տեսնել ձեր բժշկությունը. պատճառն այն է, որ ձեր սպասումը փոքր է: Եթե դուք չեք կարողանում տեսնել, որ բավականաչափ գումար ունեք՝ ձեր հաշիվները մարելու համար, նշանակում է՝ ձեր հույսն Աստծո խոստումների հանդեպ փոքր է: *Սպասումն ու տեսիլքն* ***անբաժան*** *են*: Անկարելի է ունենալ մեկը՝ առանց մյուսի: Եթե չունեք հայտնություն որևէ խոստման մասին, դուք ոչնչի չեք սպասի: Այնուամենայնիվ, եթե դուք *հայտնություն ունենաք* այդ խոստման մասին և *ստանաք այն, ձեր սպասումը կավելանա, և ձեր ունեցած հայտնությունը է՛լ ավելի կընդլայնվի:*

Տեսիլքը պետք է հասունանա **ձեր ներսում**, որպեսզի կատարվի, իսկ դա տեղի չի ունենում մեկ օրում: Այն մաս առ մաս ձևավորվում է ձեր ներսում, և երբ դուք աճ եք ունենում Խոսքի մեջ և ավելացնում եք ձեր սպասումը, ձեր տեսիլքին նորանոր մասեր են ավելանում: Երբևէ լսե՞լ եք այսպիսի արտահայտություն. «Դուք պետք է պատկեր ստանաք ձեր ներսում»: Դա ճշմա-

րիտ է. ձեր ներսում պետք է պատկեր ձևավորվի, բայց **Սուրբ Հոգին** է տալիս այդ պատկերը:

Ահա մի գեղեցիկ օրինակ այն մասին, թե ինչպես է տեսիլքը ծնվում մեր կյանքում: Երբ մենք վերստին ծնվում ենք, Սուրբ Հոգին բնակվում է մեր ներսում: Դուք կարող եք համեմատել Սուրբ Հոգուն վրձնի հետ, ձեր սիրտը՝ կտավի հետ, իսկ Աստծո Խոսքը՝ ներկերի հետ: Ամեն անգամ, երբ դուք աստվածաշնչյան խոսքեր եք հռչակում ձեր կյանքում, Սուրբ Հոգին *հպվում է* Իր *վրձնով* Խոսքի բազմաթիվ երանգներին և *պատկերում է* ձեր տեսիլքի մի մասը ձեր սրտի կտավի վրա: *Երբ ավելի եք սնվում* Աստծո Խոսքով, *նորանոր գույներ են ավելանում*, և *Սուրբ Հոգին ավելին է պատկերում ձեր սրտին:* Մեկ օր, երբ ձեր սպասումը հասնում է գագաթնակետին, *ձեր հրաշալի տեսիլքն ավարտված է լինում*, և դուք տեսնում եք ամբողջ պատկերը: ***Հենց որ տեսնեք այն, կարող եք ձերը համարել:*** Ոչինչ կամ ոչ ոք չի կարողանա խլել ձեզնից այդ պատկերը կամ տեսիլքը, որովհետև դուք արդեն ***տեսել եք*** այն:

Ձեր կարծիքով, ինչպե՞ս Հիսուսը կարող էր Խաչը բարձրանալ և կրել Խաչի տառապանքները: Միգուցե դուք պատասխանեք. «Հովի՛վ, Նա Աստվա՛ծ էր»: Այո՛, ճիշտ է, բայց Նա նույնպես մարդու կերպարանք ուներ և զգում էր բոլոր մարդկային ցավերն ու նեղությունները: Այն տեսիլքը կամ հայտնված ճշմարտությունը, **որը պատկերված էր** Նրա սրտին, թույլ տվեց Նրան հաղթահարել չարչարանքները Խաչի վրա: Կարդացե՛ք, թե ինչպես է Եբրայեցիների 12.2,3-ը նկարագրում Նրա չարչարանքները, և թե ինչ է այն պատվիրում մեզ.

> *«Հառե՛նք մեր հայացքը Հիսուսին՝ մեր հավատքի Հեղինակին և Կատարողին, Ով Իր առջև դրված ուրախության համար կրեց խաչը՝ անարգելով դրա ամոթը, և նստեց Աստծո գահի աջ կողմում:*

*Մտածե՛ք Նրա մասին, Ով նման հակառակություն կրեց մեղավոր մարդկանցից, որ դուք չհոգնեք և չհուսահատվեք» (NIV):*

Հիսուսը կարող էր կրել Խաչը, որովհետև ***Նրան հայտնվել էր ճշմարտությունն*** այն մասին, թե ինչ էր կատարվելու արդյունքում: ***Նա տեսավ*** տեսիլքով ***ձեզ, ինձ և անհամար բազմության***, որոնք Իր խոստումներն ընդունելու իրավունք էին ստանալու: ***Նա տեսավ*** տեսիլքով, որ ***թշնամին հավիտյան Իր ոտքերի տակ է: Նա տեսավ*** տեսիլքով, որ ***թշնամին չունի զորություն Աստծո ժողովրդի կյանքում: Նա տեսավ*** տեսիլքով ***անթիվ մարդկանց բժշկությունը, ազատագրումը և հավիտենական անեծքից փրկվելը:***

**Այն սպասումը**, որ Աստծո կամքը կկատարվի Իր միջոցով, և **այն տեսիլքը**, որը դրված էր Իր առջև, ***ուժ* տվեցին Հիսուսին՝ *հաղթելու* ցավը և չարչարանքները Խաչի վրա**: Այն տեսիլքը, որով Հիսուսը գնաց դեպի Խաչը, մինչև օրս պտուղ է բերում ամբողջ աշխարհում: Եթե թեկուզ մեկ պահ մտածեք այս մասին, դուք կպատկերացնեք Նրա կատարած աշխատանքի աներևակայելի հետևանքները: Վերևում բերված աստվածաշնչյան հատվածը հորդորում է մեզ, որ «մտածենք Նրա մասին», որպեսզի չհոգնենք այն նեղություններից, որոնք փորձում են ի չիք դարձնել մեր սպասումը: Ինչպիսի՜ օրինակ:

Այս հատվածը պատվիրում է՝ ուղղել մեր հայացքը Հիսուսին, ոչ թե մեր հանգամանքներին կամ մարդկանց բացասական խոսքերին: Կարևոր չէ, եթե դուք վաճառք չեք իրականացրել՝ ըստ պահանջվող ծավալի, եթե մեկ այլ մեքենա մայրուղու վրա հատել է ձեր ճանապարհը, եթե ձեր տնօրենը միայն բողոքում է ձեզնից, կամ նույնիսկ թվում է, թե դուք անելանելի դրության մեջ եք. ***շարունակե՛ք հուսալ և սպասել Աստծուն:*** Եթե

մենք ուղղենք մեր հայացքը Հիսուսին, մեր սպասումը մեծ և անսասան կմնա:

Վստահ եմ, որ այս գլուխը կարդալուց հետո դուք կտեսնեք, որ ձեր սպասումը ձեր մեջ առաջացնում է ուժ, ուրախություն, վերականգնում և կյանք, նաև ընդլայնում է ձեր տեսիլքը: Ձեր վստահությունը Տիրոջ հանդեպ այնքա՜ն կընդլայնվի, որ կքանդի բոլոր սահմանափակումները, որոնք կառուցել եք Նրա շուրջը:

*Կոտրե՛ք բոլոր կապանքները և ընդարձակվե՛ք:*

## Գլուխ 11

# Թույլ մի՛ տվեք, որ ձեր կյանքը շշնջոց դառնա

Ջեյմս Ռասել Լոուելը մեկ անգամ ասել է. «Միայն հիմարները և մահացածները երբեք չեն փոխում իրենց կարծիքը»: ***Թույլ մի՛ տվեք, որ մարդիկ սահմանափակեն Աստծուն ձեր կյանքում:*** Սաղմոս 92.5,6-ում գրված է. *«Ո՜վ Տեր, քանի՜ մեծ են Քո գործերը. շա՜տ խորն են Քո խորհուրդները: Հիմար մարդը չի իմանում, և անմիտը չի հասկանում այս»:* Դժբախտաբար, այս աշխարհը լի է մարդկանցով, ովքեր ասում են. *«Ես գիտեմ, որ Աստված գոյություն ունի, բայց Նա հետաքրքրված չէ մարդկանց առօրյայով»:* Մյուսներն ասում են. *«Այո՛, Աստված գոյություն ունի, բայց ոչ ոք չի կարող հասկանալ Նրան»: Նրանք չեն* **ճանաչում** *Աստծուն* և *ենթադրում են*, որ Աստված գործում է թե՛ չարը, թե՛ բարին: Քանի որ նրանք չեն ճանաչում Աստծուն, **նրանց կարծիքն Աստծո մասին երբեք չի փոխվում**. Նա պարզապես «Աստված» է՝ նստած ինչ-որ տեղ Երկնքում: Նրանք կարող են կատարել իրենց «քրիստոնեական պարտքը» կիրակի առավոտյան, որպեսզի ընդունված լինեն հասարակության կողմից, բայց ծիծաղում են այն մարդկանց վրա, ովքեր հավատում են, որ Աստված կմիջամտի իրենց անձնական հանգամանքներում: ***Աստվածաշունչը «հիմարներ» է անվանում նման մարդկանց:***

Եթե լսեք այդ մարդկանց, դուք կսկսեք շշնջալ այն մասին, որ հավատում եք Աստծուն և սպասումներ ունեք Նրանից: Դուք զգուշանալով կխոսեք այս մասին, որովհետև հնարավոր է, որ Աստված չկանգնի ձեր կողքին, և դուք ծիծաղելի տեսք ունենաք: Ո՛չ: Հիշեք՝ Իսրայելի զավակներն ունեին նույն հիմար կարծիքը, և մի թարգմանության մեջ գրված է. որ *«դա բորբոքեց Նրա բարկությունը: Նա խիստ զայրացավ, և Նրա բարկությունը բորբոքվեց Իսրայելի զավակների դեմ»:* **Թույլ մի՛ տվեք**, որ հիմարների անհավատությունը հանգցնի ձեր հավատքն Աստծո հանդեպ և շշնջոց դարձնի ձեր աղաղակը:

Գոչյունն Աստվածաշնչում **հաղթանակի** և **փառաբանության ձայն** է: Իսրայելի բանակում գոչյունը **վստահության ձայն էր**, որը նշանակում էր, որ Աստված պարտության էր մատնելու թշնամիներին: Հավատքով լի գոչյունը ***ճեղքում է*** անհավատության և դիվային միջամտության ***պատնեշը:*** Այն ***հայտնում է*** ձեր դիրքորոշումը ամբողջ Երկնքին և դժոխքին: Գոչյունը մշտապես ցույց է տվել անսասան վստահություն և հավատք Աստծո հանդեպ՝ անկախ հանգամանքներից կամ դժվարություններից:

Եթե դուք նեղության մեջ եք, դժվարին հանգամանքներում կամ «անապատում», դուք պետք է հետևեք, թե *ինչ* եք խոսում: Դուք պետք է **«պարտադրեք» ձեր բերանին խոսել** այն, ինչ Աստծո Խոսքն է ասում ձեր մասին: Միակ բանը, որը ետ է պահում ձեզ, հենց *դուք* եք:

Կարևոր չէ, թե ինչ են ասում ձեզ շրջապատող մարդիկ, որքան է ձեր տնօրենը հայհոյում, որքան հիվանդ եք կամ ինչ չափով եք սնանկացել, քանի որ **գոյություն ունի հիմք**, որից մենք պետք է վեր բարձրանանք: Այն գրված է Եբրայեցիների 11.6-ում. *«Եվ առանց հավատքի անհնար է հաճեցնել Աստծուն, որովհետև ամեն մեկը, ով մոտենում է Նրան, պետք է հավատա, որ Նա գոյություն ունի, և որ Նա վարձատրում է նրանց, ովքեր*

*ջանասիրաբար փնտրում են Իրեն»* (NIV): Ձեր հավատքը և գոյությունը պահելու համար դուք պետք է *ոչ միայն հավատաք, որ Աստված գոյություն ունի*, այլև՝ ***որ Նա վարձատրում է Իրեն ջանասիրաբար փնտրողներին:***

Դուք չեք կարող թույլ տալ, որ անհավատ հիմարների կասկածներով լի խոսքերը և մտքերը հաստատվեն ձեզանում. հակառակ դեպքում, դրանք կկործանեն ձեր հավատքը և կգողանան ձեր գոյությունը: *Մարդկանց մտքերը և բառերը մուտք են գործում ձեր միտք, որպեսզի գողանան և կործանեն ձեր վստահությունն Աստծո հանդեպ:* Այն պահին, երբ կասկածը ներս մտնի ձեր սիրտը, և դուք այսպիսի մտքեր լսեք. «Ինձ մոտ չի ստացվի», «Ես չեմ ստանա այդ աշխատանքը» կամ՝ «Նրանք կբարձրացնեն մեկ ուրիշի պաշտոնը», դուք պետք է հավատքով հակառակվեք դրանց: Հակառակ դեպքում, ձեր գոյությունը կվերածվի շշնջոցի:

**Իշխանությո՛ւն վերցրեք** այլ մարդկանց անհավատ խոսքերի և մտքերի վրա: Հիշե՛ք Եբրայեցիների 11.6-ը և ասե՛ք Աստծուն, որ դուք *ջանասիրաբար փնտրում եք Նրան և հավատում եք*, *որ* ***Նա վարձատրում է*** *Իրեն փնտրողներին*: Գոհացե՛ք Նրանից՝ ձեզ բարձրացնելու և նեղությունից ազատելու համար, և հավատացե՛ք, որովհետև Նա վարձատրում է նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են Իրեն, վստահում են Իրեն և աղաղակում են Իրեն:

**Վստահությա՛մբ խոսեք Տիրոջ հետ**: Մի՛ ասեք. «Տե՛ր, *հուսով եմ*՝ Դու կբժշկես ինձ»: Ո՛չ, ո՛չ, ո՛չ: ***Սպասո՛ւմ ունեցեք, որ բժշկվելու եք:*** Ասե՛ք ինքներդ ձեզ և Տիրոջը. «**Իմ մարմինը**՝ Տիրոջ ***տաճարն է***, և **Աստված ապրում է իմ** ***ներսում: Տե՛ր, այսօր ես շնորհակալ եմ Քեզնից իմ բժշկության համար:*** Դու գնել ես այն Գողգոթայի Խաչի վրա: Այնպես որ, *սատանա՛*, ես հրամայում եմ քեզ՝ ***հեռացրո՛ւ ձեռքերդ Աստծո ունեցվածքից, հեռացրո՛ւ ձեռքերդ իմ երեխաներից, հեռացրո՛ւ ձեռքերդ իմ ֆինանսներից»:***

## ԴՈՒՔ ՈՒԺԵՂ ԵՔ՝ ԵՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԵՔ

Բարձր գոչյուն ունենալու պայմաններից մեկը եկեղեցում լինելն է: *Ձեր հոգևոր ընթացքը տեղական եկեղեցում է: Ձեր տեսիլքն իրականանում է՝ երբ դուք միանում եք տեղական եկեղեցուն, որպեսզի օգնեք կատարել* իր *կոչումը և նպատակը:* Ձեզ անհրաժեշտ է առանձին ժամանակ անցկացնել Տիրոջ հետ, ինչպես նաև ժամանակ անցկացնել հավատացյալների հետ՝ Աստծուն երկրպագելու և Նրա իրողությունների մեջ աճ ունենալու համար:

Ձեր գոչյունը բարձր չի լինի, եթե դուք մեկուսացնեք ձեզ: Երբ Աստված ծնունդ տվեց տեղական եկեղեցուն Գործք առաքելոց գրքում, Նա արեց դա *հատուկ նպատակով:* **Դուք տեսիլք կստանաք կորսված և տառապյալ մարդկանց համար** հենց տեղական եկեղեցում: **Դուք կգտնեք ձեր կյանքի հարցերի պատասխանները** հենց տեղական եկեղեցում: **Դուք կբացահայտեք, թե որքան կարևոր է հաղորդակցվել և հարաբերություններ կառուցել մարդկանց հետ** հենց տեղական եկեղեցում: **Դուք կվերապրեք Աստծո զորավոր շարժը**՝ շնորհիվ միասնական օծության, հենց տեղական եկեղեցում:

Ամեն անգամ, երբ եկեղեցի եք գնում, մեծ սպասում ունեցեք: *Մեր սպասումն է որոշում, թե ինչ կստանանք եկեղեցական հավաքույթից:* Սպասո՛ւմ ունեցեք, որ նոր բան *կիմանաք* Տիրոջ մասին, որ *կլսեք* Նրան և *կզգաք Նրա հպումը*, և *որ Նա կփոխի ձեզ:* Եթե սպասումով գնաք, դուք երբեք հիասթափված չեք հեռանա հավաքույթից: Նույնիսկ եթե քարոզը շատ չտպավորի ձեզ, **Աստված երբեք հուսախաբ չի անի**: Եկեղեցի գնացեք՝ սպասելով, որ Աստված ինչ-որ բարի բան կանի: Եթե այդպես վարվեք, Նա կհանդիպի ձեզ, և դուք կստանաք այն, ինչի համար եկել եք:

Մի՛ գնացեք եկեղեցական հավաքույթների՝ *պարզապես ձեր պարտականությունը կատարելու* և «ներկա ստանալու» հա-

մար: *Մի՛ գնացեք այն վերաբերմունքով, որ տալու եք ձեր երկու ժամը* Տիրոջը, իսկ հետո տուն եք վերադառնալու: *Մի՛ գնացեք՝ սպասելով, որ ձեր հովիվը և առաջնորդները գովեն, զվարճացնեն կամ խրախուսեն ձեզ* : Ո՛չ: **Քիչ առաջ մենք կարդացինք, որ մենք պետք է հավատանք, որ Աստված վարձատրում է Իրեն ջանասիրաբար փնտրողներին:**

Մենք պետք է եկեղեցի գանք աղոթքով. *«**Տե՛ր, տո՛ւր ինձ տեսնող աչքեր, լսող ականջներ և ընկալող սիրտ:** Ես ցանկանում եմ* **ավելի մոտենալ** *Քեզ, Աստվա՛ծ: Այնպես որ, ես կմոտեցնեմ իմ ականջը Քեզ և սթափ կպահեմ իմ միտքը»:* Այդ դեպքում դուք նստած չեք լինի եկեղեցական ծառայությանը՝ անհանգստանալով ժամկետանց վճարման մասին, կամ մտածելով, թե ինչ շրջադարձ կստանա պատերազմն ահաբեկչության դեմ հաջորդ շաբաթ: Ո՛չ. դուք պետք է եկեղեցի գաք՝ **ձեր կյանքին օգուտ բերելու համար:**

## ԱՂԱՂԱԿԵ՛Ք ԱՍՏԾՈՒՆ

Այն ամենը, ինչ տեղի է ունենում ձեր կյանքում, կատարվում է՝ համաձայն ձեր սպասման: Ղուկասի Ավետարանի 18.35 խոսքից գրված է մի պատմություն կույր Բարտիմեոսի մասին: Հիսուսն անցնում էր Երիքովի ճանապարհով, որտեղ մի կույր մուրացիկ էր նստած: Լսելով անցնող բազմության ձայնը՝ Բարտիմեոսը հարցրեց իր մոտ գտնվող մարդկանց, թե ինչ էր տեղի ունենում: Նրան պատասխանեցին, որ անցնում էր Նազովրեցի Հիսուսը:

Այս պատմության ամենակարևոր մասը հետևյալն է. *«Եվ նա աղաղակեց և ասաց. «Հիսո՛ւս, Որդի՛ Դավթի, ինձ ողորմի՛ր»»:* Բարտիմեոսն ***աղաղակեց*** Աստծո Որդուն՝ խնդրելով օգնել իրեն: ***Դուք, միգուցե, կմտածեք,*** **որ Հիսուսի հետ գնացողները** ***շտապե-***

*լով* **Տիրոջ մոտ տարան Բարտիմեոսին**, սակայն նրանք բոլորովին այլ կերպ վարվեցին: *«Եվ նրանք, որ առաջից գնում էին, հանդիմանում էին նրան, որ լռի...»:* Նրանք պատվիրեցին Բարտիմեոսին ***չխանգարել Հիսուսին:*** Նրանք հանդիմանեցին նրան. «Ի՞նչ ես մտածում քո մասին: Պարզապես լռի՛ր և բավարարվի՛ր քո վիճակով»: Դուք երբևէ լսե՞լ եք նման բան ձեր ընտանիքում: Ձեր գործընկերները կամ ընկերները երբևէ նման բան ասե՞լ են ձեզ:

*«Հանդիմանել»* բառը նշանակում է՝ «կանգնեցնել մի բան, որն արդեն շարժման մեջ է»: Հիսուսի հետ եղող մարդիկ **փորձում էին կանգնեցնել այն սպասումը**, որն արդեն հասունացել էր Բարտիմեոսի մեջ: Կարո՞ղ եք հիշել, երբ մարդիկ փորձել են շշնջոցի վերածել ձեր գոչյունը: Նրանք ասում են. «Ո՛չ, չանե՛ս դա: Հեռո՛ւ մնա այդ հավատքից. այն չափազանց ծայրահեղ է: Ժամանա՛կ հատկացրու՝ խնդիրներդ լուծելու համար: Միգուցե քո վիճակը բարելավվի: Միգուցե քո ամուսնությունը բարելավվի»: *Եթե լսեք նրանց, **ձեր վիճակն է՛լ ավելի կվատթարանա՝ բարելավվելու փոխարեն:***

Կույր Բարտիմեոսը նստած էր Երիքովի ճանապարհին. միայն Աստված գիտի, թե քանի տարի էր նա այդտեղ: Եվ ահա, Հիսուսն անցնում էր անմիջապես նրա կողքով: Բարտիմեոսը հիմար մարդ չէր. նա գիտեր, որ պետք է միայն պարզեր ձեռքը՝ իր պատասխանն ստանալու համար: Իր հավատքով և սպասումով **Բարտիմեոսն *աղաղակեց*** Աստծո Որդուն՝ ***հավատալով*, որ բժշկություն կստանա**: Նույնիսկ նրան շրջապատող մարդիկ էին հանդիմանում նրան: Աստվածաշնչում գրված է. *«Իսկ նա է՛լ ավելի էր աղաղակում. «Որդի՛ Դավթի, ինձ ողորմի՛ր»»: Թույլ մի՛ տվեք, որ ձեր կյանքը շշնջոց դառնա:* **Վերածե՛ք այն գոչյունի**: Վերածե՛ք այն ***հավատքի*** աղաղակի, ***սպասման*** աղաղակի, Աստծո հանդեպ ***լիարժեք վստահության*** աղաղակի:

Հավատացե՛ք, որ Աստված վարձատրում է նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են Իրեն:

Եվ տեղի ունեցավ հետևյալը: *«Հիսուսն էլ կանգնեց և հրամայեց, որ նրան Իր մոտ բերեն»:* Բարտիմեոսի հավատքը և ***սպասումը լիովին գրավեցին Հիսուսի ուշադրությունը:*** Այդ փոշոտ ճանապարհին, հավանաբար, բազմաթիվ կաղեր և կույրեր կային: Պատկերացնում եմ, թե ինչպես էին նրանցից շատերը տրտնջում. «Օգնեցե՛ք ինձ, ես կա՛ղ եմ: Ես տարբեր հիվանդություննե՛ր ունեմ: Ես արդեն դիմել եմ բոլոր բժիշկներին: Կարո՞ղ եք օգնել ինձ»: Այնքա՛ն նման է մարդկանց, ովքեր ամեն օր շրջապատում են ձեզ, նույնիսկ՝ եկեղեցում: Նրանք բողոքում և տրտնջում են իրենց խնդիրների պատճառով և զարմանում են, թե ինչու այդպես էլ օգնություն չեն ստանում: Դուք չեք տարբերվի նրանցից՝ տրտնջալով և բողոքելով. դուք կտարբերվեք **ձեր սպասման աղաղակո՛վ**:

*«Եվ երբ որ նա մոտ եկավ, հարցրեց նրան և ասաց. «Ի՞նչ ես ուզում, որ անեմ քեզ»»*: Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը չասաց. «Այնքա՛ն եմ ցավում քեզ համար»: Ո՛չ, Հիսուսը *հստակ հարց* ուղղեց Բարտիմեոսին: ԱՂԱՂԱԿՈՂ ՄԱՐԴԻԿ ՀՍՏԱԿ ԽՆԴՐԱՆՔ ՈՒՆԵՆ: Աղաղակի մեջ ընդհանուր ոչինչ չկա:

*«Եվ նա ասաց. «Տե՛ր, որ տեսնեմ»:*

*Եվ Հիսուսն էլ ասաց նրան. «Տե՛ս. քո հավա՛տքն ապրեցրեց քեզ»:*

*Եվ իսկույն տեսնում էր և նրա ետևից գնում էր՝ Աստծուն փառավորելով: Եվ ամբողջ ժողովուրդը, որ տեսավ, օրհնություն էր տալիս Աստծուն» (Ղուկաս 18.41-43):*

Հիսուսը նույնիսկ չդրեց Իր ձեռքերը Բարտիմեոսի վրա: ***Նրա սպասման աղաղակն այնքա՛ն ուժգին էր, որ Տերն ապացուցեց, որ Ինքը վարձատրում է նրանց, ովքեր ջանասիրաբար փնտրում են Իրեն:***

Տարբեր եկեղեցիներում և աստվածաշնչյան դպրոցներում կան մարդիկ, ովքեր լսում են միևնույն բանը, ինչ դուք, բայց նրանք ոչինչ չեն ստանում իրենց լսածից, որովհետև նրանցում սպասման աղաղակ չկա: Որոշո՛ւմ կայացրեք, որ ամեն անգամ, երբ լսեք Խոսքը, դուք *սպասում կունենաք*, որ ձեր կյանքում ինչ-որ բան կկատարվի: **Թույլ մի՛ տվեք ոչ ոքի՝ խլել դա ձեզնից**: Կարևոր չէ, թե որքան մտերիմ եք այդ մարդկանց հետ, և ինչ դիրք կամ ազդեցություն նրանք ունեն ձեր տեղական եկեղեցում: Թույլ մի՛ տվեք, որ ձեր կյանքը շշնջոց դառնա: Թույլ մի՛ տվեք մարդկանց կանգնեցնել կամ խոչընդոտել ձեզ: Աղաղակե՛ք Աստծուն:

## ՈՒՆԵՑԵՔ Ե՛Վ ԳՈՉՅՈՒՆ, Ե՛Վ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Շատ մարդիկ *անցել են շշնջոցի*, և նույնիսկ *լռել են:* Պատճառն այն է, որ նրանք *ինչ-որ ուղերձ են լսել և որոշել են չընդունել, քանի որ **այն պատասխանատվության է կանչել իրենց:*** Այսօր շատերը չեն ցանկանում պատասխանատվություն ստանձնել: Մարդիկ միայն ցանկանում են բոլորել իրենց հիսուն կամ վաթսուն տարին և ասել. «Հո՛գ տարեք իմ մասին»: Նրանցից ոմանք ապահովագրական ընկերությունների պես ունեն միևնույն դիրքորոշումը. նրանք ամեն մի խնդիր իրենց կյանքում դասակարգում են որպես *«անհաղթահարելի ուժի արդյունք»* կամ, ինչպես ընդունված է ասել, *«Աստծո գործ»:*

Իմ տան ետևի բակում մի նախապատմական տեսք ունեցող ծառ կար, որն այնքան էր մեծացել, որ կեղևը տարօրինակ գույն էր ստացել: Այդ ծառն արդեն կար այն ժամանակվանից, երբ մենք այդ տուն էինք տեղափոխվել: Մեկ օր մի փորձառու այգեպան զննում էր այդ ծառն իմ բակում:

- Դուք երբևէ խնդիրներ ունեցե՞լ եք այս ծառի արմատների հետ:

Ես պատասխանեցի, որ ինքս էի ուզում հարցնել նրան այդ մասին, որովհետև մի քանի տարի առաջ հարևանս պնդում էր, որ այդ ծառի արմատները վնասել էին նրա լողավազանի պատը:

Փորձառու այգեպանը պատասխանեց.

- Այս ծառի արմատները չէին կարող անել դա: Դրանք չեն երևա նույնիսկ ձեր բակում, քանի որ աճում են ուղղահայաց, ոչ թե հորիզոնական: Ձեր հարևանի դեպքը՝ անհաղթահարելի ուժի արդյունք է:

«Անհաղթահարելի ուժի արդյո՞ւնք», - մտածեցի ես:

- Դա անհաղթահարելի ուժի արդյո՞ւնք էր, - բարձրաձայն հարցրի ես:

- Այո՛, - պատասխանեց նա: - Նրա լողավազանի պատը վնասվել էր անհաղթահարելի ուժի արդյունքում:

- Ո՛չ, պատճառն անհաղթահարելի ուժը չէր, - վճռականորեն պատասխանեցի ես: - Քանի որ այս ծառն իմ բակում է, ես կտրեցի բոլոր արմատները, որոնք աճել էին իմ ցանկապատի ուղղությամբ, և բետոն լցրեցի մոտավորապես մեկ մետր խորությամբ, որպեսզի ծառի արմատները չանցնեին հարևանիս բակը: Այս հարցում ես եմ պատասխանատու, ոչ թե անհաղթահարելի ուժը, կամ՝ Աստված:

Նա զարմացած նայեց ինձ.

- Դուք արեցի՞ք դա: Այո՛, դա շատ խելացի որոշում էր:

Կարիք չկար, որ համալսարան ավարտեի, որպեսզի հասկանայի դա: Նա փորձառու այգեպան էր, բայց ես նրանից խելացի էի: Ես ընդամենը պետք է պատասխանատու լինեի իմ սեփականության համար:

Մենք *պատասխանատու* և *հաշվետու* ենք Աստծո Խոսքի հանդեպ: Երբ մենք ինչ-որ բան ենք լսում Աստվածաշնչից, պետք է կատարենք դա: Եթե Աստծո Խոսքում ինչ-որ խոստում կամ զգուշացում կա, այն *պատկանում է ձեզ*, և դուք պետք է պատասխանատվություն ստանձնեք դրա համար: Երբ ինչ-որ վատ բան է տեղի ունենում, մի՛ մեղադրեք ձեզ ծուլության կամ Աստծո հանդեպ անլուրջ վերաբերմունքի մեջ, եթե իրական պատճառը ձեր անպատասխանատվությունն է:

Մենք կարող ենք կարդալ նման վերաբերմունքի մասին Ղուկասի 17.11-ից.

*«Եվ եղավ, երբ որ Նա Երուսաղեմ էր գնում, Ինքը Սամարիայի և Գալիլեայի միջով էր անցնում: Եվ Նա մի գյուղ մտնելիս՝ տասը բորոտ մարդիկ պատահեցին Նրան, որ հեռվից կանգնեցին և իրենց ձայնը բարձրացրին ու ասացին. «Հիսո՛ւս, Վարդապե՛տ, մեզ ողորմի՛ր»»:*

Այս հատվածը շատ առումներով խորհրդանշում է եկեղեցու բազմաթիվ մարդկանց: Նրանք կանգնած են հեռվում և այսպես են մտածում. «**Ես չեմ ուզում չափից շատ *ներգրավվել* Խոսքի մեջ: Ես չեմ ուզում *չափից շատ մտերմանալ* այս եկեղեցու մարդկանց հետ, քանի որ՝ միգուցե *ստիպված լինեմ պատասխանատվություն ստանձնել: Միգուցե ինձ ինչ-որ գործ վստահեն, իսկ ես չեմ ուզում ժամանակ տրամադրել դրա համար*»:**

Հիսուսը նայեց այդ մարդկանց միայն մեկ պատճառով. նրանք բորոտ էին: Աստվածաշնչյան օրերում բորոտներին չէր

թույլատրվում հաղորդակցվել մարդկանց հետ: Հետաքրքիր է, որ *այս մարդիկ «Տեր» անվանեցին Հիսուսին, թեև համարում էին, որ պետք է* ***հեռվում*** *մնային:* Հիսուսի պատասխանը նրանց՝ նույնպես հետաքրքրական է: Ուշադրություն դարձրեք, որ Նա չասաց. «Բոլորդ շարքով կանգնե՛ք: Ես կօծեմ ձեզ յուղով և կնետեմ Իմ վերարկուն ձեզ վրա»: Հիսուսը նման բան չասաց: Թեև այդ մարդիկ մտածեցին, որ պետք է հեռվում մնային, սակայն ***Հիսուսին հուզեց նրանց աղաղակը:*** *«Եվ երբ որ տեսավ, ասաց նրանց. «Գնացե՛ք, ձեր անձերը քահանաների՛ն ցույց տվեք»: Եվ եղավ, որ նրանք գնալիս՝ սրբվեցին»:* Այդ մարդիկ ոչ միայն լսեցին Խոսքը, այլև ***գործեցին*** **Խոսքի հիման վրա**: **Նրանց սպասումը գործողության** ***դրդեց նրանց,*** **և** ***նրանք*** **Խոսքը** ***կատարողներ դարձան:*** Նրանք չվիճարկեցին Հիսուսի ասածը, այլ՝ պատասխանատվությամբ վարվեցին իրենց լսածի հանդեպ:

Ուզում եմ, որ ուշադրություն դարձնեք՝ տասը տղամարդկանցից **միայն մեկը** ***լիովին հեռացրեց*** իր կյանքի **սահմանափակումները**: Նրա սպասումը դրդեց նրան ավելի հեռու գնալ, քան մնացած իննինը: Ի՞նչը ցույց տվեց, որ նրա սահմանափակումները հեռացել են: Մենք կարող ենք կարդալ այդ մասին Ղուկասի Ավետարանի 17.15,16 խոսքերում. *«Եվ նրանցից մեկը, երբ որ տեսավ, թե բժշկվեց, ետ դարձավ, բարձր ձայնով փառավորում էր Աստծուն: Եվ երեսնիվայր ընկավ Նրա ոտքերի առջև և գոհանում էր Նրանից: Եվ ինքը սամարացի էր»:*

Աստվածաշունչը հենց այնպես չի նշում, որ այդ մարդը սամարացի էր: Այդ ժամանակ հրեաներն անմաքուր էին համարում սամարացիներին: Հրեաներն այն աստիճան էին խորշում նրանցից, որ նրանց ճամփորդներն **ամբողջովին շրջանցում էին** Սամարիան, թեև այդ պատճառով նրանց ճանապարհը մի քանի շաբաթով երկարելու էր: Հրեաները չէին ուզում նույնիսկ ոտք դնել Սամարիայում:

Մի՞թե այդ «խարանը» խանգարեց այդ մարդուն ընկնել Հիսուսի ոտքերի առջև և գոհանալ Նրանից: Ո՛չ: Հիսուսը բերկրանք ապրեց, քանի որ **այդ մարդը, Իր Խոսքի հանդեպ** ***պատասխանատվություն ստանձնելուց բացի***, ***նաև քանդեց այն սահմանափակումները***, որոնք թույլ չէին տալիս նրան լիարժեք կերպով հետևել Աստծուն: Հիսուսը պատասխանեց նրան. ««*Չէ՞ որ տասն էլ սրբվեցին, ապա այն ինն ո՞ւր են:* **Ետ դարձողներ** չգտնվեցի՞ն, որ Աստծուն փառք տան, *բացի* այս այլազգիից»: *Եվ ասաց նրան. «Վե՛ր կաց, գնա՛: Քո հավա՛տքն ապրեցրեց քեզ»*»:

Այդ մարդը ոչ միայն մաքրվեց բորոտությունից, բայց **վերադարձավ, որպեսզի շնորհակալություն հայտնի Տիրոջից** և **ակնհայտորեն հեռացրեց** իր կյանքի **սահմանափակումները**, Հիսուսը **նույնպես** ***սրբված*** **կամ** ***լիովին առողջ հայտարարեց*** **նրան**: *Մնացած ինը* մաքրվեցին, բայց ***պահպանեցին*** *իրենց սահմանափակումները:* Հնարավոր է, որ այդ սահմանափակումների պատճառով նրանց հիվանդությունը կրկին վերադառնար, կամ նրանք այլ գերության մեջ հայտնվեին: Այնուամենայնիվ, քանի որ այս մարդը **քանդեց իր սահմանափակումները** և **առանց ամաչելու փառք տվեց Տիրոջը՝** ***չնայելով*** հասարակական **խտրականությանը**, ***նա առողջացավ*** հոգով, անձով և մարմնով: Նրա բորոտությունը հեռացավ, բայց նույնպես բժշկվեց *նրա միտքը: Նրա դիրքորոշումը և զգացմունքները բժշկվեցին:* Նրա ինքնագնահատականը բժշկվեց: Նրա սահմանափակումները քանդվեցի՛ն:

## ԴՈՒՔ ԱՂԱՆԴԻ ՄԵ՞Ջ ԵՔ

Մեր օրերում մեր մաշկի գույնը և ազգային պատկանելությունը շատ հաճախ սահմանափակում են մեզ: Թեև մենք պատասխանատու ենք, որ սիրով վարվենք մեկս մյուսի հետ և հաշվետու լինենք Աստծո ամբողջական խորհրդին, մենք անտեսում ենք դա՝ այս սահմանափակման պատճառով: Մեկ անգամ

մի քարոզչից լսեցի, որ բոլորս «ենթամշակույթներ» ենք: Իրականում, ես կփորձեմ համեմատել *«մշակույթ»* բառը *«աղանդ»* բառի հետ: *«Աղանդ»* բառի սահմանումն է՝ «համոզմունք, որ մենք այլևս ոչնչի կարիք չունենք»: Որքա՜ն դիպուկ է ասված:

Ճիշտ է, որ բոլոր մշակույթները տարբերվում են, բայց այդ տարբերությունները *չպետք է սահմանափակեն մեր պատասխանատվությունը* Աստծո Խոսքի և սիրով վարվելու հանդեպ: Ամեն ենթամշակույթ մեղավոր է այն բանում, որ համարում է իր մշակույթը կամ կենսակերպը գերազանց մեկ այլ ենթամշակույթից: Ահա թե ինչու որոշ մարդիկ, ովքեր Ամերիկայում են ապրում, պնդում են, որ իրենց պետք է անվանել լատինաամերիկացիներ, բնիկ ամերիկացիներ, աֆրոամերիկացիներ, եվրոամերիկացիներ և այլք: Եթե ապրում եք Ամերիկայում, դուք ամերիկացի եք՝ անկախ ձեր մաշկի գույնից: Այնուամենայնիվ, քանի որ մենք սահմանափակված ենք մնում մեր մաշկի գույնով, մենք ավելացնում ենք մեր քաղաքացիությանը մեր ազգային մասնիկը՝ վախենալով, որ միգուցե ինչ-որ մեկը չընդունի մեր տարբերությունները: Երբ ես լսում եմ, որ ինչ-որ մեկն անվանում է իրեն «*այսինչ* ամերիկացի», ես *գիտեմ*, որ այդ մարդը սահմանափակումներ և վախեր ունի:

Նույն մտածելակերպը վերաբերում է քրիստոնեության տարբեր ուղղություններին: Օրինակ՝ եթե դուք հոգեգալստական լինեք, և ձեր աղջիկը ծանոթացնի ձեզ իր մեթոդիստ ընկերոջ հետ, դուք անմիջապես կբարկանաք: Աստծո տեսանկյունից, նման մտածելակերպը՝ *սահմանափակում* է: Մենք երբեք չենք համաձայնի որոշ ուսմունքային դրույթների հետ, բայց **ամենակարևոր դրույթը՝ Հիսուս Քրիստոսն է**: Մենք *պետք է քանդենք մեր կրոնական սահմանափակումները* և սկսենք հատել բոլոր սահմանները: Մենք պետք է պատասխանատվություն ստանձնենք, որ *սիրով ենք վարվելու* նրանց հետ, ովքեր քարոզում են, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է:

**Բժշկված սամարացուն** չէր մտահոգում, թե ինչ էին մտածում մարդիկ: Նրան նույնպես չէր մտահոգում, որ մարդիկ ցանկանում էին պահել իրենց սահմանափակումները: ***Նա քանդեց այն սահմանափակումները**, **որոնք ինքն էր կառուցել:*** Նա պատասխանատվություն վերցրեց՝ ***վճռելով կատարել խոսքը, ընկնել Հիսուսի ոտքերի առջև և բացահայտ ցույց տալ իր գոհությունը***՝ անկախ իր մշակույթից և տարածաշրջանի մարդկանց կարծիքներից:

**Ժամանակն է, որ այլևս թույլ չտաք ձեր մշակույթին կամ կրոնական ուղղությանը մարել ձեր գոյությունը**: Ժամանակն է, որ **հեռացնեք բոլոր սահմանափակումները, որոնք գողանում են ձեր երկնային սպասումը**: Հերի՛ք է նստած մնաք ձեր անկյունում՝ **ասելով. «Ես ստացել եմ իմը Տիրոջից», և հրաժարվեք սիրով վարվել** նրանց հետ, ովքեր այլ մաշկի գույն կամ այլ վարդապետական համոզմունքներ ունեն: Ժամանակն է, որ պատասխանատվություն ստանձնեք՝ **քանդելու այն սահմանները**, որոնք պնդում են, որ դուք ոչ ոքի կարիքը չունեք, և սուտն այն մասին, որ դուք ունեք ձեզ անհրաժեշտ ամեն ինչ ձեր ռասայի մեջ: ***Կարևոր չէ*, թե ինչ մաշկի գույն ունեք կամ ինչ եկեղեցի եք հաճախում**: **Դուք *չունեք* ամեն ինչ, և *ո՛չ էլ ունեք* այն ամենը, ինչն անհրաժեշտ է ձեզ**: Մենք *պետք ենք* մեկս մյուսին, և մենք պետք է միասին գործենք, որպեսզի հավաքենք այս աշխարհի հունձքը: Մենք պետք է պատասխանատվություն ստանձնենք՝ կատարելու Մեծ Հանձնարարականը, և եռանդագին ձգտենք սիրով վարվել մեկս մյուսի հետ:

Մենք նման դիրքորոշում կունենանք միայն՝ եթե որոշենք պատասխանատվությամբ վարվել՝ թույլ չտալով, որ որևէ բան մեզնից գողանա Տիրոջն ուղղված մեր լիակատար սպասման գոյությունը: Թույլ մի՛ տվեք, որ ձեր կյանքը շշնջոց դառնա: ***Քանդե՛ք* այն սահմանափակումները, որոնք հանգցնում են ձեր գոյությունը, և *ստացե՛ք* ԲՈԼՈՐ** օրհնությունները, որոնք խոստացված են ձեզ:

## Գլուխ 12

# Պարտության մատնեք նեղության սահմանափակումները

Ինչ-որ մեկն ասել է. «Նեղությունը՝ առաջին ուղին է դեպի ճշմարտությունը»: Այն անանուն մարդը, ում պատկանում է այս խոսքը, չէր կարող ավելի դիպուկ արտահայտվել: Մենք հազվադեպ ենք դրական համարում նեղությունը, և սա է պատճառը, որ Աստվածաշունչը շատ է խոսում այս մասին: Թեև հիմա դուք չեք հասկանում սա, բայց երբ ավարտեք այս գլուխը, դուք կհամաձայնեք այս անանուն հեղինակի հետ:

*Բոլորն են բախվում նեղությունների:* Անկախ այն բանից, թե որքան հարուստ եք, որքան հանրահայտ եք կամ քանի ընկեր ունեք՝ դուք նեղություններ կունենաք: Նույնիսկ եթե ունեք հրաշալի ամուսնություն, երեխաներ և աշխատանք, և ամեն ինչ ընթանում է հանդարտ կերպով, հանկարծ ՀԱՐՎԱԾՈՒՄ է նեղությունը, և դուք զարմացած մտածում եք, թե *ինչպես* դա տեղի ունեցավ:

Հանգիստ եղեք: Նեղությունը սովորական բան է: Այն, որ նեղությունը հասել է ձեզ, *չի նշանակում*, որ ձեր կյանքում ինչ-որ սխալ բան կա: Դա չի նշանակում, որ դուք ձախողել եք Աստծուն, կամ որ դուք տարբերվում եք այլ քրիստոնյաներից: Ձեր

հարևանները նույնպես նեղություններ են կրում. եկեղեցում ձեր կողքին նստող մարդիկ նույնպես նեղություններ են կրում. ձեր եկեղեցու հովիվը և առաջնորդները նույնպես նեղություններ են կրում, և բոլորը եկեղեցում նույնպես նեղություններ են կրում: *Միակ տարբերությունը նրանց և ձեր միջև այն է, թե ո՞վ է սահմանափակում Աստծուն նեղության մեջ:*

## ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԽՈՍՈՒՄ Է ԱՅՍ ՄԱՍԻՆ

Դուք երբեք չեք գտնի այսպիսի խոսք Աստվածաշնչում. «Ամեն քրիստոնյա հրաշալի կյանք կունենա, և երբեք չի բախվի որևէ խնդրի: Նրանց օրերը կանցնեն առանց հալածանքի, դժվարության և նեղության: Ինչին նրանք կամ նրանց երեխաները դիպչեն, մեղր ու կարագ կդառնա»: Միգուցե ձեզ քարոզել են այսպիսի բաներ, բայց եթե դուք այդպես եք մեկնաբանել Աստվածաշունչը, ուրեմն՝ մոլորված եք:

Փոխարենը՝ Աստվածաշունչը շեշտում է. *«Իսկապես, ովքեր բերկրանք են գտնում աստվածապաշտության մեջ և վճռել են նվիրված և բարեպաշտ կյանքով ապրել Քրիստոս Հիսուսում, կհանդիպեն հալածանքի [չարչարանքի կենթարկվեն իրենց կրոնական դիրքորոշման պատճառով]»* (Բ Տիմոթեոս 3.12, AMP):

Նույն խոսքը՝ «Արարատ» թարգմանությունից, այսպես է հնչում. *«Եվ ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում, հալածանք պիտի կրեն»:* Դուք նեղություն եք կրելու այս կյանքում՝ անկախ այն բանից, քրիստոնյա՞ եք, թե՞ ոչ: **Ավելի լավ է ես Աստծո կամքի մեջ լինեմ, նեղություններ կրեմ և իմանամ, որ հավիտենական ապագա ունեմ, քան անհավատ մարդ լինեմ, նեղությունների բախվեմ, իսկ հետո դժոխք գնամ:**

*Աստվածաշունչը խոսում է այն մասին*, որ մենք բախվելու ենք նեղություններին: Միգուցե հիմա ձեզ համար դժվար է հավատալ այս պնդմանը, բայց այն հիմնավոր պատճառներ ունի: **Նեղությունը դրդում է մեզ ավելացնել մեր *հավատքը և սպասումն* Աստծո հանդեպ: Այն *հասունացնում* է մեզ և *զարգացնում է մեր բնավորությունը:*** Կարճ ասած՝ նեղությունը *հնարավորություն* է ընձեռում, որ բացահայտենք մեր թերությունները և շտկենք դրանք:

Քրիստոնեական կյանքն այս երկրի վրա՝ մշտական աճի գործընթաց է: Ինչպես մեր բնական երեխաները, մենք՝ Տիրոջ հոգևոր զավակներս, մշտապես *հասունանում* և *հասակ ենք առնում:* Ինչպես որ մեր երեխաներն են բախվում դժվարին իրավիճակների, որոնք դրդում են նրանց ընտրություն կատարել ճշտի և սխալի միջև, այնպես էլ մենք բախվում ենք նեղությունների, որոնք օգնում են մեզ աճել և ընտրել իրավիճակների նկատմամբ ճիշտ պատասխանը: Քանի դեռ մենք շնչում ենք, ***մշտապես** կբախվենք դժվարին իրավիճակների, մինչև հաջորդ մակարդակին անցնելը*, որում մենք նույնպես կշարունակենք փորձվել: Այնպես որ, ավելի լավ է՝ **սովորեք**, թե ինչպես անցնել նեղություններով, քան մնաք նեղության մեջ՝ սահմանափակելով Աստծուն և հրաժարվելով առաջ գնալ: Հիշեք՝ այս գործընթացը բնական է, եթե դուք ցանկանում եք աճել Տիրոջ մեջ: Ինչպես գրված է Առակաց 24.10-ում. *«Դու թույլ մարդ ես, եթե չես կարողանում դիմանալ նեղության ճնշմանը»* (TLB):

Առաջին Պետրոս 4.12-ում այս միտքը շարադրված է հետևյալ կերպով. *«Սիրելինե՛ր, օտար բան մի՛ համարեք այն բորբոքված նեղությունը, որ ձեզ փորձելու համար լինում է, իբր թե մի օտար բան է պատահում ձեզ»:* Մեկ այլ թարգմանության մեջ «օտար» բառը փոխարինվում է «տարօրինակ» բառով. *«Սիրելինե՛ր, մի՛ համարեք, որ այն կրակե նեղությունը, որը եկել*

*է՝ ձեզ փորձելու համար, տարօրինակ բան է, ասես ձեզ հետ ինչ-որ տարօրինակ բան է տեղի ունենում»:*

**Կարևոր չէ, թե որքան անհեթեթ եք դուք համարում ձեր նեղությունները:** *Դրանցում տարօրինակ ոչինչ չկա:* Ես չեմ փորձում մատների արանքով նայել ձեր դժվարություններին, բայց մի՛ կարծեք, որ ձեր դեպքը եզակի է: Դուք երբևէ լսե՞լ եք այսպիսի արտահայտություն. «Եթե եղել ես ինչ-որ վայրում, գնի՛ր վերնաշապիկ՝ այդտեղի պատկերակով»: Այդ դեպքում, կինս՝ Բարբարան, և ես ունենք վերնաշապիկ, գլխարկ, բաժակոն և կոշիկ՝ նեղության պատկերակով: Նեղությունը նոր բան չէ մեզ համար: Քանի որ տարիներ շարունակ մենք նեղություններ կրելու արտոնություն ենք ունեցել, թույլ տվեք կիսվել որոշ ճշմարտություններով, որոնք ես սովորեցի, որպեսզի դուք չսահմանափակեք Աստծուն ձեր կյանքի այս կարևոր փուլում:

## ՆԵՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌՈՒՑՈՒՄ Է ՁԵՐ ՍՊԱՍՈՒՄԸ

Այն, թե ինչպես եք դուք հակազդելու նեղությանը, որոշելու է՝ արդյո՞ք դուք *Աստծո հետ առաջ կշարժվեք դեպի* ձեզ համար որոշված ժամանակը: Պատճառն այն է, որ **նեղությունը *հնարավորություն* է տալիս մեզ որոշելու, թե *ով* է մեր Աղբյուրը**:

Ձեր աշխատանքը՝ ձեր աղբյուրը չէ: Ձեր ընտանիքը՝ ձեր աղբյուրը չէ: Ձեր եկեղեցին նույնպես չի կարող լինել ձեր աղբյուրը: Այս ամենը միջոցներ են: Եթե դուք սխալմամբ այս բնագավառները դարձնեք ձեր աղբյուրը, չափազանց մեծ ճնշման կենթարկեք դրանք, քանի որ սպասում կունենաք, որ դրանք լինելու են ձեր՝ համար առաջին մատակարարը: Եթե դուք միայն կախում ունեք այդ բնագավառներից, այսինքն՝ ակնկալում եք, որ դրանք կհոգան ձեզ համար, դուք, փաստորեն, ցույց եք տալիս,

որ Աստված ձեր Աղբյուրը չէ: **Դուք կարող եք լիարժեք կախում ունենալ միայն Աստծուց**: Որքան էլ *մնացած բոլոր «աղբյուրները»* ջանք գործադրեն, *ժամանակ առ ժամանակ դրանք ձախողելու են ձեզ:* Ձեր կյանքի մյուս բնագավառները չեն կարող լինել ձեր աղբյուրը, քանի որ ի վիճակի չեն հոգալու ձեր բոլոր կարիքները: Միայն Աստված կարող է անել դա:

Նեղությունը հնարավորություն է ընձեռում որոշելու, թե *ինչ է կատարվում մեր սրտում:* Աստծո Խոսքը **պետք է արմատ գցի ձեզանում,** հակառակ դեպքում, երբ նեղություններ կամ կոնֆլիկտներ առաջանան, դուք չեք ունենա աղբյուր, որից կարող եք ուժ ստանալ: **Առաջինը, ինչը փորձվում է նեղության ժամանակ, Խոսքի մակարդակն է մեր կյանքում**: Սաղմոս 119.25-ում գրված է. *«Արթնացրո՛ւ և ապրեցրո՛ւ ինձ՝ Քո Խոսքի համեմատ»* (AMP): Եթե խոսքի իմացության մակարդակը մեզանում բարձր է, այն աստվածաշնչյան հատվածները, որոնք մեր սրտում են, **կարող են արթնացնել մեզ** նեղության մեջ: Մենք կարող ենք ուժ ստանալ Աստծուց՝ մեր Աղբյուրից և մեր Պատասխանից: Եթե Խոսքի իմացության մակարդակը մեր մեջ ցածր է, մենք կսկսենք հրաշքներ փնտրել բոլորից, բայց ոչ՝ Նրանից:

Երբ նեղություն է գալիս, շատ հաճախ մենք մատնացույց ենք անում այլ մարդկանց: Մենք մեղադրում ենք մեր աշխատակիցներին, մեր ընտանիքի անդամներին և մեր եկեղեցուն: Ոմանք մեղադրում են իրենց անցյալը կամ մանկությունը: Մյուսները մեղադրում են Աստծուն՝ ասելով. «Ես գիտեմ, թե ինչու եմ միշտ առանց միջոցների և ինչու կորցրի ամբողջ ունեցվածքս: Աստված է այսպիսին ստեղծել ինձ»: Ո՛չ, Աստված **ցանկանում է, որ բոլորը** բարգավաճեն և առատություն ունենան: **Մատնացույց *մի՛* արեք Աստծուն և *մի՛* մեղադրեք**, երբ բավականաչափ միջոցներ չունեք: Ես միշտ ասում եմ. «Փողը գալիս է աշխատելուց»:

Ամեն անգամ, երբ մեղադրում ենք ինչ-որ մեկին կամ ինչ-որ իրավիճակի մեր նեղության մեջ, մենք **սահմանափակում ենք Աստծուն**: Հիշո՞ւմ եք, որ այս գրքի սկզբում մենք խոսում էինք Իսրայելի զավակների մասին: Նրանք մեղադրում էին միմյանց, իրենց առաջնորդներին, իսկ հետո՝ Աստծուն, քանի որ *ազատվելով* ստրկությունից՝ *նեղության մեջ հայտնվեցին: **Նրանց վարքը բորբոքեց Աստծո բարկությունը:*** Իսրայելցիները քառասուն տարի շարունակ դեգերեցին անապատում՝ մինչև որ այդ սերունդը լիովին մահացավ, որովհետև **նրանք հրաժարվեցին** համարել Աստծուն իրենց Աղբյուրը և առաջ գնալ՝ հաղթահարելով նեղությունը:

Նշե՛ք և հիշե՛ք հետևյալը. ***Աստված փորձելու է ձեր սիրտը:*** Առակաց 17.3-ում գրված է. *«Արծաթի համար հալոց կա, և ոսկու համար՝ քուրա, բայց սրտերը քննողը Տերն է»:* Ինչպես որ հալոցը և քուրան հեռացնում են խարամն արծաթից և ոսկուց՝ մաքրելով դրանք, Տերն օգտագործում է կրակով բորբոքված նեղությունը, որպեսզի ի հայտ բերի այն, ինչ մեր սրտում է: Երկրորդ Օրինաց 8.2-ում գրված է. *«Եվ հիշի՛ր այն բոլոր ճանապարհները, որ քո Եհովա Աստված այս քառասուն տարում քեզ ման տվեց անապատի մեջ, որ խոնարհեցնի՝ քեզ փորձելու և սրտիդ միջինը իմանալու համար՝ արդյոք Նրա պատվիրանները կպահե՞ս, թե՞ ոչ»:*

Ուշադրությո՛ւն դարձրեք այս կարևոր ճշմարտությանը: Տերն **արդեն գիտի**, թե ինչպես կվարվեք, որովհետև ***Նա ամենագետ Աստված է:*** Նա արդեն գիտի, թե ինչպես ենք մենք արձագանքելու, որովհետև ***Նա գիտի, թե ինչ կա մեր սրտերում:*** Տերը *թույլ է տալիս*, որ բախվենք նեղությունների, որպեսզի ***ինքներս տեսնենք, թե ինչպես ենք արձագանքում դրանց:*** Երբ նեղությունը գալիս է, *մենք հասկանում ենք*, թե ի՞նչ հարաբերություններ ունենք Տիրոջ հետ, և թե արդյո՞ք մենք սահմանափակել ենք Նրան՝ մեր Աղբյուրին: Նեղությունը *ցույց է տալիս*՝ արդյո՞ք մենք

միայն մեր բերանով ենք մոտենում Տիրոջը, **թե՞ ճշմարտապես հավատում ու վստահում ենք Նրան**: Հավատում եք, թե ոչ` հաճախ մենք չգիտենք, թե ինչպիսին է մեր սպասումը, *քանի դեռ* նեղությունը չի հարվածել մեզ:

Երբ նեղությունը գալիս է, նշանակում է` **մենք պատրաստ ենք մեր քննությունը հանձնելու և** Աստծո մեջ **հաջորդ մակարդակին անցնելու համար**: Մենք կա՛մ կհանձնենք, կա՛մ ստիպված կլինենք վերահանձնել մեր քննությունը: Կան մարդիկ, ովքեր մշտապես սեղմում են «կյանքի վերագործարկման» կոճակը: Նրանք շարունակ վերահանձնում են նույն քննությունը, քանի որ *նեղության ժամանակ պարզապես մնացել են իրենց տեղում և հրաժարվել են որևէ բան անել:* Ինչպես իսրայելցիները, նրանք տրտնջացել են, բողոքել և բամբասել են, փոխարենը` ջանք գործադրեին և մոտենային Աստծուն` իրենց պատասխանն ստանալու համար: ***Ամեն անգամ, երբ ոչինչ չեք անում նեղության ժամանակ, դուք սահմանափակում եք Աստծուն:*** Եթե սահմանափակեք Նրան, դուք **կմնաք** ձեր ներկա վիճակում և այդպես էլ առաջընթաց չեք ունենա:

**Ազատվե՛ք այն մտածելակերպից, ըստ որի, եթե դուք Աստծո կամքի մեջ եք, ամեն բան պետք է խաղաղ ընթանա**: Սա **մեծ սուտ** է, որը շատերին է շփոթության մեջ գցել և նավաբեկության ենթարկել: Մարկոսի Ավետարանի 4.35-40-ում գրված է, որ Հիսուսը պատվիրեց Իր աշակերտներին, ովքեր փորձառու ձկնորսներ էին, նավով անցնել Գալիլեայի ծովի մյուս ափը: Հիսուսը նրանց հետ էր նավի մեջ: Նրանք Աստծո կատարյալ կամքի մեջ էին: Նրանց ճանապարհի կեսից բարձրացավ ամենամեծ փոթորիկը, որին այդ փորձառու ձկնորսները երբևէ բախվել էին: Քամիները մոլեգնում էին, իսկ ալիքներն այնքան բարձր էին, որ նրանք մտածում էին` կմահանան: Ամբողջ այդ ընթաց-

քում Հիսուսը հանգիստ քնած էր նավախելում: Աշակերտներն արթնացրին Նրան, և Հիսուսը խոսեց քամիներին և ալիքներին՝ հրամայելով, որ հանդարտվեն: Դրանից հետո Նա հանդիմանեց աշակերտներին թերահավատության համար: Աշակերտները Հիսուսի հետ էին Նրա ծառայության սկզբից և լսել էին բոլոր ճշմարտությունները, որոնցով Նա կիսվում էր մարդկանց հետ, սակայն նրանք չօգտագործեցին որևէ բան իրենց լսածից, որպեսզի իշխեին իրենց նեղության վրա: Այս պատմությունն ապացուցում է, որ նույնիսկ եթե մենք Աստծո կատարյալ կամքի մեջ ենք, **կհայտնվեն նեղություններ**, որպեսզի ցույց տան, թե ինչ կա մեր սրտերում: Աստված ցանկանում է, որ **դուք** գործածեք այն հավատքը, որը ձեր սրտում է, և կիրառեք այն սկզբունքները, որոնք սովորել եք: ***Նա ցանկանում է լինել ձեր Աղբյուրը:***

Երբ նոր էինք սկսել մեր հովվական ծառայությունը Սան Դիեգո քաղաքում, նեղության բախվեցինք: Կինս և ես վերադարձել էինք Տեխաս նահանգ, որպեսզի տեղափոխեինք մեր անձնական իրերը, երբ հանկարծ հեռախոսազանգ ստացանք: Հարավային Կալիֆոռնիայում հորդառատ անձրևներ էին, և մեր նոր եկեղեցու անդամներից մեկը զանգահարեց, որպեսզի տեղեկացներ, որ եկեղեցու շենքի տանիքը խիստ վնասվել էր, իսկ ներսում ամենուր դույլեր էին դրված: Եկեղեցու անդամները համոզված էին, որ շենքին մեծ վնաս էր հասցվել:

Այդ պահին ես կարող էի խիստ հուսալքվել: Կարող էի ծալել ձեռքերս և հարցնել Աստծուն, թե ինչո՞ւ ինձ հետ պետք է նման բան պատահեր, երբ թվում էր՝ ամեն ինչ շատ լավ էր: Ես կարող էի ընկճվել՝ մտածելով, թե ինչպես էի գումար հանգանակելու նոր գորգի, նոր առաստաղի, մի խոսքով՝ գրեթե նոր շենքի համար: Այս ամենը տեղի ունեցավ, ***երբ*** մենք նոր էինք պատրաստվում քայլ անել Աստծո կատարյալ կամքի մեջ:

Այդ ամենի փոխարեն ես գործածեցի Աստծո Խոսքը, որն իմ սրտում էր: Ես հրաժարվեցի կենտրոնանալ խնդրի վրա. փոխարենը՝ *հավատացի* պատասխանին: Պարզվեց, որ շենքին նվազագույն վնաս էր հասցվել, և Կալիֆոռնիա վերադառնալուն պես մենք շատ արագ վերականգնեցինք ամեն ինչ:

Երբ նեղությունը վրա է հասնում, հանկարծակիի մի՛ եկեք: Ավելի լավ է՝ հեռացրե՛ք ձեր հայացքը խնդիրներից և **կենտրոնացե՛ք ձեր Աղբյուրի վրա**: Թո՛ւյլ տվեք, որ ձեր սրտում եղող Աստծո Խոսքը բարձրանա, իսկ հետո պինդ բռնե՛ք այն: ***Նեղությունը՝ հնարավորություն է, որ մտերիմ հարաբերություններ կառուցեք Տիրոջ հետ:*** Եթե զգում եք, որ չունեք զորություն, քանի որ ձեր Խոսքի իմացության մակարդակը ցածր է, ինչ-որ բան ձեռնարկեք: Անգործության մի՛ մատնվեք՝ սահմանափակելով Աստծուն, և մի՛ դառնացեք: Փոխարենը՝ ***աշխատե՛ք ձեզ վրա:*** Վստահե՛ք Աստծուն՝ ձեր միակ Աղբյուրին, և թո՛ւյլ տվեք, որ ձեր սպասումն աճի: *Մի՛ փախեք նեղությունից, որովհետև դա սահմանափակում է Աստծուն ձեր կյանքում:* Աստված ցանկանում է մշտապես հոգալ ձեր բոլոր կարիքները: *Խորասուզվե՛ք* Նրա մեջ. **փառաբանե՛ք Նրան, երկրպագե՛ք Նրան և հավատացե՛ք Նրա Խոսքին**: Որոշո՛ւմ կայացրեք, որ «*անցնելու եք մյուս կողմը»:*

## ՆԵՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՈՒՆԱՑՆՈՒՄ Է ՄԵԶ

Մինչև առաջ անցնելը, հավատացե՛ք ձեր սրտում, որ Աստված չի օգտագործում **հիվանդություն, մարմնի տկարություն և ողբերգություն**, երբ նեղություն է բերում ձեր կյանքում: **Աստված օգտագործում է այնպիսի նեղություն, որը** ***հասունացնում*** **և** ***կատարելագործում է*** **ձեզ**: Աստծուց ուղարկված նեղությունները չեն սպանում կամ կործանում ձեզ: **Հիվանդությունը, մարմնի**

**տկարությունը և ողբերգությունը** ***թշնամուց են:*** Թշնամին ցանկանում է սպանել ձեզ, ոչ թե հասունության հասցնել: Հովհաննեսի Ավետարանի 10.10-ում գրված է. *«Գողը չի գալիս՝ բայց միայն, որ գողանա և սպանի և կորցնի: Ես եկա, որ կյանք ունենան, և է՛լ ավելի ունենան»:* Աստված **բարի է**, և **Նրա կողմից ուղարկված նեղությունը նման է էտման կամ պատժի**, ինչպես որ դուք կխրատեիք ձեր որդուն կամ դստերը, միայն թե այս դեպքում օգուտը և օրհնությունը շատ ավելին են:

Այնպես որ, խնդրում եմ, երբեք մի՛ ասեք, որ Աստված հիվանդություն է տվել ձեզ՝ ինչ-որ բան սովորեցնելու համար: Միգուցե դուք ինչ-որ բան եք սովորել, երբ պայքարել եք հիվանդության դեմ և փնտրել եք Աստծո բժշկությունը, ինչը հրաշալի է: Դուք միշտ օրհնված կլինեք, եթե փնտրեք Աստծուն: Բայց **մի՛ շփոթվեք** այն հարցում, թե «ով՝ ինչ է ուղարկել», միայն այն բանի համար, որ դուք փնտրել եք Աստծուն և ինչ-որ բան եք սովորել: Աստված չի զարկում ձեզ հիվանդությամբ, տկարությամբ կամ ողբերգությամբ, քանի որ այդ բաները *կկործանեն* ձեզ և ձեր ընտանիքը: Մշտապես հիշե՛ք սա:

Այսպիսով, **աստվածային նեղությունը մեզ ընձեռում է աճ ունենալու և մեր բնավորությունը կառուցելու հնարավորություն**: Ինչպես ես արդեն նշեցի, այն թույլ է տալիս տեսնել մեր կյանքի թերությունները, որոնք շտկման կարիք ունեն: **Աստված խոստանում է տալ ձեզ բնավորություն**, ոչ թե տաղանդ: Տաղանդը բարձրացնում է ձեզ կյանքում, իսկ բնավորությունը պահում է ձեզ բարձունքի վրա: Շատ հարանվանություններ սովորեցնում են, որ դուք պարզապես պետք է սերտեք Աստվածաշունչը և գործածեք ձեր պարգևները: Ես ուզում եմ ասել, որ ***Աստվածաշունչը սերտելը բավական չէ:*** Ձեր հիշողությունը չի անցկացնի ձեզ դժվարին ժամանակներով: Դժվարին ժամանակներն օրհ-

նության վայր են դառնում՝ շնորհիվ այն խոսքերի, որոնք յուրացրել եք, երբ *մտորել եք* դրանց շուրջ, ոչ թե այն խոսքերի, որոնք պարզապես անգիր եք սովորել:

Պատահե՞լ է, որ խորհրդատվություն անցկացնեք ինչ-որ մեկի հետ և որևէ խոսք մեջբերեք Աստվածաշնչից՝ այդ մարդուն օգնելու համար, իսկ նա ավարտի այդ խոսքը ձեզ հետ: Այդ մարդն *անգիր սովորել է աստվածաշնչյան խոսքը*, բայց *այն օգուտ չի բերել*, որովհետև նա երբեք **չի մտորել այդ խոսքի շուրջ և անձնական հայտնություն չի ստացել** դրանից: Սա է պատճառը, որ նա ***չունի տեսիլք, այսինքն՝ հայտնված ճշմարտություն իր իրավիճակի համար:*** Դուք չեք կարողանա ազատվել ձեր նեղությունից, քանի դեռ չեք հավատացել, որ դա հնարավոր է: Մինչև չհավատանք, մեր վերաբերմունքը մեզ կպահի նեղության մեջ:

**Մեր վերաբերմունքը** ***թույլ չի տալիս մեզ*** **հաջողության հասնել, բայց նեղությունը** ***կառուցում է*** **մեր վերաբերմունքը:** Պատկերացրեք, որ ժապավենով տեսախցիկ ունենք: Մենք կարող ենք լուսանկարել՝ ինչ ցանկանանք, բայց քանի դեռ ժապավենը երևակված չէ, մենք իրականում չենք իմանա, թե ինչ է ստացվել: Նույնը տեղի է ունենում ձեզ հետ: ***Ձեր ներսում ներուժ կա, բայց քանի դեռ չի զարգանում, դուք երբեք չեք տեսնի այն:*** **Ահա թե ինչու չպետք է վախենաք, երբ նեղություն է գալիս, քանի որ այն** ***երևակում է*** **ձեր իրական անհատականությունը և** ***կառուցում է*** **ձեր բնավորությունը:**

Երանի՜ ես իմանայի այս մասին, երբ 20 տարեկան էի: Մեզնից շատերը պարզապես հանձնվել են՝ նայելով իրենց խնդիրներին: Ամեն անգամ, երբ դուք հանձնվում և փախչում եք, հիասթափվում եք և մտածում, որ Աստվածաշունչը չի գործում, եկեղեցին չի գործում, և ձեր ամուսնությունը չի գործում, դուք ձախողում եք ձեր քննությունը: *Եթե դուք հրաժարվում եք*

*անցնել ինչ-որ բանով, նշանակում է՝ դուք **ընդունել եք սուտն այն մասին, որ երբեք չեք կարողանա հասնել ձեր երազանքին***, **և սահմանափակել եք Աստծուն**: Դուք որոշել եք, որ դա չափազանց բարդ է, և որ ավելի լավ է՝ բավարարվեք ձեր ունեցածով:

*Մենք չենք թողնելու և չենք գնալու. մենք սովորելու ենք:* Լսե՛ք ինձ. **դուք պետք է կրկին հանձնեք նույն քննությունը**՝ անկախ այն բանից, թե ո՛ւմ հետ կամուսնանաք, ի՛նչ աշխատանք կգտնեք, կամ ո՛ր եկեղեցին կհաճախեք: Դուք պետք է ամրացնեք ձեր ամրագոտիները, քայլեք Աստծո հետ, շտկեք ձեր վերաբերմունքը և հանձնեք ձեր քննությունը: Աստված ցանկանում է, որ *հասնեք ձեր սրտի երազանքին:* Նա է տվել ձեզ այդ երազանքը, բայց դուք *պետք է շտկումներ անեք* ձեր բնավորության և վերաբերմունքի մեջ, **մինչև այն իրականանա**: Դուք չեք կարող ստանալ ռազմական ավարը՝ առանց դրա համար գին վճարելու, իսկ ***գինը՝ նեղության միջով անցնելն է***:

Ահա մի քանի պարզ օրինակ այն մասին, թե ինչպես պետք է փոխվի մարդու վերաբերմունքը նեղության բախվելիս: Ենթադրենք՝ ձեզ դուր չեն գալիս ձեր հովվի քարոզները, որովհետև նա հիմնականում խոսում է այնպիսի խնդրի մասին, որը չեք ցանկանում շտկել ձեր կյանքում, և դուք այլ եկեղեցի եք գտնում: Առաջին մի քանի ամսում ամեն ինչ «վարդագույն» է, բայց *հանկարծ* ձեր նոր հովիվն սկսում է քարոզել *նույն խնդրի մասին:* Ահա և այն իրավիճակը, երբ դուք ստիպված եք վերահանձնել ձեր քննությունը: Ավելի լավ է՝ **խնդրեք Աստծուն օգնել ձեզ, որ փոխեք ձեր բնավորությունը**, քան անմտորեն համառեք և բարկանաք: Մի՛ սահմանափակեք Աստծուն. ավելի լավ է՝ ***փոխե՛ք ձեր վերաբերմունքը:***

Ենթադրենք՝ դուք մեքենայով պատվեր եք վերցրել «ՄակԴոնալդս»-ից: Տուն հասնելուն պես տեսնում եք, որ նրանք

ավելի շատ կեչուպ և պանիր են դրել ձեր համբուրգերի մեջ, քան դուք խնդրել էիք, և մոռացել են ծողիկ և անձեռոցիկ ավելացնել: Դուք անմիջապես բռնկվում եք. «Ես կվերադառնամ և կասեմ այդ անխելքներին, թե ինչ եմ մտածում նրանց մասին: Ինչ է՝ նրանք այդքան դատողություն չունե՞ն, որ սխալվում են հասարակ պատվերի մեջ»: Դուք հենց նոր ծախողեցիք ձեր վերաբերմունքի քննությունը:

Թեև ինքներդ պետք է փոխեք ձեր վերաբերմունքը, Աստված մենակ չի թողնի ձեզ: Պետրոսի առաջին թղթի 5.10-ում գրված է այն նեղությունների մասին, որոնց մենք բախվում ենք կյանքում, այն սկսվում է այսպես. *«Եվ ամեն շնորհքի Աստված...»*: Շնորհքը՝ անզոր և աննշան բառ չէ: «Շնորհք» բառը միայն չի նշանակում «անարժանաբար տրված բարեհաճություն»: **Շնորհքը՝ Սուրբ Հոգու *բացարձակ զորությունն է***, որը կատարում է այն, ինչը դուք չեք կարող կատարել ձեր ուժերով: Երբեմն նեղության պատճառով մենք թուլացած և հյուծված ենք զգում մեզ: Հենց այդ պահին է, որ **կարող ենք հավատալ, որ շնորհքը՝ Սուրբ Հոգու զորությունը, կամրացնի մեր միտքը և սիրտը**: Ամեն շնորհքի Աստված կօգնի ձեզ անցնել *այն ժամանակներով, երբ դուք սովորում եք հաջողվել կամ բարգավաճել:* Եթե ձեր ընտանիքը քայքայվում է, Նա *շնորհք* կտա ձեզ, որ շտկեք ամեն ինչ: Ամեն շնորհքի Աստված կօգնի ձեզ ունենալ ճիշտ վերաբերմունք և *կառուցել ձեր բնավորությունը:* **Նա երբեք չի թողնի, որ մենակ անցնեք ձեր փորձությունը**: Միայն այս փաստը պետք է ուժ և ուրախություն հաղորդի ձեզ:

Հակոբոսի 1.2-4-ում գրված է հետևյալը.

*«Բոլորովին ուրախություն համարե՛ք, եղբայրնե՛րս, երբ որ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք՝ գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում:*

*Իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որ կատարյալ և ամբողջ լինեք, և ոչ մի բանի պակասություն չունենաք»:*

**Նեղությունը Հոգու պտուղները հասունացնելու հնարավորություն է ընձեռում մեզ**: *«Համբերություն»* բառն այս հատվածում կարելի է փոխարինել «հասունություն» բառով: *Շատերը* **մեծ դժկամությամբ** *են ուղերձներ լսում համբերելու և հավատքի դավանություններ անելու մասին*, **քանի որ դա աշխատանք է պահանջում**: Նրանք գերադասում են բավականանալ իրենց ունեցածով և ասում են. «Դա չի գործում: Ես փորձել եմ հինգ օր և ոչ մի արդյունք չեմ տեսել»: Դանիելի գրքի 10-րդ գլխում կարդում ենք, որ նա աղոթեց *քսանմեկ օր*, մինչև որ *արդյունք տեսավ:* Ցավալի է, որ **շատերը կանգ են առնում՝ հասնելով, օրինակ, տասնիններորդ օրվան**, և ասում են. «Հոգնել եմ սրանից: Ոչինչ տեղի չի ունենում. այնպես որ, ես կդադարեմ դավանություններ անել»:

**Համբերությունն** *իսկապես* **աշխատանք է կատարում ձեզանում**: Կարող են պատճառներ լինել, թե ինչու մենք անմիջապես չենք ստանում մեր պատասխանները, բայց այդ պատճառները որևէ կապ չունեն Աստծո Խոսքի ճշմարիտ լինելու հետ: Դուք պետք է *թույլ տաք այն նեղությանը*, որին բախվել եք, *հասունացնել ձեզ:* Դուք պետք է *հավատաք Խոսքին*, *դավանեք* և *Խոսքը կատարող դառնաք:* Այն պետք է լինի ձեր մտքում և պետք է դուրս գա ձեր բերանից: Ձեր ցանկալի արդյունքները երբեք ի հայտ չեն գա ձեր կյանքում, քանի դեռ Խոսքը դուրս չի եկել ձեր շուրթերից: *Եթե ինչ-որ փոփոխություն եք ցանկանում ձեր կյանքում, այդ փոփոխությունը նախ պետք է տեղի ունենա ձեր մտքում և ձեր բերանում:* Դուք չեք կարող հանձնվել, չեք կարող տեղի տալ և չեք կարող փախչել: Աստված ցանկանում է, որ

դուք համբերություն և ուժեղ բնավորություն դրսևորեք. հակառակ դեպքում, կրկին ու կրկին հանձնելու եք նույն քննությունը:

Ցանկացած նեղություն, որով դուք անցնում եք, պատրաստության փուլ է ձեր կյանքում: Դավիթը նախ՝ կռվեց առյուծի հետ, հետո՝ արջի, և հետո՝ Գողիաթի, *մինչև որ* դարձավ Իսրայելի թագավոր: Նույնիսկ զբաղեցնելով բարձրագույն դիրքն Իսրայելում՝ **նա ստիպված էր** հաջորդաբար **պայքարել** ծագող **խնդիրների հետ**: Դուք նույնպես պետք է որոշում կայացնեք, որ կշտկեք ձեր վերաբերմունքը՝ երբ նեղությունը մարտահրավեր նետի: Դուք պետք է կարգի բերեք ձեր կյանքը, որպեսզի Աստված կարողանա առաջխաղացում տալ ձեզ: Մի՛ սահմանափակեք Աստծուն ձեր կյանքում՝ որոշելով անձամբ հոգալ ձեր կարիքները, և մի՛ սահմանափակեք Նրան ձեր վանող վերաբերմունքով: Ամեն անգամ, երբ թույլ եք տալիս, որ ձեր վերաբերմունքը շտկվի, դուք որևէ սահմանափակում եք ***քանդում*** ձեր կյանքից: Դուք նոր դասեր կքաղեք ձեր նեղությունից, որոնք նախկինում չգիտեիք: **Հնազանդվե՛ք Աստծուն, դավանե՛ք այն Խոսքը, որը պահել եք ձեր սրտում, և թո՛ւյլ տվեք, որ համբերությունը և ինքնատիրապետումը հասունացնեն ձեր բնավորությունը**: Եթե ճիշտ արձագանքեք նեղություններին, Աստված կվարձատրի ձեզ:

## Ե՞ՐԲ Է ՍԱ ԱՎԱՐՏՎԵԼՈՒ

Քանի որ մենք սկսեցինք այս գիրքը՝ խոսելով այն մասին, որ Իսրայելի ժողովուրդը սահմանափակում էր Աստծուն, կարդանք Նրա հրահանգները՝ ուղղված իսրայելցիների հաջորդ սերնդին: Երկրորդ Օրինաց 8-րդ գլխում Տերը ոչ միայն խրատում է մեզ՝ ցույց տալով, թե **ինչպես** անցնել նեղության միջով, այլև հայտնում է, որ այն **ավարտվելու է**: Սկսենք առաջին խոսքից. *«Այն բոլոր պատվիրանները, որ Ես այսօր պատվիրում եմ*

*քեզ, զգո՛ւյշ եղեք, որ անեք, որպեսզի ապրեք և շատանաք և մտնեք, ժառանգեք այն երկիրը, որ Եհովան ձեր հայրերին երդումով խոստացավ»: Առաջին հերթին ցանկանում եմ նշել, որ Աստված պատվիրեց նրանց «մտնել»:* Նշանակում է՝ ***Աստված ցանկանում է, որ դուք առաջ գնաք:*** Նա չի ցանկանում, որ մնաք ձեր տեղում և հանձնվեք: Աստված ցանկանում է, որ ձգեք նեղության սանձերը և շարժվեք առաջ՝ դեպի այն երազանքը, որը տվել է ձեզ: Աստված չէ, որ ձեզ ետ է պահում ձեր ապագայից: Դուք նույնպես չեք կարող մեղադրել դրանում այլ մարդկանց. **դուք միակն եք, ով խոչընդոտում է ձեր առաջընթացին**:

Երկրորդ Օրինաց 8.3-ում գրված է.

*«Եվ քեզ խոնարհեցրեց և սոված պահեց և մանանա ուտեցրեց, որ ո՛չ դու էիր ճանաչում, և ո՛չ քո հայրերը, որ քեզ իմացնի, թե ոչ միայն հացով կապրի մարդ, այլ մարդը Եհովայի բերանից դուրս եկած ամեն բանով (կամ՝ խոսքով) կապրի»:*

Աստված հենց նոր ասաց, որ նեղության նպատակը՝ մեզ **առաջխաղացում տալն** է: Նեղությունը գալիս է, որպեսզի մենք **ինչ-որ բան սովորենք** Նրա մասին: Մենք պետք է գիտակցենք, որ նեղությունից միակ ելքը այն է, որ **վստահենք Նրան և Նրա Խոսքին**, և հավատանք, որ **Նա երբեք չի թողնի մեզ**:

Այս խոսքում է նեղությունից դուրս գալու բանալիներից մեկը՝ *«խոնարհ»* բառը: **Մենք չպետք է խոնարհեցնենք մեզ նեղության առջև, անձնատուր լինենք դրան կամ մեծարենք**: Պետրոսի առաջին թղթի 5.6-ը հորդորում է մեզ. *«Ուրեմն, խոնարհվե՛ք Աստծո հզոր ձեռքի տակ, որ բարձրացնի ձեզ որոշված ժամանակին»* (KJV): Մենք պետք է ***խոնարհվենք Աստծո առջև*** և պարզենք, թե ինչ կարող ենք անել, որպեսզի մեզ համար որոշված ժամանակը գա:

Նեղությունը փորձում է մեզ՝ պարզելու համար, թե ինչ ենք սովորել, կամ՝ թե ինչպես ենք սահմանափակել Աստծուն մեր կյանքում: Եբրայեցիների 12.6-ը հայտնում է, որ Աստված *խրատում կամ էտում է ամեն որդու*, որին ընդունում է, և կանչում է դեպի Իր սիրտը: Ուրեմն, Աստծուց էտվելը՝ պատիվ է: Երբ հնազանդվենք Նրան, **Նա կհեռացնի մեր հին մտածելակերպը և այն ամենը, ինչը պտուղ չի բերում մեր կյանքում**: Աստված կանի դա՝ մինչև որ մեր ուշադրությունն ուղղվի Իրեն: Երբ մենք խոնարհվենք՝ *փնտրելով Նրան և կարդալով Նրա Խոսքը*, Աստծո Հոգին կհայտնի մեր կյանքի այն բնագավառները, որոնցում փոփոխության կարիք կա, և մենք կշտկենք: Որքան մենք փոխվենք, այնքան ավելի ուժեղ կդառնանք, և ի վերջո կազատվենք ***նեղությունից***՝ ***ձեռք բերելով հարաբերությունների նոր մակարդակ Տիրոջ հետ:***

Երկրորդ Օրինաց 8.16-ը պնդում է. *«Որ անապատում քեզ մանանա ուտեցրեց, որ քո հայրերը չէին ճանաչում, որ քեզ խոնարհեցնի՝ քեզ փորձելու համար, և վերջը քեզ բարիք անի»:* **Աստված ցանկանում է, որ** նեղության ժամանակ **խոնարհվեք** Իր առջև, որպեսզի *«վերջը»* ***բարիք ստանաք:***

Պետրոսի առաջին նամակում այս *«վերջը»* անվանվում է *«ժամանակով»* կամ *«իր ժամանակին»:* Միգուցե հարցնեք. «Հովի՛վ, ե՞րբ կգա ինձ համար որոշված ժամանակը»: Ձեզ համար որոշված ժամանակը կգա, երբ ավարտեք այն փուլը, որում ներկայումս գտնվում եք, և միայն Աստված գիտի, թե երբ դա տեղի կունենա, որովհետև մեր ժամանակները Նրա ձեռքում են (տե՛ս Սաղմ. 31.15): Դուք **պետք է շարունակեք կատարել այն, ինչը վստահված է ձեզ, և մնացածը հանձնեք Տիրոջը**: Գաղատացիների 6.9-ում գրված է. *«Եվ չձանձրանանք բարին գործելուց, որովհետև իր ժամանակին (կամ՝ որոշված ժամանակին) կհնձենք, եթե չթուլանանք»:* «Որոշված ժամանակին» արտահայ-

տությունը հենց դա էլ նշանակում է՝ ՈՐՈՇՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԻՆ: Մեզ համար որոշված ժամանակը կգա, եթե մինչև այդ չթուլանանք, չհանձնվենք կամ չհեռանանք: Շատերը մուտք չեն գործել իրենց համար որոշված ժամանակը, որովհետև հանձնվել են, և այժմ դառնացած են իրենց միապաղաղ և լճացած կյանքի պատճառով: Հիշե՛ք, որ **դուք պետք է *գործուն լինեք*, որպեսզի մուտք գործեք *ձեզ համար որոշված* ժամանակը**:

Իսրայելի զավակներն այդպես էլ չտեսան իրենց համար որոշված ժամանակը, որովհետև նրանք տրտնջում, մռթմռթում և բամբասում էին: ***Չընկնե՛ք այդ ծուղակը:*** Շարունակե՛ք առաջ նայել և անցե՛ք նեղության միջով: Պատշաճ արձագանքը նեղությանը՝ *մշտապես* առաջխաղացում կբերի ձեզ: Ձեր կյանքի հերթական փուլն ավարտվում է, երբ դուք հասունանում և իշխում եք ձեր ներկա նեղության վրա: **Աստված ստուգում է ձեզ՝ տեսնելու համար, թե արդյոք ինչ-որ բան սովորե՞լ եք**: *Դուք սովորում և կրթվում եք, որպեսզի պատշաճ կերպով արձագանքեք իրավիճակներին:* Մի՛ մռթմռթացեք, մի՛ տրտնջացեք, և մի՛ հոգնեք բարին գործելուց: Ձեր տրտունջն ամեն անգամ մի քայլ ետ է տանում ձեզ և նոր սահման է կառուցում ձեր և Աստծո միջև:

Եբրայեցիների 12.11-ը շարունակում է խոսել նեղության ժամանակ մեր զգացողությունների, նաև՝ մեզ համար որոշված ժամանակը գալու մասին: Գրված է. *«Եվ ամեն խրատ հենց նույն ժամանակ ուրախություն չի երևում, այլ՝ տրտմություն. բայց հետո նրանով վարժվածներին արդար խաղաղության պտուղ է վճարում»:* Ուշադրություն դարձրեք, որ «տրտմություն» բառից անմիջապես հետո միջակետ է, ինչը նշանակում է, որ այս միտքը շարունակություն ունի: Հեղինակը գրում է. ***«Բայց հետո»:*** **Նա հայտնում է ձեզ ճշմարտությունն այն մասին, որ թեև հենց հիմա դուք չարչարվում եք, դրա արդյունքում ինչ-որ բարի բան է առաջանում՝ ար-**

**դարության խաղաղ պտուղը, որը դուք հասունացնում եք ձեր նեղության ընթացքում**: «Մեսիջ» Աստվածաշունչը ձևակերպում է այս միտքը հետևյալ կերպով. *«Մի՛ ընկրկեք, մնացե՛ք Աստծո ծրագրի մեջ, որպեսզի մասնակից լինեք խոստացված ավարտին»:*

*Դուք երբեք չեք տեսնի այն բարիքը, որն առաջացրեց նեղությունը, **քանի դեռ այն չի ավարտվել**, և դուք մուտք չեք գործել ձեզ համար որոշված ժամանակը:* Դուք միայն զգալու եք, որ գործադրում եք ձեր հավատքը և սպասում եք Աստծուն՝ մինչև այն օրը, երբ արթնանաք և հասկանաք, որ դուք՝ ձեզ համար որոշված ժամանակի մեջ եք: Ահա թե ինչու է այդքան կարևոր **հնազանդվել Աստծուն, վարվել արդարությամբ և հետևել ձեր խոսքերին**: Եբրայեցիների 12.11-ի թարգմանություններից մեկում գրված է հետևյալը. *«Ես լիովին համոզված եմ, որ մարդկանց մեծ մասը չի ստանում իրենց հունձքը, քանի որ նրանք ոչ ճիշտ են արձագանքում նեղությանը»:* Միայն նեղության ավարտից հետո դուք կտեսնեք, թե ինչ հունձք է առաջացրել նեղության փուլը ձեզանում: Հենց այդ ժամանակ է, որ դուք առաջխաղացում կունենաք:

## ՇԱՐՈՒՆԱԿԵ՛Ք ՓԱՌԱԲԱՆԵԼ ՆՐԱՆ

**Ձեր սրտում** դուք պետք է **ուրախությամբ վերաբերվեք ամեն մի փորձությանը**՝ իմանալով, որ ձեր կրած **նեղությունները սովորեցնում են ձեզ**, և որ **շնորհքի Աստված երբեք չի թողնի ձեզ**: Դուք չեք սահմանափակի Աստծուն, չեք մնա ձեր տեղում և չեք նահանջի: **Աստծո հետ դուք անցնելու եք** ***այն իրավիճակով***, որի միջոցով սատանան ցանկանում էր անեծք բերել ձեր կյանքում, այսինքն՝ կանգնեցնել ձեր աճը և խափանել ձեր երազանքները: Այնպես որ, գոհացե՛ք Նրանից ձեր նեղության ավարտի համար և ***պտտե՛ք ձեր իրավիճակն ի բարին:***

Նեղության ընթացքում Աստծուց գոհանալը շատ կարևոր է: Ամեն անգամ, երբ պատրաստ եք տրտնջալ և հանձնվել, քանդե՛ք *ձեր զգացմունքային սահմանափակումները՝ փառաբանելով Տիրոջը:* Բարձրացրե՛ք ձեր ձեռքերը և սկսե՛ք գոհանալ Նրանից ամեն բարի բանի համար ձեր կյանքում, որը կարող եք մտաբերել: Երբ այսպես վարվեք, **կզգաք, որ լցվում եք զորությամբ, և հանձնվելու կամ Աստծուն սահմանափակելու** ***ցանկությունը կանհետանա:*** Դուք հաճելիորեն կզարմանաք, երբ հայտնաբերեք, որ ձեր ըմբռնումն Աստծո մասին՝ առաջվանից ավելի է լայնացել: Աստծուց գոհացող և Նրան փառաբանող սիրտը կարող է անհավատալի պտուղներ բերել Նրա համար:

Երբ բանտարկված Պողոս առաքյալը նամակներ էր գրում եկեղեցիներին, նա նույնիսկ մեկ անգամ չբողոքեց իր նեղությունից: Փոխարենը հորդորում էր բոլորին՝ *գոհանալ Աստծուց:* Պողոսը չէր գոհանում իր նեղությունների համար. նա գոհանում էր այն բանի համար, թե **Ով** է Աստված:

Երբ Դանիելը առյուծների գուբում էր, նա չգոհացավ առյուծների համար: Նա չասաց. «Աստվա՛ծ, շնորհակա՛լ եմ այս ուժեղ առյուծների համար, որոնք կանգնած են իմ առջև: Շնորհակալությո՛ւն նրանց տաք շնչառության և ատամների համար, որոնք ուզում են ծամել ինձ»: Ո՛չ: Հաջորդ առավոտյան պահապանները տեսան, որ առյուծները պառկած էին Դանիելի շուրջը, թեև պետք է որ Դանիելի կտորները ցրված լինեին նրանց շուրջը: Առյուծները կորցրին իրենց ախորժակը մարդու մսի հանդեպ, որովհետև *շնորհքի Աստված եկավ այդ գուբը՝ Դանիելի փառաբանության* ***միջոցով:***

Երբ Սեդրակին, Միսաքին և Աբեդնագովին նետեցին կրակի հնոցը, նրանք փառք չտվեցին Աստծուն կրակի տաքության համար, և չխնդրեցին ավելի շատ տաքություն՝ իրենց փորձե-

լու համար: Ո՛չ: Նրանք փառք չտվեցին Աստծուն կրակի հնոցը գցվելու *համար*. **նրանք փառք տվեցին Աստծուն կրակի հնոցի *մեջ:*** Երբ թագավորը եկավ՝ տեսնելու նրանց մոխրացած մարմինները, տեսավ հնոցի մեջ քայլող չորս մարդու՝ երեքի փոխարեն: Ապշած թագավորը հարցրեց. «Չէ՞ որ մենք երեք մարդու գցեցինք կրակի մեջ: Ես տեսնում եմ չորս մարդու, որոնք քայլում են ներսում, և կրակը չի դիպչում նրանց, և չորրորդը **Աստծո Որդու** նման է (տե՛ս Դանիել 3.24,25): Մշտապես շարունակեք փառաբանե՛լ Աստծուն, և ***Նա դուրս կհանի ձեզ*** դեպի մեծ առատության ճանապարհը, որը խոստացել է:

## ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ Է ԲԵՐՈՒՄ

Եթե դուք անցնեք նեղության միջով՝ տեղում մնալու և հանձնվելու փոխարեն **Տերը կբերի ձեզ առատության վայրը և կդարձնի օրհնություն այլ մարդկանց համար**: Երկրորդ Կորնթացիների 1.4-ում գրված է*. «Որ մխիթարում է մեզ մեր ամեն նեղության մեջ, որ մենք կարող լինենք մխիթարել նրանց, որ ամեն տեսակ նեղության մեջ են՝ այն մխիթարությամբ, որով մենք Աստծուց մխիթարվում ենք»:* «Էմփլիֆայդ» թարգմանության մեջ գրված է. *«...որ մենք նույնպես կարողանանք մխիթարել (սփոփել և խրախուսել) նրանց, ովքեր ցանկացած տեսակի դժվարության կամ վշտի մեջ են»:*

Երբ ճիշտ կերպով արձագանքենք նեղությանը, մենք ***ազդեցիկ լինելու կարողություն ձեռք կբերենք:*** Եթե չհանձնվենք և չսահմանափակենք Աստծուն նեղության մեջ, մենք օրհնված կլինենք և օրինակ կդառնանք այլ մարդկանց համար: Հովսեփն անցավ քսան տարվա նեղության միջով, բայց նա մշտապես նույն արձագանքն ուներ. «Աստված ինձ հետ է»: Իր ճիշտ դիրքորոշ-

ման շնորհիվ նա դարձավ երկրորդ իշխանավորը ամբողջ Եգիպտոսում: Հովսեփը որոշում կայացրեց ներել, մոռանալ և թույլ տալ, որ իր բնավորությունն էտվի: Նա երբեք չդադարեց կենտրոնանալ Տիրոջ վրա, և Աստվածաշնչում գրված չէ, որ նա երբևէ տրտնջաց կամ բամբասեց: Հովսեփը ոչ մի անգամ չհանձնվեց և չմնաց իր տեղում: Անկախ այն բանից, թե ինչպես էին նեղությունները մոլեգնում նրա շուրջը՝ ***նա չբավարարվեց ավելի քչով, քան <u>այն երազանքը</u>***, որն Աստված դրել էր իր սրտում: Նա օրհնություն դարձավ նրանց համար, ովքեր նեղություններ էին բերել իր կյանքում, և բացի այդ՝ հաջողակ դարձրեց նրանց:

Հիշո՞ւմ եք այս գլխի սկզբում օգտագործված մեջբերումը. «Նեղությունը՝ առաջին ուղին է դեպի ճշմարտությունը»: Այժմ դուք կարող եք հասկանալ այն: **Մի՛ սահմանափակեք Աստծուն՝ երբ ձեր կյանքում նեղություն է գալիս**: Այն համարե՛ք *ձեր սրտի վիճակը տեսնելու հնարավորություն*, որպեսզի սովորեք և փոխվեք: **Հնազանդվե՛ք Աստծուն և խոնարհվե՛ք Նրա առջև, կարդացե՛ք Նրա Խոսքը, մտորե՛ք աստվածաշնչյան հատվածների շուրջ, հավատացե՛ք, որ Աստված լսում է ձեր աղոթքները, և Նա կպտտի բացասական հանգամանքները**՝ դարձնելով դրական: Անկախ այն բանից, թե ինչի եք բախվել՝ *կանգ մի՛ առեք:* Մտածե՛ք այն մասին, որ ձեր **բնավորությունը ձևավորվում և էտվում է**, որ ձեր **վերաբերմունքը հասունանում է**, և **փա՛ռք տվեք Աստծուն այն ամենի համար, ինչ դուք սովորում եք**: **Ոչ մի դև չի կարողանա արգելել ձեզ**, որ մուտք գործեք ձեզ համար որոշված ժամանակի մեջ: ***Քանդե՛ք այն սահմանափակումները, որոնք ետ են պահում ձեզ Աստծուց, և քայլե՛ք դեպի առատությունը:***

## Գլուխ 13

# Դե՛ն գցեք բոլոր սահմանափակումները

Եթե դուք կարդացել եք այս գիրքն ամենասկզբից, արդեն գիտեք որոշ բաներ Աստծուն սահմանափակելու մասին: Դուք իմացաք «սահմանափակել» բառի իմաստը եբրայերենով. *«Արգելք դնել՝ թույլ չտալով Աստծուն անցնել այն. շրջան գծել Աստծո շուրջը»:* Դուք իմացաք, թե ինչպես էին իսրայելցիները սահմանափակում Աստծուն: Նրանք հարցնում էին. «Կարո՞ղ է Աստված անել դա», «Կարո՞ղ է Աստված անել դա ինձ համար» և «Կարո՞ղ է Աստված անել դա ինձ համար հիմա»:

Մենք խոսեցինք այն մասին, որ նման հարցերն ասես *ապտակ լինեին Աստծո համար,* ***քանի որ Նա անսահմանորեն սիրում է մեզ:*** Այնուհետև մենք թվարկեցինք Աստծո հայտնված անունները: Մենք ցույց տվեցինք, որ Ն*ա ցանկանում է գալ ձեր կյանքի ամեն մի բնագավառը և քանդել բոլոր սահմանափակումները*, որոնք դուք կառուցել եք: Մենք նշեցինք, որ մաշկի գույնը, կրթությունը, մշակույթը, աշխատանքը, ընտանիքը և դիրքը հասարակության մեջ որևէ կապ չունեն այն սահմանափակումների հետ, որոնք մենք կառուցել ենք մեր կյանքում: ***Մեր կյանքի սահմանափակող գործոնը՝ սպասման բացակայությունն***

*է*: Դրանից հետո մենք խոսեցինք այն մասին, որ ձեր սպասումն ավելացնելու համար դուք պետք է ձեռք բերեք աստվածային հատկանիշներ, ինչպիսիք են եղբայրասիրությունը, աստվածապաշտությունը, ժուժկալությունը, առաքինությունը և գիտելիքը: Մենք անդրադարձանք այն բանին, որ մարդիկ սահմանափակում են Աստծուն՝ *շշնջոցի վերածելով իրենց գոչյունը:* Մենք նաև բացատրեցինք, որ նեղությունը կարող է կա՛մ կոտրել մեզ, կա՛մ ճեղքում բերել մեր կյանքում, և որ դա ***կախված է այն բանից, թե՝ արդյո՞ք մենք կսահմանափակենք Աստծուն:***

Այժմ՝ երբ դուք գիտեք այն բազմաթիվ միջոցների մասին, որոնցով մենք կարող ենք սահմանափակել Աստծուն, ***ժամանակն է դեն նետել բոլոր սահմանափակումները:***

## ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ՝ ԲԱՐՏԻՄԵՈՍԸ

Մենք նշեցինք կույր Բարտիմեոսի պատմությունը մի քանի գլուխ առաջ: Այնուամենայնիվ, այս պատմության մեջ կա ևս մեկ կարևոր ճշմարտություն, որը ես պահեցի այս գլխի համար: Մենք կկարդանք այս պատմությունը Մարկոսի Ավետարանի 10.46-49-ում.

> *«Եվ գալիս են Երիքով: Եվ երբ որ Նա և Նրա աշակերտները և շատ ժողովուրդ Երիքովից դուրս էին գալիս, Տիմեի որդի Բարտիմեոս կույրը ճանապարհի վրա նստած մուրացկանություն էր անում:*
>
> *Եվ լսելով, թե Հիսուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել և ասել. «Հիսո՛ւս, Որդի՛ Դավթի, ողորմի՛ր ինձ»:*
>
> *Եվ շատ մարդիկ սաստում էին նրան, որ լուռ կենա, բայց նա է՛լ ավելի էր աղաղակում. «Որդի՛ Դավթի, ողորմի՛ր ինձ»:*

*Եվ Հիսուսը կանգնեց և ասաց, որ նրան կանչեն, և կույրին կանչեցին ու ասացին. «Քա՛ջ եղիր, վե՛ր կաց, քեզ կանչում է»»:*

Մինչև այս հատվածի բանալի խոսքին անցնելը, ես ցանկանում եմ մի փոքր պատմական տեղեկություն տալ ձեզ: Եթե ինչ-որ մեկը Հիսուսի օրերում կույր էր կամ բորոտ, նա պետք է հատուկ զգեստ կրեր, որը ցույց էր տալիս նրա հաշմանդամությունը կամ հիվանդությունը: Տեսնելով այդ հանդերձը՝ մարդիկ կարող էին հեռվից իմանալ, թե ինչ դժբախտություն էր պատահել այն կրողին՝ մինչև նրան մոտենալը:

Հասկանալով այս պատմական փաստը՝ ես ցանկանում եմ, որ դուք նկատեք այս պատմության բանալի խոսքը: Խոսք 50-ում գրված է. *«Նա էլ **իր հանդերձը դեն զցեց**, վեր կացավ և Հիսուսի մոտ եկավ»:* **Բարտիմեոսն ստացավ իր տեսողությունը՝ *մինչև* իր տեսնելը**: Նա ***հանեց*** այն հանդերձը, որը պիտակում էր կամ սահմանափակում էր իրեն, և ***քայլեց դեպի*** Պատասխա՛նը: Դուք գիտե՞ք, թե ինչ է դա նշանակում մեզ համար այսօր. որ ձեր կյանքի սահմանափակումները հեռացնելու համար **դուք պետք է սկսեք դեն նետել ինչ-որ բներ**: Դուք պետք է հեռացնեք որոշ մարդկանց ձեր կյանքից: Պետք է հեռացնեք որոշ բաներ ձեզնից: Դուք պետք է ասել. «Ես դե՛ն եմ նետում իմ կյանքի բոլոր սահմանափակումները: Այս պահից ի վեր ես հրաժարվո՛ւմ եմ սահմանափակել Աստծուն»:

Մարկոսի 10.51,52-ում այս պատմությունը շարունակվում է.

*«Եվ Հիսուսը պատասխանեց և նրան ասաց. «Ի՞նչ ես կամենում, որ անեմ քեզ»: Կույրն էլ Նրան ասաց. «Ռաբբունի՛, որ տեսնեմ»:*

*Հիսուսն էլ ասաց նրան. «Գնա՛, քո հավատքը քեզ ապրեցրեց»: Եվ նա շուտով տեսավ, և ճանապարհով Հիսուսի ետևից գնում էր»:*

Բարտիմեոսը դեն նետեց իր հանդերձը՝ մինչև իր տեսողությունն ստանալը և Հիսուսին մոտենալը: *Հիսուսը պատվեց այդ մարդու հավատքը՝ նրա գործերի շնորհիվ*. **Բարտիմեոսը հրաժարվեց ապրել սահմանափակ կյանքով**: Մի փոքր առաջ անցնենք, ինչից հետո ես ցանկանում եմ աղոթել ձեզ հետ, որ դեն նետեք ձեր սահմանափակումները:

## ՓՈՔՐ ՏԵՍԻԼՔԸ ԴՐԴՈՒՄ Է ՄԵՂՔԻ

Ծննդոց 13.10-18-ում գրված է Ղովտի և Աբրահամի, ինչպես նաև՝ նրանց բաժանման մասին: Այս երկու ազգականների միջև վեճեր կային, և խաղաղությունը պահպանելու համար Աբրահամն առաջարկեց Ղովտին ընտրել երկրի այն մասը, որը ցանկանում էր, և այն իրենը կլիներ: Գրված է, որ Ղովտն ***«իր աչքերը բարձրացրեց»*** դեպի Սոդոմը և Գոմորը և ընտրեց այդ վայրը: Նա բնակվեց Սեգովր քաղաքում, որը նշանակում է «փոքր»:

Այսպիսով, Ղովտը որոշեց գնալ մի ճանապարհով, իսկ Աբրահամը՝ մեկ այլ: Ծննդոց 13.12-ում գրված է. «Աբրամը Քանանի երկրում բնակվեց, Ղովտն էլ դաշտի քաղաքներում բնակվեց և իր վրանը Սոդոմի մոտ բացեց»: Այս խոսքը կարելի է շրջասությամբ ենթարկել հետևյալ կերպով. «Ղովտը բացեց իր վրանը մեղքի մոտ, և առավոտյան արթնանալիս, առաջին բանը, որ նա տեսնում էր, մեղքն էր: Նույնպես, երեկոյան՝ քնելուց առաջ, վերջին բանը, որ նա տեսնում էր, մեղքն էր»:

Մենք արդեն նշեցինք, որ Սոդոմի մոտակայքում գտնվող քաղաքը, որտեղ ապրում էր Ղովտը, կոչվում էր «Սեգովր», որը նշանակում է «փոքր»: *Ղովտը ցանկանում էր հնարավորինս մոտ ապրել Սոդոմին*, ***սակայն չլինել քաղաքի ներսում:*** Նա նեղ մտածելակերպ և սահմանափակ միտք ուներ և շարունակ ծանրութեթև էր անում Սոդոմ գնալը: Եվ ի վերջո, գլխակորույս նետվեց մեղքի մեջ: Եթե Աբրահամը չաղոթեր նրա համար, և հրեշտակները չփրկեին նրան, Ղովտը և նրա ամբողջ ընտանիքը կմահանային Սոդոմի և Գոմորի կրակե դատաստանի ժամանակ:

Երբ դուք սահմանափակում եք Աստծուն, ձեր միտքն էլ է սահմանափակ դառնում: Երբ պատեր եք կառուցում՝ հրաժարվելով ներս թողնել Նրան, ինքներդ եք շրջապատվում դրանցով: Դուք կբավարարվեք դրանով, քանի դեռ ձեր կյանքում թեկուզ մի փոքր տեղ կա հոգևոր գործունեության համար, բայց *շուտով խթանիչներ կփնտրեք ձեր նեղ պատերից դուրս:* Դուք կսկսեք ծանրութեթև անել մեղքը ձեր մտքում: Դուք կգնաք այնքան, որքան կարող եք՝ առանց մեղքի մեջ փաստացիորեն ընկնելու: Դուք կլինեք մեկ ոտքով այստեղ, իսկ մյուսով՝ այնտեղ: Բայց *շուտով այն մեղքը, որին շարունակ նայում էիք, չափազանց հրապուրիչ կդառնա:* Արդյունքում ձեր երկու ոտքերն էլ կհայտնվեն այնտեղ, որտեղ չպետք է լինեին:

Ինչպես Սոդոմը և Գոմորը՝ ***մեղքն ի վերջո կկործանի ձեր կյանքի ինչ-որ մասը, եթե ոչ՝ ձեր ամբողջ կյանքը:*** Ցավալի է ասել, բայց մարդիկ ամեն օր կործանվում են, քանի որ սահմանափակել են Աստծո աշխատանքն իրենց կյանքում: *Նրանք հրաժարվեցին բաժնեկցել Նրա սիրուն* և ***շրջան գծեցին Աստծո շուրջը***՝ արգելելով Նրան մոտենալ իրենց: Դրանից հետո *նրանք անձամբ ստանձնեցին իրենց կյանքի իշխանությունը և*

*փորձեցին այլ միջոցներ գտնել՝ իրենց կյանքի դատարկությու-նը լցնելու համար:* Ինչպես և Ղովտը՝ նրանք ձգտում էին *իրենց* նպատակներին և թույլ չէին տալիս Աստծուն՝ կատարել *Իր* կամքը:

## ԼԱ՛ՅՆ ՄՏԱԾԵՔ

Աբրահամի ընթացքը լիովին հակառակ է Ղովտի պատ-մությանը: Ծննդոց 13.14-18-ում գրված է, որ Աստված խոստա-ցավ Աբրահամին, որ երկիր կտա նրա սերնդին, որը հավիտյան նրանցը կլինի, և որ նրա սերունդը կլինի երկրի փոշու չափ: Դա խիստ տպավորիչ խոստում էր նման տարեց մարդու համար:

Խոսք 18-ում գրված է. *«Եվ Աբրամը չվեց և եկավ, բնակ-վեց Մամբրեի կաղնիների մեջ, որ Քեբրոնում է, և այնտեղ սեղան շինեց Եհովայի համար»:* Սա լիովին հակառակ է վրանը մեղքի մոտ կանգնեցնելուն: Աբրահամը բնակվեց Մամբրեի հարթավայ-րում. այս բառը նշանակում է «ուժ և բարգավաճում»: Նա ապ-րում էր Քեբրոնում, ինչը նշանակում է «հաղորդակցություն և ընկերություն»: Աբրահամը արեց **իրենից կախված ամեն ինչ**, որ-պեսզի իր և Աստծո միջև սահմանափակումներ չլինեին: **Երբ նա ծախողվեց, ապաշխարեց**: Աբրահամն ապրում էր մի վայրում, որի անվան նշանակությունն էր՝ «հաղորդակցություն և ընկերութ-յուն», որովհետև այն *խորհրդանշում էր* նրա հրաշալի հարաբե-րությունները Տիրոջ հետ: Արդյունքում նա առատությամբ «ուժ և բարգավաճում» ստացավ: Աբրահամը մինչև օրս հայտնի է որ-պես շատ ազգերի հայր: Նրա անունը երկու անգամ գրված է Եբ-րայեցիների 11-րդ գլխի «Հավատքի սրահում», որտեղ ասվում է, որ *այս աշխարհն արժանի չէր նրա պես մարդկանց* (խոսք 38):

Ինչո՞ւ էր Աբրահամն այդքան օրհնված: Պատճառն այն է, որ ***նա երբեք գիտակցաբար սահմաններ չկառուցեց իր և Աստծո միջև:*** Նա ոչ մի անգամ չարգելեց Աստծուն գործել իր կյանքում: Սա ուղղակիորեն առնչվում է մեր գրքի թեմային. **երբ** ***մտերիմ հարաբերություններ*** **եք** ունենում ***Աստծո հետ***, դուք ձգտում եք ***քանդել ամեն սահմանափակում, որը բաժանում է ձեզ Նրանից***: Այսօր ***Աստված ցանկանում է, որ դուք հաղորդակցվեք և ընկերանաք Իր հետ: Նա ցանկանում է բարգավաճում տալ ձեզ, ազատել և առատությամբ օրհնել: Նա ցանկանում է ցույց տալ, թե*** իրականում որքա՛ն ***է սիրում ձեզ: Աստված ցանկանում է, որ դուք քանդեք ամեն մի սահմանափակում, որը բաժանում է ձեզ Իրենից***:

Թույլ տվեք աղոթել ձեզ համար.

*«Հա՛յր, շնորհակա՛լ եմ, որ բացում ես մեր աչքերը՝ տեսնելու համար, որ իրական սահմանափակող գործոնը մեր կյանքում ո՛չ մեր անցյալն է, ո՛չ էլ որևէ բան մեր ներկայում: Սահմանափակող գործոնը մեր կյանքում՝ Քեզնից սպասում չունենալն է: Ներհ՛ր մեզ բոլոր հարցերում, որոնցում ձախողվել ենք՝ անհրազեկության, հպարտության, եսասիրության և համառության պատճառով:* ***Մենք ցանկանում ենք լիովին հնազանդվել Քեզ, Տե՛ր:***

*Հենց հիմա ես քանդում եմ ամեն ամրություն, որը թույլ չի տալիս մարդկանց ստանալ այն սերը, որը Դու ուզում ես տալ նրանց: Աստվա՛ծ, շնորհակալություն, որ ազատում ես նրանց՝ անկախ այն բանից, թե ինչպիսին է թվում նրանց իրավիճակը: Շնորհակալություն, Սուրբ Հոգի, որ հենց հիմա հպվում ես նրանց կյանքին Քո աստվածային խաղաղությամբ և մխիթարությամբ: Մենք չենք լինի Իսրայելի զավակների պես, ովքեր շրջվեցին Քեզնից: Մենք այլևս չենք շրջվի Քեզնից, և մշտապես կհետևենք*

*Սուրբ Հոգու առաջնորդությանը, Ով ցույց կտա մեզ, թե ինչում ենք սահմանափակում Քեզ: Մենք որոշում ենք կայացնում լսել և հնազանդվել Քեզ, Տե՛ր,* ***որովհետև*** *սիրում ենք Քեզ»:*

Իսկ հիմա ինքներդ աղոթեք այս գրքի վերջին պարբերության աղոթքը:

*«Տե՛ր, ցո՛ւյց տուր ինձ այն բնագավառներն իմ կյանքում, որոնցում սահմանափակում եմ Քեզ: Անկախ այն բանից՝ ինչ Գողիաթ կամ սար կկանգնի իմ առջև վաղը,* ***ես չեմ լինի*** *այն մարդկանց պես, ովքեր գայթակղեցնում են Քեզ, շրջան են գծում Քո շուրջը կամ արգելքներ են դնում Քո առջև՝ ասելով. «Ո՛չ, մենք թույլ չե՛նք տա, որ մոտենաս մեզ»: Տե՛ր,* ***ես հեռացնում եմ բոլոր սահմանները,*** *և շնորհակա՛լ եմ, որ տալիս ես ինձ* ***բացարձակ ազատություն*** *Քեզանում:* ***Այսօր նոր օր է, և ես ուրա՛խ եմ դրա համար,*** *Հիսուսի անունով:* ***Ամե՛ն***»:



# ՌԱՍԵԼ ԵՎ ԲԱՐԲԱՐԱ ՊԼԻԼԱՐ

Հովիվ Ռասել Պլիլարն Աստծո Խոսքի հոյակապ ուսուցիչ է: Ռասելի ուղերձները՝ ուղղված իր տեղական եկեղեցուն և ամբողջ աշխարհին, բերում են բարենորոգում, հույս և վերականգնում Քրիստոսի մարմնին, և փոխում են այն մարդկանց կյանքերը, ում նա ծառայում է:

Հովիվ Ռասելը ցանկանում է, որ մարդկանց կյանքերը փոխվեն: Այդ ցանկությունը դրդել է նրան ավելի հեռուն գնալ իր տեղեկան եկեղեցական համայնքից՝ դեպի ազգերը, որտեղ Աստված դռներ է բացել, որոնք ոչ մի մարդ չի կարող փակել: Նա ծառայում է մի շարք երկրներում, որոնց թվում են Ավստրալիան, Չինաստանը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Նոր Զելանդիան, Ռուսաստանը և մի շարք երկրներ Եվրոպայում և Սկանդինավիայում:

*Հովիվ Ռասը սովորեցրեց ինձ հեռացնել այն սահմանափակումները, որոնցով ես թույլ չէի տալիս Աստծուն գործել իմ կյանքում: Իմ նոր սպասման մակարդակն աշխատանքային առաջխաղացում տվեց ինձ: Վերջերս ես աշխատանքի ընդունվեցի որպես տնօրեն մի խոշոր հեռահաղորդակցական ընկերությունում:* – Լ.Կ.

Բարբարա Պլիլարն ամուսնու հետ հովվական ծառայության մեջ է Կալիֆոռնիա նահանգի Սան Դիեգո քաղաքի «Ցանք և Հունձք» եկեղեցում: Հովիվ Բարբարան կրակով լցված է եղել Տիրոջ համար սկսած 1979 թվականից, երբ Աստծո բժշկարար զորությունը հպվեց նրան: Նա ուժգին հավատք ունեցող կին է, ով հրաժարվում է փոխզիջման ենթարկել Աստծո Խոսքի ճշմարտությունը: Բարբարայի նպատակն է՝ Աստծո Խոսքի ճշմարտությամբ հասնել իր տեղական եկեղեցուն և ազգերին:

Բարբարան հայտնի է որպես Աստծո Խոսքի ազդեցիկ ծառայող: Նրա խիզախ ծառայության միջոցով շատերը ազատագրվել են կապանքներից, ընկճվածությունից, աղքատությունից, հիվանդությունից և ամեն տեսակի դիվային ազդեցությունից: Նրա քարոզները քանդում են հոգևոր ամրությունները և մարդկային ավանդույթները, որոնք անարդյունավետ են դարձնում Աստծո Խոսքը:

Բարբարան հաճախ է ծառայում կանանց համաժողովներում թե՛ ԱՄՆ-ում, թե՛ աշխարհի տարբեր երկրներում: Նա և ամուսինը քարոզել են մի քանի խոշոր ավետարանչական հավաքույթների ընթացքում: Նրանք ծառայում են մի շարք երկրներում, որոնց թվում են Ավստրալիան, Չինաստանը, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Նոր Զելանդիան, Ռուսաստանը և մի շարք երկրներ Եվրոպայում և Սկանդինավիայում:

## ՌԱՍԵԼԻՆ ԿԱՄ ԲԱՐԲԱՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՀՐԱՎԵՐ ՈՒՂՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Seedtime and Harvest Ministries
P.O. Box 270635, San Diego, CA 92198-2635
Հեռախոս՝ (858) 576-1622 ● Ֆաքս՝ (858) 576-7389
Բարբարայի էլ. հասցեն. bplilar@seedtime.org
Ռասելի էլ. հասցեն. rplilar@seedtime.org

*Ես մեծ ուժ ստացա և խրախուսվեցի՝ կարդալով հովիվ Բարբարայի «Դուրս գալ փոսից» գիրքը: Նրա վկայությունն այն մասին, որ Աստված բժշկեց նրան՝ երբ նա մերձիմահ էր, օգնեց ինձ նորովի հավատալ իմ աուտիզմով տառապող որդու համար:*

– Կ.Լ.

# ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԵՎ ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ռասել և Բարբարա Պլիլարները տեսիլք ունեն ո՛չ միայն Սան Դիեգո քաղաքի իրենց տեղական եկեղեցու համար. նրանք նույնպես ծառայում են այլ երկրներում: Վերջերս, մի շարք այլ ծառայողների հետ, նրանք հինգ օր շարունակ քարոզում էին Ինդոնեզիայում՝ ավետարանչական հավաքույթներին: Ցերեկային հավաքույթների ընթացքում ավելի քան 4.000 մասնակիցների, հովիվների և առաջնորդների սովորեցնում էին Աստծո Խոսքը: Նրանք շարունակական հիմունքներով աջակցում և սովորեցնում են Աստծո Խոսքը Մեքսիկայի Բախա նահանգի մի քանի քաղաքներում: Նրանք ծառայել են մի քանի եվրոպական և սկանդինավյան երկրներում, ինչպես նաև՝ Ավստրալիայում, Չինաստանում, Հնդկաստանում և Նոր Զելանդիայում:





*«Սեր» նախագիծը՝ Գոհության և Սուրբ ծննդյան տոների ժամանակ, Սան Դիեգոյում կերակրում է ավելի քան 1.000 մարդու:*



ՌԱՍԵԼԻՆ ԿԱՄ ԲԱՐԲԱՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՀՐԱՎԵՐ ՈՒՂՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Seedtime and Harvest Ministries
P.O. Box 270635, San Diego, CA 92198-2635
Հեռախոս՝ (858) 576-1622 ● Ֆաքս՝ (858) 576-7389
Բարբարայի էլ. հասցեն. bplilar@seedtime.org
Ռասելի էլ. հասցեն. rplilar@seedtime.org

# «ԹԱՐՄ ԿՐԱԿ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Թարմ կրակ» երաժշտական խումբը կանչված է հպվելու Աստծո ժողովրդին ազդեցիկ երաժշտությամբ: Այս խմբի նպատակն է՝ ազդարարել և հռչակել Հիսուսի անունը և հպվել մարդկանց՝ Աստծուն փառաբանելու միջոցով: «Թարմ կրակը» մշտապես ձգտում է նոր և խանդավառող երգեր ունենալ՝ Աստծո ժողովրդին ոգեշնչելու և Աստծուն օրհնելու համար:



## ԽՄԲԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

### ԼՈՒՍԱՎՈՐԵԼ

Կրթել երաժշտական ծառայության մեջ կանչված մարդկանց՝ կառուցելով նրանց մեջ հոգևոր հիմք՝ համաձայն Աստծո Խոսքի:

### ՑՈՒՑԱԴՐԵԼ

Ցույց տալ, թե որքան կարևոր է երաժշտությունն Աստծո թագավորության մեջ:

### ՓՈԽԱՆՑԵԼ

Հոգևոր ներդրում ունենալ ուսուցման, քարոզման և օրինակ լինելու միջոցով:

Եթե ցանկանում եք հրավիրել «Թարմ կրակ» փառաբանության խմբին՝ ծառայելու ձեր եկեղեցում կամ կազմակերպությունում, զանգահարե՛ք (858) 576-1622 հեռախոսահամարով:

# ՈՒՂԱՐԿԵ՛Ք ՁԵՐ ԱՂՈԹՔԻ ԽՆԴՐԱՆՔՆԵՐԸ

Աստվածաշունչը պնդում է Մատթեոսի 18.18,19-ում, որ եթե երկու մարդ համաձայնեն Հիսուսի անունով, իրենց աղոթքը լսված կլինի:

ԱՆՈՒՆ ______________________________________________

ՀԱՍՑԵ ______________________________________________

ՔԱՂԱՔ __________ՆԱՀԱՆԳ __________ՓՈՍՏԱՅԻՆ ԿՈԴ_____

ՀԵՌԱԽՈՍ ( _________ ) ________________________________

ԷԼ. ՀԱՍՑԵ ___________________________________________

Ուղարկե՛ք ինձ ավելի շատ տեղեկություն.

☐ «Ցանք և հունձք» եկեղեցի
☐ «Թարմ կրակ» երաժշտական ծառայություն
☐ «Կերակրել մարդկանց Սան Դիեգոյում» նախագիծ
☐ «Ճշմարտության եղջյուր» լրաթերթ
☐ «Ցանք և հունձք» միսիոներական ծառայություն

ԿՏՐԵ՛Ք ԵՎ ՈՒՂԱՐԿԵ՛Ք.
Seedtime and Harvest Ministries
P.O. Box 270635,
San Diego, CA 92198-2635

# **ԱՂՈԹՔԻ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ** (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

ԻՆՉՆ Է ԵՍ ՊԱՀՈՒՄ ՁԵԶ

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԳՈՐԾՈՆԸ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

*Դուք կարանաք Այն, ինչ ՍՊԱՍՈՒՄ ԵՔ:*

ԴՈՒՔ ՎԱՅԵԼՈ՞ՒՄ ԵՔ այն ամենը, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար: Կարո՞ղ եք ասել, որ ձեր կյանքը հաջողակ է, և որ դուք փոխում եք այս աշխարհը: Այն, թե որքանով է Աստված գործում ձեր կյանքում, որոշվում է ձեր հավատքի կամ սպասման չափով: Եթե դուք ոչինչ չեք սպասում Նրանից, դուք ոչինչ էլ չեք ստանա: Եթե դուք ցանկանում եք վայելել ձեր Խոստման երկիրը, դուք պետք է դադարեք սպասում ունենալ Եգիպտոսից:

Իր նոր գրքում, որը կոչվում է «Սահմանափակող գործոնը ձեր կյանքում», հովիվ Ռասել Պլիլարը սովորեցնում է ձեզ լիարժեք և առողջ սպասում ունենալ: Շնորհիվ սպասման՝ ձեր հավատքը կսավառնի, և դուք կունենաք առատություն, պտղաբերություն և սերտ մտերմություն Աստծո հետ:



- ✔ ՍՏԱՑԵՔ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ ՁԵՐ ՀԱՎԱՏՔԻՑ
- ✔ ԸՆԴԼԱՅՆԵՔ ՁԵՐ ՏԵՍԻԼՔԸ
- ✔ ՕԳՏՎԵՔ ՁԵՐ ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՆԵՐՈՒԺԻՑ
- ✔ ԲԱՑԱՀԱՅՏԵՔ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՁԵԶԱՆՈՒՄ



ՌԱՍԵԼ ՊԼԻԼԱՐԸ հովիվ է «ՑԱՆՔ ԵՎ ՀՈՒՆՁՔ» եկեղեցում, որը գտնվում է ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Սան Դիեգո քաղաքում: Նա Աստծո Խոսքի հոյակապ ուսուցիչ է: Նա քարոզում է բարենորոգում, հույս և վերականգնում Քրիստոսի մարմնին՝ բարձրացնելով մարդկանց հավատքը: Նա ծառայում է մի շարք երկրներում, որոնց թվում են Ինդոնեզիան, Չինաստանը, Ռուսաստանը, Հնդկաստանը, Նոր Զելանդիան, Մեքսիկան, և մի շարք երկրներ Եվրոպայում և Սկանդինավիայում:

insight PUBLISHING GROUP

ՁԵՐ ԴՐԱԿԱՆ ՍՊԱՍՈՒՄԸ. ՀՈԳԵՎՈՐ ՈՒԺ, ՈՐՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է ԿԱՆԳՆԵՑՆԵԼ: